



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՇՄՆ «ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ շրջակա միջավայրի
վիճակի մասին

2024թ.

Կլիմա

Օդերևութաբանություն

Մթնոլորտային օդ

Մակերևութային ջրեր

Ստորերկրյա ջրեր

Անտառ

Հողային ծածկույթ

Թափոններ

Կենսաբազմազանություն

Բնապահպանական ինդիկատորներ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	11
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ.....	13
ԿԼԻՄԱ.....	16
Սեզոնային վերլուծություն.....	17
Երաշտային պայմաններ.....	23
Արեգակնային ճառագայթում.....	24
Քամի.....	25
Մթնոլորտային ճնշումը.....	26
ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	27
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ.....	53
Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա*.....	53
Երևան.....	65
Գյումրի.....	69
Վանաձոր.....	72
Ալավերդի.....	75
Հրազդան.....	78
Ծաղկաձոր.....	84
Կապան.....	88
Քաջարան.....	91
Չարենցավան.....	94
«Եվրոպայի մեծ տարածությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր».....	96
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ.....	100
Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա.....	100
Ջրի որակի նորմեր.....	101
Ջրօգտագործում.....	102
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	111
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	117
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	123
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	132
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	138
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	145
Ջրամբարներ.....	149
Արաքս գետ.....	150
Սևանա լիճ.....	151
Արարատյան արտեզյան ավազան.....	156
Հիդրոկենսաբանական մոնիթորինգ.....	159
Մակերևութային ջրերի որակի հետազոտական մոնիթորինգ.....	160
ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ.....	162
Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա.....	162
Հողի որակի նորմեր.....	163
Ուսումնասիրության տվյալների ամփոփում.....	163
ԹԱՓՈՆՆԵՐ.....	167
Թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրություն.....	167
Աշտարակ համայնք.....	167
Եղվարդ համայնք.....	168
Աբովյան համայնք.....	168
Գառնի համայնք.....	169
Մարտունի համայնք.....	170

Գավառ համայնք.....	170
Իջևան համայնք	171
Աչաջուր համայնք.....	171
Այգեհովիտ համայնք.....	172
Սպիտակ համայնք	172
Կազմակերպությունների գործունեությունից առաջացած թափոնների վիճակագրական տվյալների ուսումնասիրություն.....	173
ԱՆՏԱՌՆԵՐ	175
Անտառպահպանություն	175
Անտառային հրդեհներ	175
Անտառօգտագործում.....	176
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ.....	178
Նմուշների դասակարգում	179
Ուսումնասիրություններ և մոնիթորինգ	180
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՆԴԻԿՍՈՐՆԵՐ	184
C10 (Թթվածնի կենսաբանական պահանջի (ԹԿՊ) և ամոնիումի կոնցենտրացիաները գետերում).....	184
C11 (Կենսածին նյութեր գետերում).....	186
C2 (Քաղցրահամ ջրերի ջրառը).....	187
C4 (Տնային տնտեսությունների ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով)	188
C5 (Ջրամատակարարման համակարգը և բնակչության հասանելիությունը).....	189
ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ	191
Հավելված 1. Դիտակետերի և կայանների տեղադրության ցանկ.....	192
Հավելված 2. Ցուցանիշների ցանկ.....	208
Հավելված 4. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ	210

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Սեզոնային և տարեկան ջերմաստիճանների և տեղումների քանակ փոփոխությունը 1935-2024 թթ.....	20
Աղյուսակ 2. Երաշտային պայմանները հայաստանում 2024թ.....	24
Աղյուսակ 3. Հարաբերական խոնավություն.....	26
Աղյուսակ 4. Մթնոլորտային ճնշում.....	26
Աղյուսակ 5. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները 2024թ.	65
Աղյուսակ 6. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային տեղումներում ֆիզիկաքիմիական ցուցանիշների միջին ամսական և տարեկան կոնցենտրացիաները, 2024թ.	86
Աղյուսակ 7. Ամբերդի մթնոլորտային օդում փոշու մեջ որոշված ցուցանիշների միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները 2024թ.	97
Աղյուսակ 8. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշված ցուցանիշների միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները 2024թ.	98
Աղյուսակ 9. Ջրամբարների ջրալցվածությունը.....	149
Աղյուսակ 10. Սևանա լճի տարեկան հաշվեկշիռը, 2024թ.....	151
Աղյուսակ 11. Արարատյան արտեզյան ավազանում ջրի մակարդակների 2023-2024թթ. Միջին տարեկան արժեքները.....	157
Աղյուսակ 12. Հողային ծածկույթում մետաղների գերազանցումները սթեկ-ներից.....	164
Աղյուսակ 13. ՀՀ-ում առաջացած թափոնների քանակն ըստ վտանգավորության դասերի, 2023 թ.....	173
Աղյուսակ 14. «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից հայտնաբերված ապօրինի հատումների օջախների թիվը 2024 թվական.....	175

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Օդի միջին ամսական ջերմաստիճանը.....	16
Գծապատկեր 2. Ամսական մթնոլորտային տեղումների քանակը.....	16
Գծապատկեր 3. Առավելագույն, նվազագույն, միջին ամսական և.....	20
Գծապատկեր 4. Ամառային օրերի թիվը 2024թ.	21
Գծապատկեր 5. Սառնամանիքային օրերը 2024թ.	21
Գծապատկեր 6. Տարեկան առավելագույն ջերմաստիճանները 2024թ.	22
Գծապատկեր 7. Ամենաերկար ջերմային ալիքի տևողությունը 2024թ.	22
Գծապատկեր 8. Ջերմային ալիքով օրերի թիվը 2024թ.	23
Գծապատկեր 9. Մակերևույթի ուղիղ ճառագայթման արժեքները ըստ արբանյակային դիտարկումների հունվար և հունիս ամիսներին.....	25
Գծապատկեր 10. Քամու միջին տարեկան արագությունն ըստ բարձրության տարբեր գոտիների 2024թ.	25
Գծապատկեր 11. 2024 թվականին դիտված վտանգավոր օդերևութաբանական երևույթներ.....	52
Գծապատկեր 12. Եղանակի կանխատեսման արդարացվածությունը 2023-2024թթ.	52
Գծապատկեր 13. Անշարժ աղբյուրներից արտանետումների քանակն ըստ գործունեության ոլորտների և վնասակար նյութերի 2023թ.	56
Գծապատկեր 14. Շարժական աղբյուրների օգտագործած վառելիքի և արտանետումների քանակն ըստ վառելիքի տեսակի 2023թ.	56
Գծապատկեր 15. Փոշու պարունակությունը քաղաքներում 2023-2024թթ.	62
Գծապատկեր 16. Ծմբի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2023-2024թթ.	63
Գծապատկեր 17. Ազոտի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2023-2024 թթ.	63
Գծապատկեր 18. Մետաղների պարունակությունը քաղաքներում 2023-2024 թթ.	64
Գծապատկեր 19. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.	66
Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	66
Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	66
Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի օրական կոնցենտրացիան 2024թ.	67
Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.	67
Գծապատկեր 24. Երևան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	67
Գծապատկեր 25. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.	69
Գծապատկեր 26. Գյումրու մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.	69
Գծապատկեր 27. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.	70
Գծապատկեր 28. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.	70
Գծապատկեր 29. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	70
Գծապատկեր 30. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.	72

Գծապատկեր 31. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	72
Գծապատկեր 32. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	73
Գծապատկեր 33. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	73
Գծապատկեր 34. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.	75
Գծապատկեր 35. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի եկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	75
Գծապատկեր 36. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	76
Գծապատկեր 37. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2023-2024թթ.	76
Գծապատկեր 38. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	76
Գծապատկեր 39. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.	78
Գծապատկեր 40. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	78
Գծապատկեր 41. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.	79
Գծապատկեր 42. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	79
Գծապատկեր 43. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	79
Գծապատկեր 44. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.	81
Գծապատկեր 45. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	81
Գծապատկեր 46. արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	82
Գծապատկեր 47. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	82
Գծապատկեր 48. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	82
Գծապատկեր 49. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.	84
Գծապատկեր 50. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	84
Գծապատկեր 51. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	88
Գծապատկեր 52. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	88

Գծապատկեր 53. Կապան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	89
Գծապատկեր 54. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2023-2024 թթ.....	91
Գծապատկեր 55. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	91
Գծապատկեր 56. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	92
Գծապատկեր 57. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.....	94
Գծապատկեր 58. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.....	94
Գծապատկեր 59. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները.....	94
Գծապատկեր 60. Ամբերդի տարածաշրջանային կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	96
Գծապատկեր 61. Ամբերդ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.	96
Գծապատկեր 62. Զրօգտագործման ծավալներն ըստ նպատակների, 2023 թ.	102
Գծապատկեր 63. Զրօգտագործման ծավալներն ըստ ջրային ռեսուրսի տեսակի, 2023 թ.	102
Գծապատկեր 64. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը.....	105
Գծապատկեր 65. Ամոնիում իոնի կոնցենտրացիան կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում 2023-2024 թթ.	106
Գծապատկեր 66. Ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում 2023-2024 թթ.	106
Գծապատկեր 67. Ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի մակարդակների և ծախսերի փոփոխությունները 2023-2024 թթ.....	107
Գծապատկեր 68. Հանքայնացման բարձր մակարդակ ցուցաբերած բնաղբյուրներ 2024 թ.	107
Գծապատկեր 69. Նիտրատ իոնի բարձր պարունակությամբ բնաղբյուրներ 2024 թ.	108
Գծապատկեր 70. Սուլֆատ իոնի բարձր պարունակությամբ բնաղբյուրներ 2024 թ.	108
Գծապատկեր 71. 2024 թվականին դիտված ջրի տարեկան միջին էլքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին էլքերի հետ.....	112
Գծապատկեր 72. 2024 թվականի ջրի միջին ամսական էլքերը նորմաների համեմատ.....	112
Գծապատկեր 73. Փամբակ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.....	114
Գծապատկեր 74. Դեբեդ գետի ջրում մոլիբդենի կոնցենտրացիան 2023-2024 թթ.....	114
Գծապատկեր 75. Ախթալա գետի ջրում պղնձի կոնցենտրացիան 2023-2024 թթ.....	114
Գծապատկեր 76. Շնող գետի ջրում մոլիբդենի կոնցենտրացիան 2023-2024 թթ.....	115
Գծապատկեր 77. Շնող գետի ջրում պղնձի կոնցենտրացիան 2023-2024թթ.	115
Գծապատկեր 78. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսը 2023-2024թթ.....	116
Գծապատկեր 79. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.....	116
Գծապատկեր 80. Զրի տարեկան միջին էլքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին էլքերի հետ.....	118
Գծապատկեր 81. 2024 թվականի ջրի միջին ամսական էլքերը նորմաների համեմատ.....	118
Գծապատկեր 82. Ախուրյան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.....	119
Գծապատկեր 83. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսը 2023-2024թթ.....	120
Գծապատկեր 84. Ախուրյանի ՋԿՏ-ի չջատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.....	120

Գծապատկեր 85. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.	120
Գծապատկեր 86. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի ծախսը 2023-2024թթ. ...	121
Գծապատկեր 87. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների ջրի մակարդակը 2023-2024թթ. ...	121
Գծապատկեր 88. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.	121
Գծապատկեր 89. Ախուրյանի ՋԿՏ-ի ի բնաղբյուրներում հանքայնացումը, 2024թթ.	122
Գծապատկեր 90. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան, 2024թթ.	122
Գծապատկեր 91. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում սուլֆատ իոնի կոնցենտրացիան, 2024թթ.	122
Գծապատկեր 92. Ջրի տարեկան միջին էլքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին էլքերի հետ	124
Գծապատկեր 93. 2024 թվականի ջրի միջին ամսական էլքերը նորմաների համեմատ	124
Գծապատկեր 94. Քասախ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.	126
Գծապատկեր 95. Քասախ գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	126
Գծապատկեր 96. Հրազդան գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը 2023-2024թթ.	126
Գծապատկեր 97. Հրազդան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	127
Գծապատկեր 98. Հրազդան գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	127
Գծապատկեր 99. Գետառ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	127
Գծապատկեր 100. Գետառ գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	128
Գծապատկեր 101. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի ծախսը 2023-2024թթ.	128
Գծապատկեր 102. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.	129
Գծապատկեր 103. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.	129
Գծապատկեր 104. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի ծախսը 2023-2024թթ.	130
Գծապատկեր 105. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների ջրի մակարդակը 2023-2024թթ.	130
Գծապատկեր 106. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.	130
Գծապատկեր 107. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում հանքայնացման փոփոխությունը 2024թ.	131
Գծապատկեր 108. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.	131
Գծապատկեր 109. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում սուլֆատ իոնի կոնցենտրացիան 2024թ.	131
Գծապատկեր 110. Ջրի տարեկան միջին էլքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին էլքերի հետ	133
Գծապատկեր 111. 2024 թվականի ջրի միջին ամսական էլքերը նորմաների համեմատ	133
Գծապատկեր 112. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսը 2023-2024թթ.	135
Գծապատկեր 113. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակը 2023-2024թթ.	135
Գծապատկեր 114. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսը 2023-2024թթ.	136
Գծապատկեր 115. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.	136
Գծապատկեր 116. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում հանքայնացման փոփոխությունը 2024թ.	137
Գծապատկեր 117. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.	137
Գծապատկեր 118. Ջրի տարեկան միջին էլքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին էլքերի հետ	139
Գծապատկեր 119. 2024 թվականի ջրի միջին ամսական էլքերը նորմաների համեմատ	139

Գծապատկեր 120. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի ծախսը 2023-2024թթ.	141
Գծապատկեր 121. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակը 2023-2024թթ.	141
Գծապատկեր 122. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակը 2023-2024թթ.	141
Գծապատկեր 123. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսը 2023-2024թթ.	142
Գծապատկեր 124. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակը 2023-2024թթ.	142
Գծապատկեր 125. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.	142
Գծապատկեր 126. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում հանքայնացման փոփոխությունը 2024թ.	143
Գծապատկեր 127. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.	143
Գծապատկեր 128. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում քլորիդ իոնի կոնցենտրացիան 2024թ.	144
Գծապատկեր 129. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում սուլֆատ իոնի կոնցենտրացիան 2024թ.	144
Գծապատկեր 130. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի ծախսը 2023-2024թթ.	147
Գծապատկեր 131. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.	148
Գծապատկեր 132. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում հանքայնացման փոփոխությունը 2024թ.	148
Գծապատկեր 133. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.	148
Գծապատկեր 134. Ջրամբարներում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	149
Գծապատկեր 135. Ջրամբարներում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	150
Գծապատկեր 136. Սևանա լճի մակարդակի ամսական փոփոխությունները.....	152
Գծապատկեր 137. Սևանա լիճ թափվող գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	153
Գծապատկեր 138. Սևանա լիճ թափվող գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	153
Գծապատկեր 139. Մեծ սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	153
Գծապատկեր 140. Փոքր սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	154
Գծապատկեր 141. Մեծ սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	154
Գծապատկեր 142. Փոքր սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	155
Գծապատկեր 143. C10 ինդիկատոր-թկպ-ի փոփոխությունը հհ գետերում 2011-2023թթ.	185
Գծապատկեր 144. C10 ինդիկատոր-ամոնիում իոնի փոփոխությունը հհ գետերում 2011-2023թթ.	185
Գծապատկեր 145. C11 ինդիկատոր-նիտրատի և ֆոսֆատի փոփոխությունը հհ գետերում 2011-2023թթ.	186
Գծապատկեր 146. C2 ինդիկատոր-ջրի շահագործման ինդեքսը 2000-2023թթ.	187
Գծապատկեր 147. C2 ինդիկատոր-ջրառը մակերևութային և ստորերկրյա աղբյուրներից 2000-2023թթ.	188
Գծապատկեր 148. C4 ինդիկատոր - ջրօգտագործումը տնային տնտեսություններից մեկ շնչի հաշվով 2000-2023թթ.	188
Գծապատկեր 149. C5 ինդիկատոր- սպառողներին տրված ջրի ծավալը հայաստանի հանրապետությունում (2000-2023թթ.).....	190
Գծապատկեր 150. C5 ինդիկատոր-կենտրոնացված ջրամատակարարմանը միացած բնակչությունը (%) հայաստանի հանրապետությունում (2000-2023թթ.).....	190

Հապավումներ

<i>ՍԹԿ</i>	<i>սահմանային թույլատրելի կոնցենտրացիա</i>
<i>ՋԿՏ</i>	<i>ջրավազանային կառավարման տարածք</i>
<i>ԸԱԱ</i>	<i>ընդհանուր անօրգանական ազոտ</i>
<i>ԸԼԱ</i>	<i>ընդհանուր լուծված աղեր</i>
<i>ԿԶՆ</i>	<i>կախության չոր նյութեր</i>
<i>ԹԿՊ₅</i>	<i>թթվածնի կենսաքիմիական հնգօրյա պահանջարկ</i>
<i>ԹՔՊ</i>	<i>թթվածնի քիմիական պահանջարկ</i>
<i>ՑՕՄ</i>	<i>Ցնդոդ օրգանական միացություն</i>

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայհիդրոմետ» ՊՈԱԿ) կողմից պատրաստված շրջակա միջավայրի վիճակի մասին 2024 թվականի տարեկան տեղեկագրում ներկայացված են կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակական և քանակական, մակերևութային և ստորերկրյա ջրերի որակական և քանակական, անտառների մոնիթորինգի, աղբավայրերի հարակից տարածքների հողերի ուսումնասիրությունների, ինչպես նաև մթնոլորտային արտանետումների, ջրառի, ջրօգտագործման, թափոնների վերաբերյալ տեղեկատվությունները՝ վարչական վիճակագրական հաշվետվությունների համաձայն:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի աշխատանքային ծրագրերը կազմվում են՝ ղեկավարվելով հետևյալ հիմնական իրավական ակտերով.

❖ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշմամբ,

❖ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի ««Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024-2026 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագիրը և նախատեսվող միջազգային համագործակցության միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N826-Լ որոշմամբ,

❖ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N1656-Ն որոշմամբ,

❖ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատելու և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի N 121-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1584-Ն հրամանով:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 44 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում, որից 40-ում համաժամանակյա իրականացվում են ավտոմատ դիտարկումներ: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան: Մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի վերաբերյալ իրականացվում են շուրջօրյա դիտարկումներ: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների՝ 1961-1990թթ. տվյալների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա և 214 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող

նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օգոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի դիտակայանը (Ամբերդի դիտակայան): Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի քանակական մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ (այդ թվում 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային և 4 Սևանա լճի) Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա: 91 դիտակետում իրականացվում են ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների ամենօրյա դիտարկումներ: 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվում են ջրի ելքի չափումներ (տարեկան 25-35 անգամ): Հիդրոլոգիական դիտակետերից 9-ում տեղադրված են ջրի մակարդակի ավտոմատ մակարդակաչափեր (ռադարային կամ ինքնագրային), որոնցից անընդհատ ռեժիմով տեղեկատվությունը արբանյակային կամ GSM կապի միջոցով փոխանցվում է Հիդրոլոգիայի ծառայություն:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական շուրջ 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ), տարեկան 5-12 անգամ հաճախակա-նությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի 119 ստորերկրյա ջրաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 54 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

Հողերի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվում են ինչպես հղումային տարածքներում, որտեղ առկա են մարդածին նվազագույն ազդեցություններ, այնպես էլ հանքարդյունաբերական տարածքներում: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N01-Ն հրամանի համաձայն:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից կատարվող աշխատանքների որոշ արդյունքներ:

Կլիմա

2024 թվականին դիտված կլիմայական պայմանները ընդհանուր առմամբ բարձր էին կլիմայական նորմայից (1961-1990թթ): Տարեկան միջին ջերմաստիճանը՝ (7.2°C), նորմայից բարձր էր 1.7°C-ով, այն յոթերորդ տաք տարին էր, սկսած 1935 թվականից: Տարեկան գումարային տեղումների քանակը կազմել է 669.3 մմ կամ նորմայի 113%-ը, որը տասնվեցերորդ խոնավ տարին էր սկսած 1935 թվականից:

2024 թվականի ամենաբարձր ջերմաստիճանը՝ 39.5 °C, գրանցվել է Ուրցաձորում օգոստոսի 24-ին, իսկ ամենացածր ջերմաստիճանը՝ 31.5°C ,Աշոցքում հունվարի 31-ին - :

2024 թվականին համեմատաբար տաք էին հունվար, փետրվար և ապրիլ ամիսները՝ համապատասխանաբար 4.0°C , 3.8°C և 4.5°C-ով նորմայի նկատմամբ բարձր և խոնավ էին հունվար, մայիս և հուլիս ամիսները, երբ ամսական տեղումները կազմում էին նորմայի համապատասխանաբար 182%, 183.3% և 191%-ը:

2023-2024 թվականի ձմեռը երկրորդ ամենատաքն էր սկսած 1935 թվականից: Ձմռան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ -1.5°C, նորմայից բարձր էր 4.0°C-ով, իսկ տեղումների քանակը՝ 114 մմ, նորմայի սահմաններում:

2024 թվականի գարունը դասվեց «տաք և խոնավ» գարունների շարքում, այն յոթերորդ ամենատաք և ամենախոնավն էր սկսած 1935 թվականից: Գարնան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 6.4°C, նորմայից բարձր էր 2.0 °C-ով, իսկ տեղումների քանակը կազմել է 268.2 մմ, որը նորմայի 127.1 %-ն է:

Կլիմայի փոփոխության գնահատականները ցույց են տալիս, որ տարեկան միջին ջերմաստիճանը Հայաստանում բարձրացել է 1.7°C-ով 1935-2024թթ. ժամանակահատվածում, իսկ տեղումները նվազել են մոտ 19 %-ով:

Մթնոլորտային օդի աղտոտվածություն

Փոշով աղտոտվածության գերազանցումները 2024 թվականին հիմնականում դիտվել են՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ քաղաքներում:

2024 թվականին իրականացված դիտարկումների համաձայն ՀՀ բնակավայրերում փոշու օրական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է. Երևանում՝ դիտարկումների 29%, Գյումրիում՝ 32%, Վանաձորում՝ 27%, Ալավերդիում՝ 31%, Հրազդանում՝ 23%, Արարատում՝ 34%-ում:

ՄԹԿ-ից բոլոր գերազանցումները գտնվել են մինչև 19 անգամ տիրույթում, ինչը համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 16-ի N1186-Ն որոշման համապատասխանում է աղտոտվածության անբարենպաստ մակարդակին:

Մակերևութային ջրեր

2024 թվականի ընթացքում գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը Հյուսիսային ՋԿՏ-ում կազմել են նորմայի սահմաններում կամ նորմայից բարձր և կազմել են նորմաների 95-130%-ը, Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում եղել են նորմայի սահմաններում, իսկ որոշներում նորմայից բավական ցածր, Հրազդանի ՋԿՏ-ում կազմել են բազմամյա միջին արժեքների 70-115%-ը, Սևանի ՋԿՏ-ում՝ մոտ են եղել բազմամյա միջին արժեքներին և կազմել են դրանց 85-125%-ը, Արարատյան ՋԿՏ-ում կազմել են նորմաների 67-130%-ի սահմաններում, Հարավային ՋԿՏ-ում կազմել են բազմամյա միջին արժեքների 78-145%-ը:

2024 թվականի ընթացքում գրեթե բոլոր գետավազաններում ջրի փաստացի դիտված տարեկան միջին ելքերը բարձր են եղել 2023 թվականի տարեկան միջին ելքերից: 2024

թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հայիիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից դիտարկվող 5 ջրամբարներում ջրի ծավալների գումարային մեծությունը կազմել է 395.09մլն.խոր.մ, որը 2023 թվականի նույն օրվա մեծության համեմատ 165.96մլն.խոր.մ-ով ավել է եղել: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դիտարկվող 5 ջրամբարների ջրալցվածությունները կազմել են իրենց ընդհանուր ծավալների 17-63 %-ը: Սևանա լճի ջրային հաշվեկշիռը տարեկան կտրվածքով դրական է եղել, և լճում կուտակված ջրի քանակը կազմել է 280.3մլն մ³, որն համարժեք է տարեկան կտրվածքով լճի մակարդակի 22 սմ-ով բարձրացմանը:

2024 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 35%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 23%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 31%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Մակերևութային ջրերի որակական մոնիթորինգի արդյունքների համաձայն գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «միջակ»-ից «վատ» որակի է (3-րդ դասից 5-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-րդ դասից 5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ, նիտրիտ իոններով և ընդհանուր ֆոսֆորով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Ախուրյան գետը՝ Ամասիա գյուղից, Գյումրի քաղաքից և Բագարան գյուղից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Վաղարշապատ քաղաքից հարավ, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Գետառ գետը՝ գետաբերանի հատված-ում, Ծաղկաձոր գետը՝ Ծաղկաձոր քաղաքից հետո, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից հետո հատվածում:

Հիդրոկենսաբանական մոնիթորինգն իրականացվել է 19 դիտակետում:

Մակերևութային ջրերի հետազոտական մոնիթորինգ իրականացվել է հետազայում հիմնական ցանկում ներառելու նպատակով:

Ստորերկրյա ջրեր

Ստորերկրյա ջրերի մակարդակի անընդհատ իջեցումները Արարատյան արտեզյան ավազանում փաստում են ստորերկրյա ջրային ռեսուրսների սպառման մասին: 2024 թվականի համեմատ 2023 թվականին Արարատյան, Հրազդան, Ախուրյան և Հարավային ԶԿՏ-ների բնաղբյուրներում նկատվում են ծախսերի, մակարդակների իջեցումներ: Սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթացն աճում է ջրօգտագործման պահանջարկը, որն էլ կարող է նպաստել ջրային ռեսուրսների աղտոտման նոր օջախների առաջացմանը:

Հողային ծածկույթ

2024 թվականին հողերի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն, հիմնականում բոլոր ուսումնասիրված տարածքներում գերազանցում են պղնձի, ցինկի, քրոմի, նիկելի, կապարի և արսենի համար ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N01-Ն հրամանով սահմանված թույլատրելի կոնցենտրացիաները: Մնացած մետաղների համար չկան սահմանված թույլատրելի կոնցենտրացիաներ: Գերազանցումների բարձր արժեքներ հիմնականում դիտվել են Վայոց ձորի մարզի Զանգակատուն (Սովետաշենի), Վերնաշենի և Գլաձորի

տեղամասերում, Կոտայքի մարզի Հանքավանի պղնձամոլիբդենային հանքավայրում:

Անտառներ

Անտառապատման աշխատանքները նախատեսելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ծառատեսակների ընտրությունը, մասնավորապես գլխավոր ծառատեսակ սոճին փոխարինել լայնատերև ծառատեսակով (կաղնի, հացենի, թխկի), քանի որ դաշտային դիտարկումները վկայում են սոճենու ցածր կաչողունակության մասին, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ անտառային տարածքներում առկա են հիվանդություններով և վնասատուներով վարակված սուճուտներ, որոնց արդյունքում տեղի է ունենում համատարած չորացումներ: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել տնկիների, մասնավորապես սոճու, որակի և տեղափոխման գործընթացին, որի համար առաջարկվում է անտառտնտեսություններում ստեղծել տնկարանային տնտեսություններ, ինչը մեծ կաչողունակություն կապահովվի և էապես կբարելավի անտառապատման աշխատանքները:


Առաջարկվում է առավել մեծ ուշադրություն դարձնել բնական վերաճի օժանդակման, ինչպես նաև երիտասարդ բնական ծառուտներում խնամքի հատումների՝ (լուսավորման և մաքրման) աշխատանքների իրականացմանը, ինչը կնպաստի ծառուտի դիմադրողականության բարձրացմանը անտառային հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի գործընթացում, ինչպես նաև կնպաստի անտառի արտադրողականության բարձրացմանը:

Մեկից ավելի հատվածներ ընդգրկող հատատեղերի հաշվեգնահատման ցուցակներում առաջարկվում է ավելացնել հատման համար նախատեսված ծառերի համարակալումները՝ աճման կարգով: Այս ընթացակարգը առավել կհեշտացնի և հատատեղի շահագործման ընթացքը և հատատեղում իրականացվող ուսումնասիրությունների գործընթացը:


Հատատեղերում ծառերի արմատավզիկի մոտ իրականացվող համարակալումներն առաջարկվում կատարել ոչ թե ներկով, այլ օգտագործել թեթև թիթեյա (օրինակ՝ ալյումին) կտորներ, որոնք տաշված արմատավզիկին կարող են ամրացվել հատուկ պատրաստված երեք թվանոց մուրճի օգնությամբ: Այս ընթացակարգի կիրառման դեպքում համարակալումները առավել ընթեռնելի կլինեն և տեսանելի կմնան առավել երկար ժամանակ:

ԿԼԻՄԱ

2024 թվականին Հայաստանում դիտված տարեկան միջին ջերմաստիճանը՝ 7.2 °C, նորմայից (1961-1990 թթ.) բարձր էր 1.7 °C-ով, այն յոթերորդ տաք տարին էր, սկսած 1935 թվականից: Տարեկան տեղումների քանակը՝ 669.3 մմ , կազմել է նորմայի (592 մմ) 113 %-ը: 2024 թվականի ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Ուրցաձորում օգոստոսի 24-ին՝ 39.5 °C, իսկ ամենացածր ջերմաստիճանը դիտվել է Աշոցքում հունվարի 31-ին՝ -31.5 °C:




Գծապատկեր 1. Օդի միջին ամսական ջերմաստիճանը, °C




Գծապատկեր 2. Ամսական մթնոլորտային տեղումների քանակը, մմ

Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից



Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից



Սեզոնային վերլուծություն

2023-2024 թվականի ձմեռը երկրորդ ամենատաքն էր սկսած 1935 թվականից: Ձմռան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ -1.5°C , նորմայից բարձր էր 4.0°C -ով, իսկ տեղումների քանակը՝ 114 մմ, նորմայի սահմաններում էր:


Ձմռան երեք ամիսներին էլ օդի միջին ամսական ջերմաստիճանները բարձր էին նորմայից $3.8-4.0^{\circ}\text{C}$ -ով: 2023 թվականի դեկտեմբերը երկրորդ ամենատաք դեկտեմբերն էր, ամենատաքը դիտվել է 2010 թվականին: 2024 թվականի հունվարը հինգերորդ տաք հունվարն էր 1966, 1963, 2010 և 1987 թվականներից հետո:

Ձմռան սեզոնին հատկապես տեղումնառատ էր հունվար ամիսը՝ մթնոլորտային տեղումները կազմել են նորմայի 182 %-ը, այն հինգերորդ խոնավ հունվարն էր 2010, 2016, 1978 և 2000 թվականներից հետո, իսկ փետրվարը չորային էր, երբ ամսական տեղումների գումարը կազմել է նորմայի 36 %-ը:

Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից



Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից



2024 թվականի գարունը դասվեց «տաք և խոնավ» գարունների շարքում, այն յոթերորդ ամենատաք և ամենախոնավն էր սկսած 1935 թվականից: Գարնան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 6.4°C , նորմայից բարձր էր 2.0°C -ով, իսկ տեղումների քանակը կազմել է 268.2 մմ, որը կազմում է նորմայի 127.1 %-ը:


2024 թվականի ապրիլը ամենատաքն էր սկսած 1935 թվականից: Միջին ամսական ջերմաստիճանը ապրիլին կազմել է 9.4°C , որը նորմայից բարձր էր 4.5°C -ով: Միջին ամսական ջերմաստիճանը նորմայից բարձր է եղել նաև մարտ ամսին, իսկ մայիսին՝ օդի ջերմաստիճանը մոտ էր նորմային:

Մարտ ամսին դիտվեց տեղումների ամսական քանակի նորմայի 157 %-ը: Ապրիլը ամենաչորն էր դիտարկումների ողջ պատմության մեջ, երբ ամսական տեղումների քանակը կազմել էր նորմայի 33 %-ը, որին հաջորդեց տեղումնառատ մայիսը, որը երկրորդ ամենախոնավն էր սկսած 1935 թվականից: Ամսական տեղումների քանակը մայիսին կազմեց նորմայի 180 %-ը:

Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից





Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից





2024 թվականի ամառը դասվեց «տաք» ամառների շարքում: Ամռան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 17.4°C , նորմայից բարձր էր 1.6°C -ով, իսկ տեղումների քանակը կազմել է 161.1 մմ, որը մոտ էր նորմային և կազմում է նորմայի 108.9 %-ը:

Ամռան երեք ամիսներին էլ օդի միջին ամսական ջերմաստիճանները բարձր էին նորմայի համեմատ: Հատկապես տաք էր հունիս ամիսը, այն յոթերորդ տաք հունիսն էր սկսած 1935 թվականից: Տեղումների առումով առանձնացավ հուլիս ամիսը. ամսական տեղումները կազմել են նորմայի 191.8 %-ը: Այն 7-րդ ամենախոնավ հուլիսն էր սկսած 1935 թվականից և ամենախոնավը 1965 թվականից հետո: Հունիս և օգոստոս ամիսները չորային էին՝ տեղումների ամսական քանակը կազմել էր նորմայի 60-80 %-ը :



2024 թվականի աշնանը դիտված միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 7.5°C , նորմայից բարձր էր 0.3°C -ով: Հատկապես տաք են եղել սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները, երբ օդի միջին ամսական ջերմաստիճանը բարձր էր նորմայից համապատասխանաբար 1.7°C և 0.7°C -ով, իսկ նոյեմբերի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում:

Սեզոնային գումարային տեղումների քանակը կազմել է 144.3 մմ կամ նորմայի 121.2% -ը: Հատկապես տեղումնառատ էին սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները. տեղումները կազմել են ամսական նորմայի համապատասխանաբար 170% և 132% -ը, իսկ նոյեմբերին տեղումները նորմայից ցածր են եղել՝ կազմելով նորմայի 74% -ը:




Աղյուսակ 1. Մեզոնային և տարեկան ջերմաստիճանների և տեղումների քանակ փոփոխությունը 1935-2024 թթ.

Մեզոն/Տարի	Ջերմաստիճան (°C)	Տեղումներ (%)
Չմեռ	+1.7	-4.1
Գարուն	+2.0	-12.1
Ամառ	+2.1	-30.2
Սեզոն	+1.1	-29.1
Տարի	+1.7	-18.9

Երևան

Երևանում 2024 թվականին միջին տարեկան ջերմաստիճանը կազմել է 14.2°C, որը բարձր էր նորմայից 2.4 °C-ով: Տարեկան տեղումների քանակը կազմել է 450.2 մմ, որը տարեկան նորմայի 156 % է: 2024 թվականին դիտված առավելագույն ջերմաստիճանը կազմել է 38.5 °C, որը դիտվել է օգոստոսի 23-24-ը: Ամենատաք ամիսը եղել է օգոստոսը, երբ օդի միջին ամսական ջերմաստիճանը կազմել է 27.6 °C: 2024 թվականին դիտված նվազագույն ջերմաստիճանը կազմել է -9.8 °C, որը դիտվել է հունվարի 28-ին:

Ապրիլի 29-30-ը դիտված օրական առավելագույն ջերմաստիճանները գերազանցեցին տվյալ օրերի երբևիցե դիտված առավելագույն ջերմաստիճանները և հասան մինչև 31.5 °C-ի:




Գծապատկեր 3. Առավելագույն, նվազագույն, միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները Երևանում 2024թ.

Կլիմայական ինդեքսներ և էքստրեմումներ

Ամառային օրեր (SU25)


Ամառային օրերի գումարային թիվը (երբ օրական առավելագույն ջերմաստիճանը 25 °C -ից բարձր է) 2024 թվականին նորմայից բարձր է եղել միջինում՝ 2 օրով: Ամառային օրերի թվի շեղումը նորմայից Արմավիրում կազմել է 15 օր, իսկ Գյումրիում, Վանաձորում և Անանուն լեռնանցքում՝ 13-14 օր: Մինևոյն ժամանակ, ամառային օրերի գումարային թիվը նորմայից պակաս էր Աշոցքում՝ 22 օրով, Ամբերդում և Հրազդանում՝ 8 օրով:



Գծապատկեր 4. Ամառային օրերի թիվը 2024թ.

Սառնամանիքային օրեր (ID)


2024 թվականին սառնամանիքային օրերի թիվը (երբ առավելագույն ջերմաստիճանը ցածր է 0°C-ից) գրեթե բոլոր կայաններում եղել է նորմայից պակաս միջինը 20 օրով: Սառնամանիքային օրերի թիվը զգալիորեն ցածր է եղել նորմայից Շորժայում՝ 34 օրով, Որոտանի լեռնանցքում՝ 33 օրով, Սեյրնովկայում՝ 30 օրով:



Գծապատկեր 5. Սառնամանիքային օրերը 2024թ.

Առավելագույն ջերմաստիճանները (TXx)


2024 թվականին դիտված առավելագույն ջերմաստիճանները (TXx) բարձր են եղել նորմայից միջինում 2.0 °C-ով, իսկ առավել զգալի շեղումները նորմայից դիտվել են Որոտանի լեռնանցքում՝ 3.4 °C-ով, Շորժայում՝ 3.3 °C-ով, Արմավիրում՝ 3.0 °C-ով:




Գծապատկեր 6. Տարեկան առավելագույն ջերմաստիճանները 2024թ.

Ջերմային ալիքներ

Ջերմային ալիքները գնահատվել են մայիս-սեպտեմբեր ժամանակահատվածի համար: Ըստ առավելագույն ջերմաստիճանի դիտարկումների տվյալների 2024 թվականին ջերմային ալիք դիտվել է հունիսի 16-21-ը, օգոստոսի 21-24-ը՝ կայանների մեծ մասում, և սեպտեմբերի 2-4-ը և 11-13-ը՝ որոշ կայաններում: Ամենաերկար ջերմային ալիքները դիտվել են Արմավիրում և Արտաշատում՝ 8-ից 10 օր տևողությամբ (Գծապատկեր 7): Ջերմային ալիքով օրերի թիվը Հայաստանում հիմնականում պակաս է եղել նորմայից՝ միջինը 3-4 օրով, սակայն Արմավիրում, Արտաշատում և Արարատում գերազանցել է նորման՝ կազմելով 16-21 օր (Գծապատկեր 8):



Գծապատկեր 7. Ամենաերկար ջերմային ալիքի տևողությունը 2024թ.



Գծապատկեր 8. Ջերմային ակադեմիայի օրերի թիվը 2024թ.

Ցուրտ ակադեմիայի

Ցուրտ ակադեմիայի է համարվում այն դեպքը, երբ դիտված օրական նվազագույն ջերմաստիճանները առնվազն 3 օր անընդմեջ ցածր են եղել համապատասխան օրերի նվազագույն ջերմաստիճանների 10 % ապահովվածության արժեքներից: Ցուրտ ակադեմիայի հաշվարկվել է նույնաբեր-մարտ ժամանակահատվածի համար: Ցուրտ ակադեմիայի գրանցվել է հունվարի 30-ից փետրվարի 2-ը՝ Որոտանի լեռնանցքում, Ապարանում, Աշոցքում և Գորիսում: Ցուրտ ակադեմիայի օրերի թիվը զգալիորեն պակաս է եղել նորմայից:

Երաշտային պայմաններ

2024 թվականի ապրիլ-հոկտեմբեր ամիսներին օդերևութաբանական երաշտի ինտենսիվության մոնիթորինգ իրականացվել է 38 կայանների տվյալների հիման վրա, որոնք բնութագրական են ամբողջ տարածքի համար: Երաշտային պայմանների գնահատումը իրականացվել է 5 կարգերով՝ 1-շատ ուժեղ, 2-ուժեղ, 3-միջին, 4-թույլ և 5-երաշտի բացակայություն, համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի 925-Ն որոշման մեթոդաբանության:

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, շրջանների զգալի մասում երաշտային պայմաններ ձևավորվել օգոստոսի երրորդ տասնօրյակին: Արարատյան դաշտի և Սյունիքի հովտային շրջաններում օդերևութաբանական երաշտ դիտվել է ավելի վաղ՝ հունիսի վերջին տասնօրյակից, որը պայմանավորված է այս շրջանների չոր և տաք կլիմայական պայմաններով:

Աղյուսակ 2. Երաշտային պայմանները Հայաստանում 2024թ.

Կայան	Ապրիլ			Մայիս			Հունիս			Հուլիս			Օգոստոս			Սեպտեմբեր			Հոկտեմբեր		
	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III
Գյումրի	5	5	5	5	5	5	5	5	3	5	5	5	5	3	1	2	5	5	5	5	5
Ամասիա	5	5	3	5	5	5	5	5	3	5	5	5	5	3	2	3	4	5	5	5	5
Արթիկ	5	5	3	5	5	5	5	5	2	5	5	5	5	3	1	2	3	5	5	5	5
Աշոցք	5	5	5	5	5	5	5	5	4	5	5	5	5	5	3	5	5	5	5	5	5
Օձուն	5	5	3	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	2	2	4	3	5	5	5
Տաշիր	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	3	4	5	5	5	5	5
Վանաձոր	5	5	3	5	5	5	5	5	5	5	5	5	5	4	2	3	4	5	5	5	5
Ստեփանավան	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5
Բազրատաշեն	5	5	2	5	5	5	5	5	4	4	3	5	5	4	2	2	3	2	4	5	5
Իջևան	5	5	3	5	5	5	5	5	4	4	5	5	5	5	2	3	3	3	5	5	5
Դիլիջան	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	3	3	5	5	5	5	5
Սևան	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	2	3	5	5	5	5	5
Սեյրնուկա	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	3	3	5	5	5	5	5
Գավառ	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	2	3	5	5	5	5	5
Շորժա	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	4	3	3	5	5	5	5	5
Մարտունի	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	3	3	5	5	5	5	5
Ճամբարակ	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	3	4	5	5	5	5	5
Մասրիկ	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	1	1	5	5	5	5	5
Հրազդան	5	5	5	5	5	5	5	5	4	5	5	5	5	2	2	3	5	5	5	5	5
Եղվարդ	5	5	1	5	5	5	5	5	2	3	5	5	3	1	1	1	3	4	4	5	5
Ֆանտան	5	5	4	5	5	5	5	5	3	5	5	5	3	2	2	3	5	5	5	5	5
Թալին	5	5	4	5	5	5	5	4	3	5	5	4	2	1	1	1	2	3	3	5	5
Ապարան	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5
Աշտարակ	5	5	1	5	5	5	5	3	1	3	3	3	1	1	1	1	1	2	2	5	5
Ամբերդ	5	5	4	5	5	5	5	5	5	4	5	5	4	2	1	2	5	5	5	5	5
Ծաղկահովիտ	5	5	5	5	5	5	5	5	4	5	5	5	5	4	1	5	5	5	5	5	5
Արենի	5	5	3	5	5	5	5	2	2	2	2	2	1	2	1	1	2	2	3	5	5
Ջերմուկ	5	5	5	5	5	5	5	5	3	5	5	5	5	5	2	2	5	5	5	5	5
Միսիան	5	5	5	5	5	5	5	5	5	5	4	2	2	2	2	2	3	3	4	5	5
Գորիս	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	4	2	5	5	5	5	5
Կապան	5	5	5	5	5	5	5	5	5	5	3	4	4	5	1	1	1	3	3	4	5
Մեղրի	5	5	4	4	5	5	5	3	3	2	2	1	1	1	1	1	1	2	2	2	1
Արարատ	5	5	3	4	4	5	4	2	2	3	3	3	1	1	1	1	2	2	2	3	5
Ուրցաձոր	5	5	2	5	5	5	5	4	3	4	4	4	1	1	1	1	2	2	2	5	5
Անանուն լ/ջր	5	5	5	5	5	5	5	4	3	5	5	5	3	3	2	2	3	2	3	5	5
Արտաշատ	5	5	2	3	4	5	4	2	2	2	3	2	1	1	1	1	1	1	1	4	5
Արմավիր	5	5	2	4	5	5	4	2	1	1	2	3	2	2	1	1	2	2	2	5	5
Մերձավան	5	5	3	5	5	5	5	3	1	3	3	4	2	1	1	2	2	2	2	5	5


Արեգակնային ճառագայթում

Արեգակնային ճառագայթման վերլուծություններն իրականացվել են CM SAF գլոբալ կլիմայական մոնիթորինգի արբանյակային դիտարկումների տվյալների հիման վրա:

Գծապատկեր 9-ում ներկայացված են 2024 թվականի արեգակնային ուղիղ ճառագայթման նվազագույն (հունվար) և առավելագույն (հունիս) արժեքներով ամսիների քարտեզները:


Հունվար ամսին առավելագույն արժեքներ գրանցվել են Արարատյան դաշտում և հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններում (35-40 Վտ/մ^2), Շիրակի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում գրանցվել է արեգակնային ճառագայթման ցածր արժեքներ:

Հունիս ամսվա քարտեզի վերլուծությունը ցույց է տալիս, որ արեգակի ճառագայթման առավելագույն արժեքներ գրանցվել են Արարատյան դաշտում և Շիրակում (մինչև 260Վտ/մ^2), դեպի հյուսիս և հյուսիս արևելք ճառագայթման արժեքները աստիճանաբար նվազում են հասնելով մինչև $100\text{-}110\text{ Վտ/մ}^2$:



Քամի

Հայաստանի հովտային շրջաններում քամու միջին տարեկան արագությունը կազմել է 1.5 մ/վ , իսկ $800\text{-}1000\text{ մ}$ բարձրություններում՝ 1 մ/վ : Բարձրադիր շրջաններում քամու արագությունը աճել է և հասել մինչև 4.0 մ/վ 2500 մ -ից ավել բարձրություններում՝ Գծապատկեր 10:



Գծապատկեր 10. Քամու միջին տարեկան արագությունն ըստ բարձրության տարբեր գոտիների 2024թ.

Հարաբերական խոնավությունը

2024 թվականին օդի հարաբերական խոնավության միջին տարեկան արժեքները եղել են նորմային մոտ Հայաստանի ցածրադիր շրջաններում, այնինչ սկսած 1000-1500 մ բարձրություններից հարաբերական խոնավությունը եղել է նորմայից փոքր-ինչ ավել՝ Աղյուսակ 3:

Աղյուսակ 3. Հարաբերական խոնավություն (%)

<i>Բարձրություն, մ</i>	<i>2024 թ.</i>	<i>նորմա</i>
<i>500-800</i>	<i>70.0</i>	<i>69</i>
<i>800-1000</i>	<i>60.6</i>	<i>61</i>
<i>1000-1500</i>	<i>69.3</i>	<i>67</i>
<i>1500-2000</i>	<i>75.5</i>	<i>70</i>
<i>2000-2500</i>	<i>74.8</i>	<i>71</i>

Մթնոլորտային ճնշումը

2024 թվականին մթնոլորտային ճնշումը (հՊա) հիմնականում եղել է նորմային մոտ կամ նորմայից փոքր-ինչ բարձր (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Մթնոլորտային ճնշումը (հՊա)

<i>Բարձրություն, մ</i>	<i>2024 թ.</i>	<i>նորմա</i>
<i>500-800</i>	<i>946.2</i>	<i>946.2</i>
<i>800-1000</i>	<i>917.1</i>	<i>917.0</i>
<i>1000-1500</i>	<i>879.2</i>	<i>879.0</i>
<i>1500-2000</i>	<i>820.1</i>	<i>819.4</i>
<i>2000-2500</i>	<i>775.3</i>	<i>774.4</i>

ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին անումալ եղանակային պայմաններով աչքի են ընկել հունվար, փետրվար, մայիս և հուլիս ամիսները: Ստորև ներկայացված են տվյալ ամիսների սինոպտիկական վերլուծությունները:


ՀՈՆՎԱՐ

Հունվարին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 3-5, Լոռիում, Տավուշում, Սյունիքում՝ բարձր նորմայից 1-3 աստիճանով: Տեղումների ամսական քանակը կազմել է նորմայի 150-180%-ը, Լոռիում, Տավուշում, Սյունիքում մինչև 200-250%-ը:

Մթնոլորտի շրջանառությունը հունվարին


Հունվարի 1-3-ին, 6-ի ցերեկը, 7-8-ին, 16-ին, 19-20-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Հունվարի 4-ին, 9-ին, 11-ին, 14-ին և 18-ին առանձին շրջաններում, 5-ին, 6-ի գիշերը, 10-ին, 12-ին, 13-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, որոնք լեռնային և նախալեռնային շրջաններում ուղեկցվել են ձյան, իսկ հովտային գոտում թաց ձյան և ձնախառն անձրևի տեսքով: Հատկապես տեղումնառատ է եղել հունվարի 3-րդ տասնօրյակը, երբ պարբերաբար ցիկլոնի ներթափանցմամբ պայմանավորված դիտվել են տեղումներ, հիմնականում ձյան տեսքով:

Հունվարի 5-ի ցերեկը, 6-ի գիշերը եղանակային պայմանների վրա իր ազդեցությունն է ունեցել արևմուտքից մոտեցող ցիկլոնը: ՀՀ տարածքը գտնվում է նրա առաջնային մասում: Ցիկլոնի կենտրոնը գտնվում է Սև ծովի հյուսիսային շրջանների վրա, իսկ ցածր ճնշման լեզվակը տարածվում է դեպի Փոքր Ասիա, որի առանցքը անցնում է թերակղզու կենտրոնական շրջաններով: Ջերմային և քամիների դաշտի վերլուծությունը ցույց է տալիս, որ ցածր ճնշման լեզվակի առանցքի վրա առկա է ցուրտ մթնոլորտային ճակատ, որը տեղաշարժվում է դեպի արևելք, այսինքն ՀՀ տարածք: Մթնոլորտային ճակատի ներխուժումը շրջանների զգալի մասում առաջացրել է տեղումներ, լեռնային շրջաններում դիտվել է ձյան, առանձին վայրերում՝ բուք (Նկար 1):




Նկար 1. Մթնոլորտային ճակատը երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա

Արբանյակային լուսանկարի վրա երևում է ցուրտ ճակատի հետ կապված տեղումնաբեր ամպամածության ծածկը, որն ընդգրկել է հանրապետության տարածքը (Նկար 2):




Նկար 2. Ճակատի հետ կապված ամպամածության ծածկն արբանյակային լուսանկարի վրա

Հունվարի 12-ին Արևմտաեվրոպական անտիցիկլոնի առաջնային մասով անցնող սրված ցուրտ ճակատի ներխուժմամբ պայմանավորված շրջանների զգալի մասում դիվել են տեղումներ, առանձին վայրերում՝ ինտենսիվ: Լեռնային և նախալեռնային շրջաններում տեղացել է ձյուն, իսկ հովտային գոտում՝ թաց ձյուն և ձնախառն անձրև: Մթնոլորտի գետնամերձ շերտում ՀՀ տարածքը գտնվում է ՌԵՏ-ից դեպի Կասպից ծով տարածվող ցածր ճնշման լեզվակի թիկունքային և Սև ծով կողմից Արևմտաեվրոպական անտիցիկլոնի կատարի առաջնային մասում: Բարիկական դաշտերի նման դասավորվածությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում հյուսիսից եկող արկտիկական և հարավից եկող արևադարձային օդային հոսանքների կոնվերգենսիայի համար: Ջերմաստճանային տարբերությունը ճակատի առաջնային և թիկունքային հատվածում հասնում է 10-12 աստճանի (Նկար 3):



Նկար 3. Ցուրտ մթնոլորտային ճակատը երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա


Արբանյակային լուսանկարի վրա հստակ երևում է ցուրտ ճակատի հետ կապված տեղումնաբեր ամպամածության գոտին, որն ընդգրկել է ոչ միայն մեր հանրապետությունը, այլ նաև ողջ տարածաշրջանը (Նկար 4):



Նկար 4. Մթնոլորտային ցուրտ ճակատի հետ կապված տեղումնաբեր ամպամածության ծածկն արբանյակային լուսանկարի վրա


Հատկապես զգալի տեղումներով աչքի ընկավ հունվարի 3-րդ տասնօրյակը: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Կիպրոսի շրջաններից մեր տարածաշրջան պարբերաբար ներթափանցել է ցիկլոնային դաշտ, որն ապահովել է տեղումնառատ եղանակային պայմաններ: Տեղումնառաջացման գործում զգալի դեր են ունեցել Ղազախստանի տարածքում հաստատված անտիցիկլոնները, որոնք ապահովել են արկտիկական օդի ներթափանցում Կիպրոսյան ցիկլոնի հյուսիս-արևելյան ծայրամասեր: Տեղումները դիտվել են հիմնականում ձյան տեսքով, առանձին վայրերում բավականին ինտենսիվ, որն ուղեկցվել է բքով:

Հունվարի 22-ից մեր տարածաշրջան է ներթափանցել Կիպրոսյան ցիկլոն, որը պահպանվել է մինչև հունվարի 25-ի ցերեկային ժամեր (Նկար 5):




Նկար 5. Մթնոլորտային ճակատը երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա

Այդ օրերին FS500մբ մակերևույթի քարտեզի վրա բարձր լաժբինան ուղղված էր Կարայի ծովից դեպի Փոքր Ասիայի շրջաններ: Լաժբինայի նման դիրքադրությունը նույնպես մեծ դեր է խաղացել ցիկլոնոգենեզի և Կիպրոսյան ցիկլոնների դեպի ՀՀ տարածք տեղափոխման համար (Նկար 6):




Նկար 6. Բարձր լաժքինան FS500-ի մակերևույթի քարտեզի վրա

Հաջորդ Կիպրոսյան ցիկլոնը մեր տարածաշրջան է ներթափանցել հունվարի 27-ին: Այդ օրը շրջանների զգալի մասում դիտվել է ձյուն, լեռնային շրջաններում՝ բուք, առանձին վայրերում տեղումները եղել են բավականին ինտենսիվ:



Նկար 7. Կիպրոսյան ցիկլոնը երկրամերձ մակերևույթի քարտեզի վրա

Արբանյակային լուսանկարի վրա հստակ երևում է ցիկլոնի հետ կապված ամպամածության ծածկը, որը ծածկել է ողջ Հարավային Կովկասը (Նկար 8):



Նկար 8. Կիպրոսյան ցիկլոնի հետ կապված տեղումնաբեր ամպամածության ծածկն արբանյակային լուսանկարի վրա

ՓԵՏՏՐՎԱՐ


Օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 2-5 աստիճանով: Տեղումների ամսական քանակը կազմել է նորմայի ընդամենը 20-40%-ը:

Մթնոլորտի շրջանառությունը փետրվարին

Փետրվարի 1-3-ին, 7-ի ցերեկը, 8-10-ին, 11-14-ին, 27-29-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Փետրվարի 4-6-ին, 7-ի գիշերը, 16-20-ին, 21-22-ին, 24-26-ին առանձին շրջաններում, 15-ին և 23-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, լեռնային և նախալեռնային շրջաններում ձյան, իսկ հովտային գոտում անձրևի և ձնախառն անձրևի տեսքով: Փետրվարի 8-16-ին ցերեկային ժամերին դիտված առավելագույն ջերմաստիճանները հանրապետության մի շարք շրջաններում գերազանցել են երբևիցե դիտված պատմական արժեքները:


Փետրվարը հանրապետությունում աչքի ընկավ անոմալ բարձր ջերմաստիճաններով և խիստ սակավ տեղումներով: Հատկապես բարձր ջերմային ֆոն է դիտվել փետրվարի առաջին և երկրորդ տասնօրյակում, երբ առանձին օրերին օրական միջին ջերմաստիճանը հանրապետության տարածքում բարձր է եղել կլիմայական նորմայից 10-14 աստիճանով:

Չոր և անոմալ տաք եղանակի ձևավորման համար դեր են խաղացել հետևյալ սինոպտիկական պրոցեսները. մթնոլորտի գետնամերձ շերտում ՀՀ տարածքը գտնվել է հարավից Իրանական անտիցիկլոնի հյուսիսային, իսկ հյուսիսից ՌԵՏ-ում գործող ակտիվ ցիկլոնների հարավային ծայրամասերում(Նկար 9):




Նկար 9. Բարիկական դաշտերի դասավորվածությունը մթնոլորտի գետնամերձ շերտի սինոպտիկական քարտեզի վրա

ԲՏ850մբ մակերևույթում նույն սինոպտիկական իրադրությունն է. արևմուտքից դիտվում է տաք օդային զանգվածների ինտենսիվ ադվեկցիա, որոնք գալիս են Ալժիրի տարածքից (Նկար 10):



Նկար 10. Տաք օդի ադվեկցիան FS850մբ մակերևույթի քարտեզի վրա


FS500մբ մակերևույթի քարտեզի վրա Կովկասի տարածքը գտնվում է Ալժիրի տարածքից ներթափանցող արևմտյան հոսքերի ազդեցության գոտում, որոնք ջերմաստիճանը մոտ 8-10 աստիճանով ավելի բարձր է քան մեր տարածաշրջանում (Նկար 11):



Նկար 11. Արևմտյան տաք օդային հոսանքները FS500մբ մակերևույթի քարտեզի վրա


Այսպիսով, դիտված անոմալ բարձր ջերմային ֆոնը և չոր եղանակը պայմանավորված են եղել հարավից Իրանական անտիցիկլոնի, հյուսիսից ՌԵՏ-ում պտտվող ցիկլոնի հարավային ծայրամասերի առկայությամբ, որոնք մթնոլորտի գետնամերձ շերտում ապահովել են հարավարևելյան, իսկ մթնոլորտի միջին և բարձր շերտերում՝ արևմտյան արևադարձային տաք օդային հոսանքների ինտենսիվ ներհոսք:

Փետրվարի 15-ին և 23-ին այս սինօպտիկական իրադրությունից հանրապետության շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Մթնոլորտի գետնամերձ շերտում մեր տարածաշրջանը գտնվել է հարավ-արևմուտքից Կիպրոսյան ցիկլոնի առաջնային, իսկ հյուսիս-արևմուտքից Սիբիրական անտիցիկլոնի թիկունքային մասում: Բարիկական դաշտերի նման դասավորվածության պայմաններում առաջացել է ջերմաստճանային մեծ հորիզոնական գրադիենտ, Կասպից ծովի և մեր տարածաշրջանի միջև (Նկար 12):




Նկար 12. Կիպրոսյան ցիկլոնը և Միջերկրական անտիցիկլոնը գետնամերձ սինոպտիկական քարտեզի վրա

FS850մբ մակերևույթի քարտեզի վրա նույն սինոպտիկական իրադրությունն է. ջերմաստճանային տարբերությունը Միջերկրական ծովի արևելյան հատվածի և Կասպից ծովի հյուսիսային հատվածի միջև կազմում է 10-12 աստիճան: Մեր տարածաշրջանում դիտվում է արևադարձային և արկտիկական օդային զանգվածների կոնվերգենսիա՝ առաջացնելով տաք մթնոլորտային ճակատ (Նկար 13):




Նկար 13. Տաք ճակատը FS850մբ մակերևույթի քարտեզի վրա

FS500մբ մակերևույթի քարտեզի վրա Կովկասը գտնվում է Միջերկրական ծովի վրա պտտվող բարձր ցիկլոնի առաջնային մասում, ՀՀ տարածքում հարավ-արևմտյան հոսքեր են ցողի կետի ջերմաստիճանի փոքր պակասորդներով (Նկար 14):



Նկար 14. Տաք ճակատը FS500մբ մակերևույթի քարտեզի վրա


Արբանյակային լուսանկարի վրա հստակ երևում է տաք ճակատի հետ կապված ամպամածության ծածկը, որը ընդգրկում է ողջ Կովկասի տարածքը (Նկար 15):



Նկար 15. Տաք ճակատի հետ կապված ամպամածության ծածկը արբանյակային լուսանկարի վրա


Այսպիսով, դիտված տեղումները պայմավորված են եղել Կիպրոսյան ցիկլոնի տաք ճակատում արևադարձային և արկտիկական օդային զանգվածների մեծ տարբերությամբ, որը հասել է 10-12 աստիճանի:

Փետրվարի երրորդ տասնօրյակում հանրապետության տարածքում դիտվել է օդի ջերմաստիճանի կտրուկ անկում, ինչի արդյունքում փետրվարի 28-ին Աշոցքում հասել է -26 աստիճան սառնամանիքի: Մթնոլորտի գետնամերձ շերտում մեր տարածաշրջանը գտնվել է Սիբիրական անտիցիկլոնի հարավ-արևմտյան կատարում, որը հյուսիս-արևելքից ապահովվել է արկտիկական ցուրտ օդային հոսանքների բուռն ներհոսք դեպի մեր տարածաշրջան (Նկար 16):




Նկար 16. Սիբիրական անտիցիկլոնի հետ կապված կատարը մթնոլորտի գետնամերձ շերտի քարտեզի վրա

FS850UF մակերևույթի քարտեզի վրա նույն սինոպտիկական իրադրությունն է ինչ երկրամերձ մակերևույթի քարտեզի վրա, ջերմաստիճանային տարբերությունը հյուսիս-արևելքից ներթափանցող արկտիկական օդային հոսանքների և հանրապետության տարածքի միջև կազմում է 5-6 աստիճան (Նկար 17):



Նկար 17. Հյուսիս-արևելքից ներթափանցող արկտիկական ցուրտ օդային հոսանքները FS850մբ մակերևույթի քարտեզի վրա

FS500մբ մակերևույթի քարտեզի վրա արևելքից արկտիկական օդային հոսանքների ներթափանցումը արտահայտված է ցրտի լեզվակով, ինչը նշանակում է, որ ցուրտ ներխուժումը ընդգրկել է տրոպոսֆերայի ստորին, այլ նաև միջին և բարձր շերտերը (Նկար 18):



Նկար 18. Հյուսիս-արևելքից ներթափանցող արկտիկական ցուրտ օդային հոսանքները FS500մբ մակերևույթի քարտեզի վրա

Այսպիսով, փետրվարի երրորդ տասնօրյակում հանրապետությունում դիտված ցածր ջերմային ֆոնը պայմանավորված է եղել Սիբիրական անտիցիկլոնի արևելյան կատարի հետ կապված արկտիկական ցուրտ օդային հոսանքների ներթափանցմամբ, որոնք ունենցել են բավականին մեծ ուղղաձիգ հզորություն ընդգրկելով միջին և բարձր տրոպոսֆերան:

ՄԱՅԻՍ

Մայիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից սահմաններում: Տեղումների ամսական քանակը կազմել է նորմայի 150-180%-ը, Լոռիում և Տավուշում մինչև 200-250%-ը:


Մթնոլորտի շրջանառությունը մայիսին

2024թ. մայիսին առանձնացավ ցիկլոնային պրոցեսների բուռն գործունեությամբ, որոնք ողջ ամսվա ընթացքում հանրապետության ողջ տարածքում առաջացրեցին հորդառատ անձրևներ, կարկուտ և ուժգին ամպրոպներ: Առանձնապես մասշտաբային կարկտահարություններ գրանցվեցին Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում, որոնք կրկնվեցին մի քանի անգամ: Հորդառատ անձրևներով պայմանավորված մոտ 3 անգամ Երևանի տարբեր հատվածներում դիտվեցին հեղեղումներ և ջրածածկումներ:

Մայիսի 24-26-ին Միջերկրական ծովի շրջաններից հզոր ցիկլոնի ներթափանցմամբ պայմանավորված հանրապետության ողջ տարածքում դիտվեցին ինտենսիվ անձրևներ, մայիսի 25-ի լույս 26-ի գիշերը Լոռի-Տավուշ հատվածում թափվեց 40-55մմ անձրև, որը հավասար է Երևանում ողջ մայիս ամսին դիտվող տեղումների քանակի ամսական նորմային: Հորդառատ անձրևներով պայմանավորված մայիսի 26-ին Տաշիր, Ձորագետ, Դեբեդ, Աղստև գետերում դիտվեց ուժեղ վարարումներ, որոնք իրենց ինտենսիվությամբ երկրորդն էին 1959թ-ին դիտված վարարումներից հետո:

Մայիսի 2-8-ին, 10-17-ին, 20-27-ին, հանրապետության շրջանների մեծ մասում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների ամսական քանակը հանրապետության ողջ տարածքում գերազանցեց նորման 2-3 անգամ, և 2024թ. մայիսը դարձավ օդերևութաբանական ողջ պատմության մեջ ամենատեղումնառատը:


Մայիսի 2-8-ին մթնոլորտի երկրամերձ մակերևույթի սինոպտիկական քարտեզի վրա հանրապետության տարածքը գտնվում է Հարավային ցիկլոնի ազդեցության գոտում: Ցիկլոնի կենտրոնը գտնվում է մեր տարածաշրջանում: Հյուսիսում առկա է ՌԵՏ անտիցիկլոն, որի արդյունքում հյուսիսային լայնություններից դեպի ցիկլոնի կենտրոն է տեղաշարժվում բարեխառն սառը օդային հոսանքներ (Նկար 19):



Նկար 19. Բարիկական դաշտերի դասավորությունը մթնոլորտի գետնամերձ շերտի սինոպտիկական քարտեզի վրա


ԲՏ850մբ մակերևույթի բարիկական քարտեզի վրա գրեթե նույն սինոպտիկական իրադրությունն է, ինչ մթնոլորտի երկրամերձ մակերևույթի քարտեզի վրա: Հանրապետության տարածքը գտնվում է ցածր ճնշման դաշտի ազդեցության գոտում (Նկար 20): Հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից դեպի ցիկլոնի կենտրոն

տեղաշարժվող օդային հոսանքների ջերմաստիճանը 8-10 աստիճանով ավելի ցածր է, քան մեր տարածաշրջանում:




Նկար 20. Ճնշման դաշտը FS850մ բարիկական քարտեզի վրա

FS700մ մակերևույթում մեր հանրապետությունը գտնվում է բարձր լաժբինայի առաջնային մասում, բարձր ցիկլոնի կենտրոնը գտնվում է Ուրալի տարածքում (Նկար 21): Այս մակերևույթում նույնպես ՀՀ տարածքում դիտվում է ցուրտ օդի ներխուժում:




Նկար 21. Ճնշման դաշտը FS700մ բարիկական քարտեզի վրա

FS500մ մակերևույթի բարիկական քարտեզի վրա գրեթե նույն սինօպտիկական իրադրությունն է, ինչ FS700մ մակերևույթի բարիկական քարտեզի վրա: Մեր հանրապետության տարածքը գտնվում է բարձր լաժբինայի առաջնային մասում, նրա առաջնային մասի և թիկունքային մասի միջև ջերմաստիճանային տարբերությունը կազմում է 4-6 աստիճան (Նկար 22):




Նկար 22. Ճնշման դաշտը FS 500-ի բարիկադային քարտեզի վրա

Արբանյակային լուսանկարի վրա հստակ երևում է, որ հանրապետության տարածքում, այդ թվում նաև Երևանում դիտվում են կոյտաանձրևային ամպամածության բուն զարգացում (Նկար 23):




Նկար 23. Կոյտաանձրևային ամպամածության ծածկը արբանյակային լուսանկարի վրա

Ըստ օդերևութաբանական ռադարի տվյալների՝ այդ հեղեղաբեր ամպը առաջացել է հենց Երևանի տարածքում և մոտ 30ր պահպանվել է քաղաքի արևելյան և հարավարևելյան հատվածներում (Նկար 24):




Նկար 24. Գերիզոր ամպրոպային ամպը օդերևութաբանական ռադարի վրա

Մայիսի 11-17-ի մթնոլորտի երկրամերձ մակերևույթի սինոպտիկական քարտեզի վրա հանրապետության տարածքը գտնվում է հարավ-արևմուտքից ներթափանցող ցիկլոնի ազդեցության գոտում: Յիկլոնի կենտրոնը գտնվում է Իրաքի տարածքում: Հյուսիսում առկա է ՌԵՏ-ի վրա ձևավորված ստացիոնար անտիցիկլոն: ՀՀ տարածքը գտնվում է այդ ցիկլոնի ալիքային բարձրացման հյուսիսային մասում (Նկար 25):




Նկար 25. Բարիկական դաշտերի դասավորությունը մթնոլորտի գետնամերձ շերտի սինոպտիկական քարտեզի վրա

ՖՏ850 մբ մակերևույթում ՀՀ տարածքը գտնվում է հյուսիսից-հարավ ձգվող լաժբինայի առաջնային մասում, որի առանցքն անցնում է Փոքր Ասիայի արևելյան շրջաններով, առանցքի արևելյան և արևմտյան մասում առկա է ջերմաստճանային մեծ տարբերություն, որը հասնում է 8-10 աստիճանի (Նկար 26): Ջերմաձնշումային դաշտի վերլուծությունը ցույց է տալիս, որ Կովկասը գտնվում է երկրորդ կարգի ցուրտ մթնոլորտային ձակատի առաջնային մասում, որը տեղաշարժվում է դեպի արևելք:




Նկար 26. Ճնշման դաշտը ՖՏ850մբ բարիկական քարտեզի վրա

ՖՏ700մբ մակերևույթում ՀՀ տարածքը գտնվում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղվածության լաժբինայի առաջնային մասում, որտեղ օդային հոսանքները հարավարևմտյան են: Լաժբինայի թիկունքային մասի և առաջնային մասի միջև առկա է մոտ 4-6 աստիճան ջերմաստճանային տարբերություն (Նկար 27):




Նկար 27. Ճնշման դաշտը FS700-ի բարիկական քարտեզի վրա

FS500-ի մակերևույթի բարիկական քարտեզի վրա գրեթե նույն իրադրությունն է, ինչ FS700-ի մակերևույթում. մեր տարածաշրջանը գտնվում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ձգվող բարձր լաժբինայի առաջնային մասում, հարավարևմտյան հոսքերի ազդեցության գոտում, որտեղ նաև առկա է իզոհիպսերի խտացում (Նկար 28):




Նկար 28. Ճնշման դաշտը FS 500-ի բարիկական քարտեզի վրա

Օդերևութաբանական ռադարի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետության կենտրոնական և հյուսիսային շրջանների վրա առկա են մինչև 50դբգ անդրադարձում ունեցող կարկտաամպոպային ամպերի օջախներ (Նկար 29):



Նկար 29. Կարկտաբեր ամպերի օջախները օդերևութաբանական ռադարի վրա

Արբանյակային լուսանկարի վրա ցայտուն երևում է, որ հանրապետության տարածքը ծածկված է ցուրտ ճակատի հետ կապված կույտաանձրևային ամպերով, որն ընդգրկել է ոչ միայն ՀՀ տարածքը, այլ նաև ամբողջ Հարավային Կովկասը (Նկար 30):




Նկար 30. Ամպամածության ծածկը արբանյակային լուսանկարի վրա

Մայիսի 24-ին Արարատի մարզի Արարատ քաղաքում դիտվել է ուժեղ կարկտահարություն տրամագիծը կազմելով 12մմ: Մայիսի 25-ին ուժեղ կարկտահարություն է դիտվել Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզի մի շարք բնակավայրերում, վնաս պատճառելով գյուղատնտեսությանը: Կարկուտի տրամագիծը կազմել է 10-12մմ:


Մայիսի 25-ի երեկոյան ժամերից 26-ի գիշերը ցուրտ մթնոլորտային ճակատի անցման արդյունքում հանրապետության հյուսիսային և հյուսիս-արևելյան մարզերում դիտվել է ուժեղ անձրև և ամպրոպ, առանձին վայրերում տեղումների քանակը կազնել է 35-45մմ: Ուժեղ անձրևների արդյունքում Լոռիում և Տավուշում դիտվել է գետերի վարարում, որն առաջացրել է մեծ ավերածություններ:

Մայիսի 23-27-ին հանրապետության տարածքը գտնվում է հյուսիսարևելքից ՌԵՏ-ում առկա անտիցիկլոնի հարավարևմտյան ծայրամասերում, իսկ հարավից ցիկլոնի հյուսիսարևելյան ծայրամասերում, բարիկական դաշտերի նման դասավորվածությունը պայմաններ են ստեղծում ցիկլոնի տիրույթում հյուսիսարևելքից՝ բարեխառն ցուրտ, հարավից և հարավարևմուտքից՝ արևադարձային տաք օդային հոսանքների կոնվերգենսիայի համար: Ընդ որում այս պրոցեսների դեպքում, ճակատային մակերևույթի ամենամեծ թեքությունը դիտվում է Լոռի, Տավուշ հատվածում, քանի որ այս մարզերում է նկատվում երկու տարբեր օդային հոսանքների ջերմաստճանային ամենամեծ տարբերությունը (Նկար 31):




Նկար 31. Բարիկական դաշտերի դասավորվածությունը մթնոլորտի գետնամերձ սինոպտիկական քարտեզի վրա

ԲՏ850մբ մակերևույթում նույն սինոպտիկական իրադրությունն է, ինչ մթնոլորտի գետնամերձ շերտում: Ցիկլոնի կենտրոնը գտնվում է Հայաստանից դեպի հարավ-արևմուտք, իսկ արևադարձային և բարեխառն օդային հոսանքների ջերմաստճանային տարբերությունը հասնում է 13-15 աստիճանի (Նկար 32):




Նկար 32. Ցիկլոնի դիրքը ԲՏ850մբ մակերևույթի վրա

ԲՏ700մբ մակերևույթում Հայաստանը գտնվում է բարձր ցիկլոնի առաջնային մասում, հարավ-արևելյան հոսքերի գոտում: Ցողի կետի պակաստորդի ջերմաստիճանի վերլուծությունը ցույց է տալիս, որ ցիկլոնը հագեցած է խոնավության մեծ պաշարներով: Այն սնուցում է ստանում և Սև ծովի և Միջերկրական ծովի ջրերից (Նկար 33):




Նկար 33. Բարձր ցիկլոնը FS700մբ մակերևույթի վրա

FS500մբ մակերևույթում նույն սինոպտիկական իրադրությունն է ինչ FS700մբ մակերևույթում, բարձր ցիկլոնի կենտրոնները գտնվում են Փոքր Ասիայի կենտրոնական շրջանների վրա և կրկին հագեցած է խոնավության մեծ պաշարներով: Հայաստանը գտնվում է նրա առաջնային մասում, հարավային հոսքերի գոտում (Նկար 34):




Նկար 34. Բարձր ցիկլոնը FS500մբ մակերևույթի վրա

Օդերևութաբանական ռադարի վրա ցերեկը ժամը 17:00-ից 19:00 ընկած ժամանակահատվածում զարգացել են հզոր կարկտամպրոպային օջախներ, որոնք ընդգրկել են Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերը, առաջացնելով մասշտաբային կարկտահարություններ (Նկար 35)



Նկար 35. Կարկտամպրոպային օջախները օդերևութաբանական ռադարի վրա

Արբանյակային լուսանկարի վրա հատկապես կեսօրից հետո նկատվեց հզոր կույտաանձրևային ամպերի բուռն զարգացում, որոնց համատարած շերտը անընդհատ կուտակվում էր հանրապետության հյուսիսային մարզերի վրա (Նկար 36):



Նկար 36. Հզոր կույտաանձրևային ամպերի զարգացումը արբանյակային լուսանկարի վրա

ՀՈՒԼԻՄ

Հուլիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում: Տեղումների ամսական քանակը կազմել է նորմայի 150-200%-ը, Արարատյան դաշտում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռնային շրջաններում՝ 200-250%-ը:

Մթնոլորտի շրջանառությունը հուլիսին


2024թ. հուլիսն առանձնացավ ցիկլոնային պրոցեսների բուռն գործունեությամբ, որոնք ողջ ամսվա ընթացքում հանրապետության ողջ տարածքում առաջացրեցին հորդառատ անձրևներ: Հորդառատ անձրևներով պայմանավորված հուլիսի 17-ին և 18-ին մոտ 2 անգամ Երևանի տարբեր հատվածներում դիտվեցին հեղեղումներ և ջրածածկումներ, որոնք ուղեկցվեցին ուժգին քամիներով՝ պոռթկումների ժամանակ հասնելով 20-25մ/վ արագության:

Հուլիսի 27-28, 29-ի գիշերը ակտիվ ցիկլոնով պայմանավորված հանրապետության հյուսիսային շրջաններում դիտվել են ուժեղ անձրև և ամպրոպ, մասնավորապես Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում այդ օրերին թափվել է ամսական նորմայից երկու անգամ շատ քանակությամբ անձրև:

Հորդառատ անձրևներով պայմանավորված հուլիսի 27-28-ին Աղստև գետում դիտվեց ուժեղ վարարում:


Տեղումների ամսական քանակը հանրապետության ողջ տարածքում գերազանցեց ամսական նորման 2 անգամ և 2024թ. հուլիսը դարձավ օդերևութաբանական ողջ պատմության մեջ ամենատեղումնառատը:

Հուլիսի 1-ին մթնոլորտի երկրամերձ մակերևույթի սինօպտիկական քարտեզում ՀՀ տարածքը գտնվել է հյուսիսից՝ ՌԵՏ անտիցիկլոնի հարավ-արևելյան ծայրամասում, որի կենտրոնը գտնվել է Վոլգոգրադի տարածքում: Այս անտիցիկլոնը իր հետ բերել է հյուսիս-արևելքից բարեխառն համեմատաբար սառը օդային հոսանքներ, իսկ հարավից ՀՀ տարածքը գտնվել է Ջերմային ցիկլոնի հյուսիս-արևելյան ծայրամասերում, որի ազդեցությամբ հարավ-արևելյան տաք օդային հոսանքները մեր տարածաշրջանում բխվում են հյուսիս-արևելյան ցուրտ օդային հոսանքներին՝ առաջացնելով ալիքային բարձրացում (Նկար 37):




Նկար 37. Բարիկադան դաշտերի դասավորությունը մթնոլորտի զետեմամբ շերտի սինոպտիկական քարտեզի վրա

FS850-ը մակերևույթի քարտեզում նույնպես ՀՀ տարածքը գտնվել է հյուսիս-արևելքից անտիցիկլոնի կատարի ազդեցության գոտում, որը նաև ապահովել է բարեխառն համեմատաբար սառը օդային հոսանքների ներթափանցում (Նկար 38):




Նկար 38. Ճնշման դաշտը FS850-ը բարիկադան քարտեզի վրա

FS500-ը մակերևույթում ՀՀ տարածքը գտնվել է հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք խորացող բարձր լաժբինայի ազդեցության գոտում, լաժբինայի ներսում առկա է բարձր ցիկլոն, որը տրոպոսֆերայում ապահովում է ջերմաստիճանային մեծ ուղղաձիգ գրադիենտներ՝ ցերեկային ժամերին ցիկլոնային գործունեությանը գումարելով կոնվեկտիվ անկայունություն (Նկար 39):




Նկար 39. Ճնշման դաշտը FS 500-ը բարիկադան քարտեզի վրա

Արբանյակային լուսանկարի վրա ցայտուն երևում է կույտաանձրևային ամպամածության ծածկը, որը ընդգրկել է ՀՀ տարածքի մեծ մասը (Նկար 40):




Նկար 40. Կույտաանձրևային ամպամածության ծածկը արբանյակային լուսանկարի վրա

Հուլիսի 10-ին մթնոլորտի երկրամերձ մակերևույթի սինոպտիկական քարտեզում ՀՀ տարածքը գտնվել է հյուսիս-արևմուտքից՝ անտիցիկլոնի հարավային ծայրամասերում, իսկ հարավ-արևելքից՝ Ջերմային ցիկլոնի հյուսիս-արևելյան ծայրամասերում, որը պայմաններ է ստեղծում հյուսիս-արևմուտքից բարեխառն՝ լայնություններից համեմատաբար սառը օդային հոսանքների, իսկ հարավից՝ արևադարձային լայնություններից տաք օդային հոսանքների ներթափանցման համար, որոնք հենց մեր տարածքում ստեղծել են կոնվեկտիվ անկայունություն (Նկար 41):




Նկար 41. Բարիկական դաշտերի դասավորությունը մթնոլորտի գետնամերձ շերտի սինոպտիկական քարտեզի վրա

FS850մբ մակերևույթի քարտեզում նույն սինոպտիկական իրադրությունն է, ինչ մթնոլորտի գետնամերձ շերտում: ՀՀ տարածքը գտնվել է հյուսիս-արևմուտքից անտիցիկլոնի հարավային ծայրամասերում, որն իր հետ բերում է բարեխառն լայնություններից համեմատաբար սառը օդային հոսանքներ, իսկ հարավ-արևելքից Ջերմային ցիկլոնի հյուսիս-արևելյան ծայրամասերում, որը պայմաններ է ստեղծել կոնվեկտիվ անկայունության համար (Նկար 42):




Նկար 42. Ճնշման դաշտը FS850-ի բարիկական քարտեզի վրա

FS500-ի մակերևույթում ՀՀ տարածքը գտնվել է բարձր ցիկլոնի ազդեցության գոտում, որը ցիկլոնային գործունեությանը գումարում է նաև կոնվեկտիվ անկայունությունը (Նկար 43):




Նկար 43. Ճնշման դաշտը FS 500-ի բարիկական քարտեզի վրա

Արբանյակային լուսանկարի վրա ցայտուն երևում է, որ հանրապետության տարածքը ծածկված է ցիկլոնի հետ կապված ամպրոպային ամպերով՝ կույտաանձրևաբեր ամպամածության գոտում, որն ընդգրկել է ոչ միայն ՀՀ տարածքը, այլ նաև ամբողջ Հարավային Կովկասի տարածքը (Նկար 44):




Նկար 44. Ամպամածության ծածկը արբանյակային լուսանկարի վրա

Հուլիսի 18-ին մթնոլորտի երկրամերձ մակերևույթի սինոպտիկական քարտեզում ՀՀ տարածքը գտնվել է հյուսիս-արևելքից՝ անտիցիկլոնի հարավ-արևմտյան ծայրամասերում, իսկ հարավ-արևելքից՝ Ջերմային ցիկլոնի հյուսիս-արևելյան ծայրամասերում: Փոքր Ասիայում դիտվել է ալիքային բարձրացում՝ հյուսիս-արևելքից ներթափանցած բարեխառն լայնություններից համեմատաբար սառը օդային հոսանքների, հարավից՝ արևադարձային լայնություններից տաք օդային հոսանքների միացմամբ պայմանավորված, իսկ ՀՀ տարածքը գտնվել է այդ ճակատի գազաթային մասում՝ ցուրտ սեկտորում (Նկար 45): Պայմանավորված ակտիվ արևելյան հոսքերով՝ Լոռի-Տավուշում դիտվում է ցածր հարկի ամպամածություն՝ արևելյան պրոցես:




Նկար 45. Բարիկական դաշտերի դասավորությունը մթնոլորտի գետնամերձ շերտի սինոպտիկական քարտեզի վրա

FS850մբ մակերևույթի քարտեզում նույն սինոպտիկական իրադրությունն է, ինչ մթնոլորտի գետնամերձ շերտում: ՀՀ տարածքը գտնվում է հյուսիս-արևելքից անտիցիկլոնի, հարավ-արևելքից՝ Ջերմային ցիկլոնի հյուսիսարևելյան ծայրամասում: Հյուսիս-արևելքից ներթափանցող ցուրտ օդային հոսանքների ջերմաստիճանը մոտ 5-7 աստիճանով ավելի ցածր է քան ՀՀ տարածքում (Նկար 46):




Նկար 46. Ճնշման դաշտը FS850մբ բարիկական քարտեզի վրա

FS500մբ մակերևույթում ՀՀ տարածքը գտնվել է բարձր լաժբինայի առաջնային մասում, որի առանցքը գտնվում է Փոքր Ասիայի տարածքում: Օդային հոսանքները հանրապետությունում արևմտյան ուղղության են (Նկար 47): Այս մակերևույթում նաև առկա է բարձր ճակատային գոտի, որը կապված է հարավում դիտվող բարձր ջերմային ֆոնի հետ:




Նկար 47. Ճնշման դաշտը FS 500-մբ բարիկական քարտեզի վրա

Արբանյակային լուսանկարի վրա ցայտուն երևում է, որ հատկապես երեկոյան ժամերին հանրապետության կենտրոնական և հյուսիսային շրջաններում դիտվել է հզոր կույտանձրևային ամպամածության զարգացումներ (Նկար 48):




Նկար 48. Կույտանձրևային ամպամածության ծածկը արբանյակային լուսանկարի վրա

Հուլիսի 27-ին մթնոլորտի երկրամերձ մակերևույթի սինոպտիկական քարտեզում ՀՀ տարածքը գտնվել է Ազոբյան անտիցիկլոնի կատարի հարավային ծայրամասերով անցնող ցուրտ մթնոլորտային ճակատի ազդեցության գոտում: Ցուրտ մթնոլորտային ճակատը Կովկասյան լեռների ազդեցությամբ ներխուժել է և՛ արևելքից, և՛ արևմուտքից, առաջացնելով օրոգրաֆիական օկլուզիա: Արևելքից բարեխառն սառը օդային իոսանքների ներթափանցմամբ պայմանավորված հանրապետության հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջաններում դիտվել է արևելյան պրոցես (Նկար 49):




Նկար 49. Բարիկական դաշտերի դասավորությունը մթնոլորտի գետնամերձ շերտի սինոպտիկական քարտեզի վրա

ԲՏ850մբ մակերևույթի քարտեզում գրեթե նույն իրադրությունն է, ինչ գետնամերձ մակերևույթում. ՀՀ տարածքը գտնվել է Ազորյան անտիցիկլոնի կատարի հարավային ծայրամասերով անցնող ցուրտ մթնոլորտային ճակատի ազդեցության գոտում: Ցուրտ մթնոլորտային ճակատը Կովկասյան լեռների ազդեցությամբ ներխուժել է և՛ արևելքից, և՛ արևմուտքից, առաջացնելով օրոգրաֆիական օկուզիա: Սև և Կասպից ծովերի և մեր տարածաշրջանի միջև առկա է մոտ 5-7 աստիճան ջերմաստիճանային տարբերություն (Նկար 50):




Նկար 50. Ճնշման դաշտը ԲՏ850մբ բարիկական քարտեզի վրա

ԲՏ500մբ մակերևույթում ՀՀ տարածքը գտնվել է հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք խորացող բարձր լաժբինայի առանցքում, արևմտյան օդային հոսանքների գոտում: Այս մակերևույթում ևս լաժբինայի առաջնային մասի և թիկունքային մասի միջև առկա է 2-4 աստիճան ջերմաստիճանային տարբերություն (Նկար 51) :




Նկար 51. Ճնշման դաշտը FS 500-ի բարիկական քարտեզի վրա

Արբանյակային լուսանկարի վրա ցայտուն երևում է, որ հատկապես երեկոյան ժամերին հանրապետության հյուսիսային շրջաններում դիտվել է հզոր կույտաանձրևային ամպամածության զարգացումներ (Նկար 52):




Նկար 52. Կույտաանձրևային ամպամածության ծածկը արբանյակային լուսանկարի վրա



Գծապատկեր 11. 2024 թվականին դիտված վտանգավոր օդերևութաբանական երևույթներ (դեպքերի թիվ)

2024 թվականի ընթացքում տրվել է 53 նախազգաշացում տարբեր վտանգավոր օդերևութաբանական երևույթների վերաբերյալ:

2024 թվականին եղանակի կանխատեսման արդարացվածությունը 1-3 օրերի համար կազմել է 91-93%, իսկ Երևան քաղաքինը՝ 94%:



Գծապատկեր 12. Եղանակի կանխատեսման արդարացվածությունը 2023-2024թթ.

Ընդհանուր տեղեկություններ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- շինարարությունը,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Արտանետումները կարող են վնաս հասցնել, ինչպես մարդու առողջությանը և շրջակա միջավայրին, այնպես էլ տնտեսությանը: Մթնոլորտային օդի արտանետումների և օդի որակի միջև գոյություն ունի բարդ փոխկապակցվածություն, որը ներառում է արտանետման աղբյուրների բարձրությունները, քիմիական կազմի վերափոխումները, արևի ճառագայթների, եղանակային և տոպոգրաֆիկ ազդեցությունները:

Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա*

Մթնոլորտային օդի առաջնային աղտոտիչներ են համարվում հիմնականում՝ ծծմբի երկօքսիդը, ազոտի օքսիդները, ածխածնի մոնօքսիդը, փոշին, ինչպես նաև գետնամերձ օզոնը՝ որպես երկրորդային աղտոտիչ:

Ծծմբի երկօքսիդ – նորմալ պայմաններում սուր հոտով անգույն գազ: Այն մթնոլորտային օդում հայտնվում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, հանքաքարից մետաղների արդյունահանման և արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ: Ծծմբի երկօքսիդի երկարատև ազդեցությունն առաջացնում է շնչառական հիվանդություններ, թոքերի պաշտպանական մեխանիզմների փոփոխություններ: Դրա բարձր պարունակությունը մթնոլորտային օդում հատկապես ազդում է երեխաների և ասթմայով տառապող մարդկանց վրա, ազդում է շնչուղիների նեղացման վրա՝ վատթարացնելով շնչառությունը:

Ազոտի երկօքսիդ – դեղին գույնի, կայուն գազ: Մթնոլորտային օդում առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է, հատկապես՝ դիզելային շարժիչներով մեքենաները: Ազոտի երկօքսիդի բարձր պարունակությունը մթնոլորտային օդում կարող է ծանր վնաս հասցնել թոքերին, առաջացնել շնչառական հիվանդություններ, թոքերի պաշտպանական մեխանիզմների փոփոխություններ: Դրա բարձր պարունակությունը կարող է ազդել ասթմայով տառապող մարդկանց վրա:

Ածխածնի մոնօքսիդ – անհոտ, անգույն թունավոր գազ: Առաջացման գլխավոր աղբյուրը ավտոտրանսպորտն է, կարող է առաջանալ նաև կաթսայատների թերայրման արգասիքների արտանետումների հետևանքով: Դրա պարունակությունը մեծ է խոշոր քաղաքներում, հատկապես խաչմերուկների և կանգառների մոտակայքում: Ածխածնի մոնօքսիդի բարձր պարունակությունը մթնոլորտային օդում կարող է ազդել գլխուղեղի,

*Մարդու առողջության վրա ազդեցության նկարագրությունը կատարվել է ՀԱԿ-ի հրապարակումների համաձայն

սրտանոթային համակարգի, կմախքային մկանների, ինչպես նաև պտղի ձևավորման վրա:

Փոշի – օրգանական կամ հանքային ծագմամբ կոշտ, մանր մասնիկների ամբողջություն: Փոշով աղտոտվածությունը գալիս է տարբեր աղբյուրներից՝ արդյունաբերական գործընթացներ, տրանսպորտային միջոցներ, ճանապարհային փոշի, շինարարություն, գյուղատնտեսական որոշ գործողություններ, կանաչապատ տարածքների պակաս: Մթնոլորտային օդում փոշու ազդեցությունը մարդու առողջության վրա կախված է փոշու մասնիկների չափերից և բաղադրությունից, ինչպես նաև ազդեցության տևողությունից: Փոշին կարող է նպաստել առողջության հետ կապված մի շարք խնդիրների, բազմաթիվ հիվանդությունների առաջացմանը, ներառյալ՝ հազ, մաշկային քոր, թոքերի հիվանդություններ, ասթմատիկ և սրտի նուպաներ:

Կապար – դյուրահալ, արծաթափայլ մետաղ: Մթնոլորտային օդում կապարը կարող է հանդես գալ մանր մասնիկների տեսքով: Կապարով պայմանավորված աղտոտվածությունը կարող է առաջանալ ինչպես հանքարդյունաբերությունից, այնպես էլ ավտոտրանսպորտից էթիլացված բենզինի օգտագործման դեպքում: Կապարի բարձր պարունակությունը մթնոլորտային օդում կարող է ազդել նյարդային համակարգի, երիկամների, վերարտադրողական օրգանների, սրտանոթային համակարգի, իմունային համակարգի, լյարդի, էնդոկրին համակարգի և աղեստամոքսային տրակտի վրա:

Պղինձ – կարմրանարնջագույն մետաղ: Պղինձի արտանետման ամենամեծ աղբյուրներն են հանքարդյունաբերությունը և մետաղների արդյունահանումը: Պղինձի բարձր պարունակությունը մթնոլորտային օդում առաջացնում է վերին շնչառական դեպրեսիա, թթվածնային քաղց:

Մոլիբդեն – արծաթափայլ փայլուն հազվագյուտ մետաղ: Օդում մոլիբդենի բարձր պարունակություններ կարող են նկատվել այն մշակող կամ արտանետող արդյունաբերությունների մոտակայքում: Մոլիբդենի երկարատև ազդեցությունը կարող է առաջացնել գլխացավ, հոգնածություն, ախորժակի կորուստ, մկանների և հոդերի ցավ:

Երկաթ. – սպիտակ-արծաթափայլ կռելի պինդ մետաղ: Այդ մետաղին բնորոշ են արագ մագնիսանալու և ապամագնիսանալու հատկությունները, ինչը հնարավորություն է տալիս երկաթը լայնորեն օգտագործելու էլեկտրատեխնիկայում և էլեկտրոնային սարքերում: Երկաթի բարձր պարունակությունը մթնոլորտային օդում կարող է հանգեցնել քաղցկեղի զարգացման:

Կոբալտ – մոխրագույն երանգով արծաթավուն ծանր մետաղ: Կոբալտը մթնոլորտում կարող է առաջանալ ածուխ պարունակող վառելիքային հումքի օգտագործումից, կոբալտի արդյունահանումից, արտադրությունից: Կոբալտի բարձր պարունակությունը կարող է հանգեցնել ասթմատիկ ալերգիայի:

Ցինկ – մոխրա-արծաթավուն մետաղ: Հանքարդյունաբերությունը, մետաղների արտադրությունը, ինչպես նաև ածուխի և որոշակի թափոնների այրումը կարող են հանդիսանալ ցինկի արտանետման աղբյուր: Ցինկի օքսիդի գոլորշիների շնչումից կարող է առաջանալ տենդ, որը կհանգեցնի մարմնի ջերմաստիճանի բարձրացման, սրտխառնոցի, դողի, թուլության:

Նիկել – փայլուն, մետաղական արծաթավուն՝ ոսկեգույն երանգով մետաղ: Նիկելի արտանետումների հիմնական մարդածին աղբյուրներից են վառելիքի այրումը, նիկելի արդյունահանումը և վերամշակումը, քաղաքային թափոնների այրումը: Մաշկի ալերգիկ երևույթները նիկելի ամենատարածված ազդեցությունն են առողջության վրա:

Կադմիում – արծաթափայլ, կապտամոխրագույն մետաղ: Կադմիումով պայմանավորված աղտոտվածությունը կարող է առաջանալ բարձրջերմաստիճանային տեխնոլոգիական գործընթացների կիրառման ժամանակ: Կադմիումի բարձր պարունակությունը մթնոլորտային օդում կարող է առաջացնել թոքերի քաղցկեղ:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) համեմատությամբ: Հիմնական աղտոտիչների ՄԹԿ-ների արժեքները բերված են Հավելված 5-ում:

Օդի որակի նորմեր

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) համեմատությամբ: Հիմնական աղտոտիչների ՄԹԿ-ների արժեքները բերված են Հավելված 3-ում:

Վնասակար նյութերի արտանետումներ


Արտանետումների տվյալները ներկայացված են 2023 թվականի համար:

2023 թվականին մթնոլորտային արտանետումները կազմել են 316.1 հազ.տոննա, որի 63.1%-ը բաժին է ընկել արտանետման շարժական, 36.9%-ը՝ անշարժ աղբյուրներին: Արտանետման անշարժ աղբյուրների քանակը կազմել է 3306:

Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը 2023 թվականին կազմել է 380.2 հազ. տոննա, որից 69.3%-ը որսվել է, մնացած 30.7%-ը՝ արտանետվել մթնոլորտ և կազմել է 116.8 հազ.տոննա: Անշարժ աղբյուրներից արտանետված վնասակար նյութերի ընդհանուր քանակի մոտ 88.1%-ը բաժին է ընկնում ածխաջրածիններին (առանց ՑՕՄ-ի)՝ պայմանավորված մեթանի արտանետումներով, փոշուն՝ 5.5%, ածխածնի օքսիդին՝ 3.1%-ը, ազոտի օքսիդներին՝ 1.7%-ը, ցնդող օրգանական միացություններին՝ 0.7%-ը, ծծմբային անհիդրիդին՝ 0.8%-ը, և այլ նյութերին՝ 0.1%-ը:


Անշարժ աղբյուրների արտանետումները ներկայացված են Ձև N 2-տա (Օդ) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների համաձայն, շարժական աղբյուրների արտանետումները՝ ՇՄՆ Մթնոլորտային քաղաքականության վարչության տվյալների համաձայն, գյուղատնտեսությունից արտանետումները՝ ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի EMEP/EEA օդի աղտոտող նյութերի արտանետումների գույքագրման ուղեցույցի համաձայն հաշվարկված տվյալների համաձայն:

Արտանետումներ, տոննա/տարի



Գծապատկեր 13. Անշարժ աղբյուրներից արտանետումների քանակն ըստ գործունեության ոլորտների և վնասակար նյութերի 2023թ.

Արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը 2023 թվականին կազմել է 199.3 հազ. տոննա: Արտանետված վնասակար նյութերի ընդհանուր քանակի մոտ 72.6%-ը բաժին է ընկնում ածխածնի օքսիդին, 17.5%-ը՝ ցնդող օրգանական միացություններին, 9.5%-ը՝ ազոտի օքսիդներին, 0.4%-ը՝ այլ նյութերին:




Գծապատկեր 14. Շարժական աղբյուրների օգտագործած վառելիքի և արտանետումների քանակն ըստ վառելիքի տեսակի 2023թ.


**Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված
վնասակար նյութերի (ընդհանուր փոշու) քանակը
2023 թվական**




**Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված
վնասակար նյութերի (ծծմբի երկօքսիդի) քանակը
2023 թվական**



**Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված
վնասակար նյութերի (ազոտի օքսիդների՝ առանց ենթօքսիդի) քանակը
2023 թվական**




Գյուղատնտեսության ոլորտում վնասակար նյութերի (ամոնիակի) արտանետումների քանակը / 2023 թվական



*-գյուղատնտեսությունից ամոնիակի արտանետումները հաշվարկվել է ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրահամանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի EMEP/EEA օդի աղտոտող նյութերի արտանետումների գույքագրման ուղեցույցի համաձայն (EMEP/EEA Air pollutant emission inventory guidebook 2016.)

**Տրանսպորտային միջոցներից արտանետված ածխածնի մոնիթինգի (CO)
քանակն ըստ ճանապարհային ցանցի խտության / 2023 թվական**



*-տրանսպորտից ածխածնի մոնիթինգի արտանետումների քանակը ներկայացված է ՀՄՆ Մթնոլորտային քաղաքականության վարչության տվյալների համաձայն, բաշխվածությունն իրականացվել է «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի EMEP/EEA տրամադրած ցանցային շերտի հիման վրա

Օդի որակ

2024 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2024 թվականին 2023 թվականի համեմատությամբ փոշու և ազոտի երկօքսիդի պարունակությունները աննշան բարձրացել են Վանաձոր, Ալավերդի քաղաքներում, իսկ ծծմբի երկօքսիդի պարունակությունը՝ Արարատ, Հրազդան քաղաքներում:


Երևան քաղաքի մթնոլորտային օդում տարվա ընթացքում տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվել են փոշու, ազոտի և ծծմբի երկօքսիդների պարունակությունների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: Այստեղ մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

2024 թվականին իրականացված դիտարկումների համաձայն ՀՀ բնակավայրերում փոշու օրական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է. Երևանում՝ դիտարկումների 29%, Գյումրիում՝ 32%, Վանաձորում՝ 27%, Ալավերդիում՝ 31%, Հրազդանում՝ 23%, Արարատում՝ 34%-ում:


Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները ներկայացված են պասիվ դիտակետերի տվյալների համաձայն:

Բոլոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին շաբաթական, միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:


Ստորև ներկայացվում է մթնոլորտային օդում որոշված աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիաներն՝ ըստ քաղաքների:



Գծապատկեր 15. Փոշու պարունակությունը քաղաքներում 2023-2024թթ.









Գծապատկեր 16. Ծծմբի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2023-2024թթ.



Գծապատկեր 17. Ազոտի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2023-2024 թթ.

2024 թվականին Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային օդում որոշված մետաղներից նիկելի, մոլիբդենի և կոբալտի միջին օրական կոնցենտրացիաները տարվա ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, մնացած մետաղների համար ՍԹԿ-ները բացակայում են:

Ստորև ներկայացվում է փոշու մեջ որոշված մետաղների միջին տարեկան կոնցենտրացիաներն ըստ քաղաքների.



Գծապատկեր 18. Մետաղների պարունակությունը քաղաքներում 2023-2024 թթ.

Երևան

Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան:


2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիաները գերազանցել են ՍԹԿ-ն 1.1-5.1 անգամ (տարվա ընթացքում 300 օր), ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները՝ 1.1-2.1 անգամ (60 օր), ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները՝ 1.1-1.5 անգամ (11 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (762 մկգ/մ^3) դիտվել է դեկտեմբերի 9-ին՝ Կենտրոն վարչական շրջանում, ազոտի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (84 մկգ/մ^3)՝ փետրվարի 8-ին՝ Նոր Նորքում, ծծմբի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (76 մկգ/մ^3)՝ փետրվարի 3-ին՝ Արաբկիրում: Գետնամերձ օդոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվել (Աղյուսակ 5):

Նախորդ տարվա համեմատ, օդում փոշու կոնցենտրացիան նվազել է 13%-ով, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 32%-ով, իսկ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան՝ աճել է 27%-ով:


Աղյուսակ 5. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները 2024թ.

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մկգ/մ^3 (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մկգ/մ^3	ՍԹԿ միջին օրական, մկգ/մ^3
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Փոշի (5)	762 Կենտրոն (Լուսավորիչ Ազաթանգեղոս խաչմերուկ)	300	1	126	150
Ծծմբի երկօքսիդ (5)	76 Արաբկիր (Կոմիտաս 29)	11	4	20	50
Ազոտի երկօքսիդ (5)	84 Նոր Նորք (Գայի 32)	60	0	19	40
Գետնամերձ օդոն (5)	27 Արաբկիր (Կոմիտաս 29)	0	0	6	30


Մայրաքաղաքում աղտոտվածությունը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Այստեղ մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:




Գծապատկեր 19. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փռշու օրական կոնցենտրացիան 2024թ.




Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ագոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.




Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.



Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդոնի օրական կոնցենտրացիան 2024թ.



Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.




Գծապատկեր 24. Երևան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Գյումրի


Գյումրի քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 24 դիտակետ և 1 դիտակայան:

2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1-3.7 անգամ (112 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (548 մկգ/մ³) դիտվել է փետրվարի 12-ին: Նախորդ տարվա համեմատությամբ փոշու կոնցենտրացիան աննշան (3%) նվազել է:


Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում արդյունաբերությունը և քաղաքաշինությունը:




Գծապատկեր 25. . Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.




Գծապատկեր 26. Գյումրու մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.





Գծապատկեր 27. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում օծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.



Գծապատկեր 28. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.



Գծապատկեր 29. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները




Վանաձոր


Վանաձոր քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 24 դիտակետ և 3 դիտակայան:

2024 թվականի ընթացքում քաղաքի փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹ-ն 1.1-6.4 անգամ (196 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (959մկգ/մ³) դիտվել է մարտի 5-ին՝ Դիմաց թաղամասում: Նախորդ տարվա համեմատությամբ փոշու կոնցենտրացիան աճել է 2%-ով:


Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրը արդյունաբերությունն է:




Գծապատկեր 30. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ




Գծապատկեր 31. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ



Գծապատկեր 32. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ




Գծապատկեր 33. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները




Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 դիտակետ և 3 դիտակայան:


2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1-6.3 անգամ (238 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (949 մկգ/մ^3) դիտվել է հունվարի 9-ին՝ Սանահին սարահարթ. թաղամասում: Նախորդ տարվա համեմատությամբ փոշու կոնցենտրացիան աճել է 1.5%-ով:




Գծապատկեր 34. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ




Գծապատկեր 35. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի եկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ



Գծապատկեր 36. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ




Գծապատկեր 37. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փռչու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2023-2024թթ.




Գծապատկեր 38. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2024 / ԱՆԱՎԵՐԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2024 / ԱՆԱՎԵՐԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ




Հրազդան


Հրազդան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 17 դիտակետ և 1 դիտակայան: 2024 թվականին Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-3.8 անգամ (75 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (564 մկգ/մ^3) դիտվել է նոյեմբերի 5-ին: Նախորդ տարվա համեմատությամբ փոշու կոնցենտրացիան նվազել է 8%-ով:


Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում արդյունաբերությունը:




Գծապատկեր 39. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.





Գծապատկեր 40. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.





Գծապատկեր 41. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.



Գծապատկեր 42. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 43. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները




Արարատ


Արարատ քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 12 դիտակետ և 1 դիտակայան:

2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-4.8 անգամ (114 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (713 մկգ/մ^3) դիտվել է ապրիլի 19-ին: Նախորդ տարվա համեմատությամբ փոշու կոնցենտրացիան նվազել է 7%-ով:




Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում արդյունաբերությունը:




Գծապատկեր 44. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.



Գծապատկեր 45. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.




Գծապատկեր 48. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները





Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 14 դիտակետ և 1 դիտակայան:

2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-1.4 անգամ (4 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (163 մկգ/մ^3) դիտվել է դեկտեմբերի 13-ին: Ազոտի և ծծմբի երկօքսիդների կոնցենտրացիաների գերազանցում համապատասխան ՍԹԿ-ներից չի դիտվել:




Գծապատկեր 49. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.




Գծապատկեր 50. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2024 / ՄԱՂԿԱԶՈՐ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2024/ ՄԱՂԿԱԶՈՐ



Մթնոլորտային տեղումներ

2024 թվականի ընթացքում Ծաղկաձոր քաղաքում իրականացվել է մթնոլորտային տեղումների (ձյուն, անձրև) 32 դիտարկում:
Որոշվել է 32-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ, որոնց միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները ներկայացված են Աղյուսակ 6-ում.

Աղյուսակ 6. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում ֆիզիկաքիմիական ցուցանիշների միջին ամսական և տարեկան կոնցենտրացիաները, 2024թ.


Ցուցանիշներ	Չափման միավոր	Կոնցենտրացիաներ											
		Հունվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Ջրածնային ցուցիչ	-	6.0	5.8	6.3	6.4	6.3	6.5	5.7	6.4	6.5	6.0	5.8	6.1
Նիտրատ իոն	մգ/լ	1.51	0.78	3.64	1.10	1.52	3.23	5.06	2.24	2.03	1.15	1.28	2.14
Սուլֆատ իոն	մգ/լ	2.00	2.82	6.17	1.53	1.44	4.05	4.83	3.80	2.33	1.52	1.98	2.95
Քլորիդ իոն	մգ/լ	0.62	0.57	0.45	0.30	0.26	1.32	0.82	0.69	0.44	2.42	0.76	0.79
Ամոնիում իոն	մգ/լ	0.45	0.44	2.53	0.60	2.53	1.01	1.22	0.59	0.26	1.16	1.07	1.08
Էլեկտրահաղորդականություն	մկՍմ/սմ	15.8	12.0	45.7	20.0	21.7	35.1	54.4	30.0	23.3	36.6	19.3	28.5
Ընդհանուր ֆոսֆոր	մգ/լ	0.01	0.13	0.60	0.04	0.07	0.06	0.20	0.02	0.04	0.17	0.05	0.13
Նատրիում	մգ/լ	0.38	0.34	0.44	0.38	0.25	0.60	0.32	0.38	0.36	0.97	0.65	0.46
Կալիում	մգ/լ	0.30	0.23	0.34	0.23	0.46	0.41	0.86	0.28	0.55	3.92	0.92	0.77
Կալցիում	մգ/լ	0.89	1.55	7.48	3.55	3.64	5.00	9.39	4.02	3.60	4.46	2.19	4.16
Մագնեզիում	մգ/լ	0.17	0.13	0.52	0.26	0.23	0.51	0.39	0.37	0.37	0.53	0.25	0.34
Լիթիում	մկգ/լ	0.14	0.10	0.27	0.16	0.13	0.20	0.22	0.18	0.24	0.21	0.12	0.18
Բերիլիում	մկգ/լ	0.04	0.03	0.01	0.06	0.01	0.01	0.01	0.02	0.04	0.01	0.02	0.02
Բոր	մկգ/լ	2.3	1.2	4.4	7.9	7.0	14.3	27.0	7.1	3.1	4.8	2.3	7.4
Ալյումին	մկգ/լ	26.9	30.9	365.8	81.3	75.0	34.1	68.5	41.8	57.3	62.7	33.9	79.8
Վանադիում	մկգ/լ	0.53	0.35	2.81	0.45	0.46	2.27	1.47	0.42	0.99	0.94	0.56	1.02
Քրոմ	մկգ/լ	0.23	0.20	0.98	1.58	0.02	5.03	0.40	0.39	0.35	1.35	0.23	0.98
Երկաթ	մկգ/լ	15.0	33.1	125.4	102.7	89.8	45.5	74.0	54.0	59.5	143.2	39.3	71.1

Ցուցանիշներ	Չափման միավոր	Կոնցենտրացիաներ											
		Հունվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Մանգան	մկգ/լ	6.24	4.91	24.06	4.73	5.30	3.19	8.21	3.66	2.25	21.55	12.74	8.80
Կոբալտ	մկգ/լ	0.10	0.08	0.44	0.08	0.10	0.05	0.18	0.05	0.05	0.29	0.13	0.14
Նիկել	մկգ/լ	0.68	0.55	2.35	0.55	0.79	0.65	1.52	0.67	0.66	1.45	0.80	0.97
Պղինձ	մկգ/լ	2.1	2.0	4.6	1.2	2.4	1.7	3.1	1.1	1.0	4.1	2.1	2.3
Յինկ	մկգ/լ	36.3	21.6	39.6	8.0	13.5	8.1	11.6	9.3	9.4	52.7	59.2	24.5
Արսեն	մկգ/լ	0.10	0.10	0.42	0.17	0.10	0.35	0.40	0.08	0.11	0.17	0.12	0.19
Սելեն	մկգ/լ	0.21	0.29	0.59	0.70	0.24	0.44	0.32	0.26	0.19	0.16	0.16	0.32
Ստրոնցիում	մկգ/լ	3.6	3.2	20.9	10.5	6.9	13.0	24.9	10.7	7.0	8.9	6.0	10.5
Մոլիբդեն	մկգ/լ	0.53	1.62	5.89	1.06	1.22	0.80	1.17	1.00	1.03	1.55	1.49	1.58
Կադմիում	մկգ/լ	0.06	0.04	0.09	0.02	0.04	0.03	0.03	0.03	0.03	0.09	0.06	0.05
Անագ	մկգ/լ	0.05	0.05	0.11	0.04	0.04	0.03	0.04	0.02	0.03	0.05	0.06	0.05
Ծարիր	մկգ/լ	0.04	0.07	0.26	0.06	0.09	0.10	0.12	0.10	0.10	0.06	0.09	0.10
Բարիում	մկգ/լ	3.0	2.3	11.3	3.2	6.0	4.8	9.1	4.1	3.2	6.9	5.4	5.4
Կապար	մկգ/լ	1.02	0.48	2.85	0.48	0.74	0.31	0.35	0.40	1.03	0.93	0.71	0.85


Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 դիտակետ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


2024 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան աճել է 10%-ով, ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան՝ նվազել 33%-ով:




Գծապատկեր 51. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 52. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.





Գծապատկեր 53. Կապան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները





Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 դիտակետ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Նախորդ տարվա համեմատությամբ 13%-ով աճել է ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան, ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան՝ նվազել 21%-ով:








Գծապատկեր 56. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները



Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 դիտակետ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԾԿ-ները:

Նախորդ տարվա համեմատությամբ 10%-ով աճել է ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ նվազել 28%-ով




Գծապատկեր 59. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները




«Եվրոպայի մեծ տարածությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»

Մթնոլորտային օդ

ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի «Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագրի» շրջանակներում ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով Ամբերդում գործող տարածաշրջանային կայանում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղի պարունակությունները:



Գծապատկեր 60. Ամբերդի տարածաշրջանային կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 61. Ամբերդ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան 2023-2024թթ.

Աղյուսակ 7. Ամբերդի մթնոլորտային օդում փոշու մեջ որոշված ցուցանիշների միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները 2024թ.

Ցուցանիշ	Չափման միավոր	Կոնցենտրացիաներ												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Քլորիդ իոն	մկգ/մ³	0.117	0.071	0.151	0.101	0.100	0.096	0.080	0.077	0.121	0.083	0.067	0.033	0.091
Նիտրատ իոն	մկգ/մ³	0.070	0.057	0.082	0.070	0.054	0.041	0.060	0.071	0.111	0.080	0.205	0.146	0.087
Սուլֆատ իոն	մկգ/մ³	0.133	0.071	0.134	0.084	0.118	0.080	0.248	0.252	0.210	0.113	0.180	0.203	0.152
Ամոնիում իոն	մկգ/մ³	0.158	0.049	0.125	0.083	0.147	0.053	0.200	0.269	0.151	0.124	0.294	0.371	0.169
Նատրիում	մկգ/մ³	0.055	0.022	0.042	0.039	0.053	0.026	0.034	0.026	0.034	0.016	0.018	0.009	0.031
Կալիում	մկգ/մ³	0.028	0.210	0.132	0.058	0.167	0.077	0.078	0.231	0.016	0.112	0.042	0.037	0.099
Մագնեզիում	մկգ/մ³	0.003	0.002	0.005	0.014	0.011	0.011	0.015	0.040	0.484	0.005	0.004	0.002	0.050
Կալցիում	մկգ/մ³	0.042	0.059	0.074	0.168	0.163	0.152	0.195	0.290	0.254	0.123	0.080	0.056	0.138
Լիթիում	նգ/մ³	0.003	0.004	0.005	0.008	0.011	0.006	0.006	0.011	0.013	0.010	0.005	0.004	0.007
Բարիում	նգ/մ³	0.103	0.071	0.082	0.167	0.365	0.263	0.695	0.410	0.250	0.165	0.177	0.190	0.245
Ալյումին	մկգ/մ³	0.002	0.001	0.002	0.010	0.003	0.007	0.008	0.023	0.005	0.002	0.003	0.002	0.006
Վանադիում	նգ/մ³	0.066	0.019	0.042	0.026	0.047	0.041	0.050	0.108	0.067	0.085	0.063	0.372	0.082
Քրոմ	նգ/մ³	0.152	0.069	0.274	0.110	0.142	0.047	0.056	0.061	0.224	0.315	0.014	0.024	0.124
Երկաթ	մկգ/մ³	0.005	0.002	0.005	0.006	0.010	0.006	0.009	0.023	0.007	0.006	0.001	0.002	0.007
Մանգան	նգ/մ³	0.120	0.123	0.284	0.567	0.455	0.802	0.832	1.551	0.767	0.286	0.339	0.289	0.535
Կոբալտ	նգ/մ³	0.003	0.004	0.005	0.007	0.008	0.008	0.009	0.017	0.032	0.005	0.003	0.003	0.009
Նիկել	նգ/մ³	0.041	0.095	0.194	0.040	0.070	0.049	0.042	0.135	0.136	0.024	0.033	0.103	0.080
Պղինձ	նգ/մ³	0.127	0.099	0.097	0.156	1.252	0.288	0.511	1.095	2.319	0.141	0.136	0.204	0.535
Ցինկ	նգ/մ³	1.049	0.975	0.981	0.618	4.909	2.056	2.795	3.110	2.319	2.209	2.519	2.905	2.204
Արսեն	նգ/մ³	0.018	0.016	0.032	0.012	0.026	0.015	0.032	0.049	0.061	0.039	0.024	0.040	0.030
Ստրոնցիում	նգ/մ³	0.103	0.094	0.163	0.506	0.595	0.367	0.582	1.148	1.088	0.212	0.161	0.098	0.426
Մոլիբդեն	նգ/մ³	0.159	0.391	0.167	0.318	0.300	0.210	0.152	0.377	0.208	0.279	0.440	0.488	0.291
Կադմիում	նգ/մ³	0.009	0.007	0.008	0.004	0.016	0.005	0.007	0.009	0.015	0.009	0.014	0.029	0.010
Անագ	նգ/մ³	0.008	0.005	0.009	0.024	0.011	0.009	0.011	0.016	0.009	0.011	0.015	0.016	0.012
Կապար	նգ/մ³	0.106	0.098	0.084	0.056	0.081	0.035	0.155	0.313	0.001	0.261	0.389	0.590	0.181

Մթնոլորտային տեղումներ

2024 թվականի ընթացքում Ամբերդի տարածաշրջանային կայանում իրականացվել է 42 մթնոլորտային տեղումների (ձյուն, անձրև) դիտարկում: Որոշվել է 32-ական ցուցանիշ, որոնց միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները ներկայացված են Աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 8. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշված ցուցանիշների միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները 2024թ.

Ցուցանիշ	Չափման միավոր	Կոնցենտրացիա											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Տարեկան
Ջրածնային ցուցիչ	-	6.2	6.0	6.0	7.0	6.2	6.7	6.5	6.7	6.4	5.9	5.5	6.3
Նիտրատ իոն	մգ/լ	2.60	1.83	0.65	3.14	1.09	2.53	3.31	4.59	5.83	0.50	1.89	2.54
Սուլֆատ իոն	մգ/լ	1.61	0.61	0.47	0.73	0.49	0.52	1.21	2.16	1.68	0.69	0.68	0.99
Քլորիդ իոն	մգ/լ	2.01	1.72	1.03	0.59	0.25	0.33	1.03	1.95	1.06	2.42	1.58	1.27
Ամոնիում իոն	մգ/լ	1.52	1.66	0.67	0.42	0.74	2.45	1.76	5.78	1.57	1.49	1.17	1.75
Էլեկտրահաղորդականություն	մկՍմ/սմ	45.3	26.3	17.9	75.8	13.3	22.2	35.1	61.5	38.8	33.2	23.7	35.7
Ընդհանուր ֆոսֆոր	մգ/լ	0.08	0.03	0.21	0.07	0.05	0.06	0.09	2.41	0.21	0.04	0.03	0.3
Նատրիում	մգ/լ	2.14	2.08	1.47	4.20	0.19	0.25	0.96	1.61	0.28	2.23	1.43	1.53
Կալիում	մգ/լ	1.44	2.24	1.19	2.93	0.14	0.31	0.39	3.90	0.54	2.02	1.18	1.48
Կալցիում	մգ/լ	2.50	0.98	1.51	12.49	1.75	3.75	4.34	6.06	4.01	2.48	1.43	3.75
Մագնեզիում	մգ/լ	0.50	0.07	0.26	2.46	0.13	0.33	0.40	0.59	0.27	0.76	0.12	0.54
Լիթիում	մկգ/լ	1.60	0.47	0.47	0.05	0.11	0.12	0.16	0.21	0.11	0.79	0.22	0.4
Բերիլիում	մկգ/լ	0.04	0.04	0.01	0.02	0.06	0.01	0.05	0.03	0.07	0.05	0.02	0.0
Բոր	մկգ/լ	10.9	3.3	1.3	10.8	4.3	8.3	16.2	15.9	5.4	10.1	8.1	8.6
Ալյումին	մկգ/լ	30.1	29.0	18.4	277.2	67.8	152.0	35.7	132.5	71.1	18.1	56.1	80.7
Վանադիում	մկգ/լ	1.07	0.39	0.58	5.33	0.59	1.00	0.82	1.33	0.66	0.36	0.94	1.2
Քրոմ	մկգ/լ	0.34	0.80	0.25	0.61	0.25	0.54	0.12	0.74	0.25	0.81	0.40	0.5
Երկաթ	մկգ/լ	25.75	55.87	116.32	113.46	263.52	122.81	83.73	90.60	51.83	73.90	38.71	94.22
Մանգան	մկգ/լ	6.8	3.1	2.0	4.6	2.3	12.4	1.6	23.1	3.2	2.0	9.0	6.4
Կոբալտ	մկգ/լ	0.13	0.11	0.05	0.09	0.04	0.13	0.03	0.26	0.08	0.06	0.11	0.10

Ցուցանիշ	Չափման միավոր	Կոնցենտրացիա											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Տարեկան
Նիկել	մկգ/լ	0.93	2.62	1.43	0.85	0.24	0.53	0.27	1.18	0.56	1.32	2.03	1.09
Պղինձ	մկգ/լ	5.7	4.9	2.4	1.3	1.4	2.7	4.3	14.3	8.5	6.5	4.1	5.1
Ցինկ	մկգ/լ	10.2	29.9	32.0	0.0	2.6	3.0	0.5	14.3	4.1	26.5	27.3	13.7
Արսեն	մկգ/լ	0.33	0.13	0.14	1.36	0.11	0.17	0.27	0.49	0.12	0.13	0.25	0.32
Սելեն	մկգ/լ	0.58	0.43	0.72	0.27	1.03	0.42	0.59	0.57	0.15	0.06	0.41	0.48
Ստրոնցիում	մկգ/լ	11.98	2.43	3.94	38.42	4.69	9.57	16.31	20.27	8.65	9.24	3.29	11.71
Մոլիբդեն	մկգ/լ	1.06	3.94	0.86	0.77	1.20	1.25	0.87	2.88	0.76	0.29	0.27	1.29
Կադմիում	մկգ/լ	0.16	0.09	0.03	0.10	0.02	0.02	0.02	0.05	0.02	0.05	0.13	0.06
Անագ	մկգ/լ	0.28	0.08	0.05	0.01	0.04	0.02	0.01	0.02	0.05	0.11	0.07	0.07
Ծարիր	մկգ/լ	1.52	0.15	0.12	0.39	0.07	0.14	0.11	0.19	0.13	0.05	0.13	0.27
Բարիում	մկգ/լ	5.0	2.0	1.6	10.5	1.4	4.4	4.7	8.4	3.4	1.8	2.4	4.1
Կապար	մկգ/լ	5.94	2.74	0.38	0.07	0.38	0.47	0.41	1.93	1.46	0.72	2.22	1.52

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևապես են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- գյուղատնտեսական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ տեղափոխված վնասակար նյութերը

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսաածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա

Ջրերի ռեսուրսների ֆիզիկաքիմիական հատկանիշները բնութագրվում են դրանցում առկա հիմնական անիոնների և կատիոնների, կենսաածին նյութերի, ծանր մետաղների, առաջնային օրգանական աղտոտիչների պարունակությամբ:

Կենսաածին նյութեր – ազոտ կամ ֆոսֆոր պարունակող միացություններ (ամոնիում, նիտրիտ, նիտրատ, ֆոսֆատ իոններ և այլն), որոնք խթանում են ջրիմուռների աճը և կարող են հանդիսանալ ջրերի էվտրոֆիկացման պատճառ: Նրանց պարունակությունը կարող է բարձրանալ կոմունալ-կենցաղային, գյուղատնտեսական արտահոսքերի, անձրևաջրերի միախառնման հետևանքով:

Ամոնիում իոն – բնական ջրերում ձևավորվում է ազոտ պարունակող օրգանական նյութերի տարրալուծմամբ: Ամոնիումի բարձր պարունակությունը կարող է նվազացնել հեմոգլոբինի՝ թթվածին կապելու ունակությունը:

Նիտրիտ իոն – բնական ջրերում կարող է բարձրանալ, եթե օգտակար բակտերիաները չհասցնեն կանխարգելել դրանց աճը: Նիտրիտներով թունավորումը կարող է վատթարացնել աղեստամոքսային տրակտի աշխատանքը, ինչը կարող է արտահայտվել սրտխառնոցով, փսխումով:

Նիտրատ իոն – աղտոտման աղբյուրներ հիմնականում կարող են հանդիսանալ կոմունալ-կենցաղային և անասնաբուծական համալիրների կեղտաջրերը, ինչպես նաև ազոտ պարունակող գյուղատնտեսական հողատարածքների արտանետումները: Բարձր կոնցենտրացիաները բնական ջրերում հանգեցնում են մարդու արյան և սիրտ-անոթային համակարգերի հիվանդությունների առաջացմանը:

Ֆոսֆատ իոն – բարձր պարունակությունը առաջին հերթին նպաստում է մաշկային հիվանդությունների առաջացմանը, ապա նաև՝ երիկամների, լյարդի և կմախքային մկանների ֆունկցիայի անբավարարությանը, ինչն էլ իր հերթին, հանգեցնում է

թունավորումների, նյութափոխանակության խանգարումների և քրոնիկ հիվանդությունների սրացման:

Ծանր մետաղներ – մոլիբդեն, սնդիկ, կապար, կադմիում, պղինձ, ծարիր և այլն: Ջրային ռեսուրսներում կարող են հայտնվել մթնոլորտային տեղումների, ինչպես նաև հանքարդյունաբերական, ծանր արդյունաբերական, ռադիոակտիվ թափոնների և աղբավայրերի միջոցով: Մետաղները կարող են կուտակվել հողերում ու ապարներում, այնուհետև ներթափանցեն մակերևութային և ստորերկրյա ջրերի մեջ: Դրանց բարձր պարունակությունը կարող է վատթարացնել ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնել այն ոչ պիտանի, խախտել ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազեցնել աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման ունակությունը, փոխել ջրային կենսաբազմազանության կազմը: Ծանր մետաղները կարող են կուտակվել պրոդուցենտների (հիմնականում կանաչ բուսատեսակների) մեջ և տրոֆիկական շղթայով անցնել մարդուն:

Կադմիում – դրանց կուտակումը ախտահարում է նյարդային համակարգը, խանգարվում է ֆոսֆոր-կալցիումի փոխանակումը: Քրոնիկ թունավորումը բերում է ոսկրերի քայքայման և սակավարյունության, ազդում է լյարդի և երիկամների վրա, ինչն էլ կարող է հանգեցնել երիկամի ֆունկցիայի լուրջ խանգարման:

Ցինկ – աղերի չափազանց մեծ քանակությունը կարող է հանգեցնել սրտխառնոցով սուր աղիքային թունավորումների:

Արսեն – ջրային ռեսուրսներում արսենի բարձր պարունակությունը կարող է պայմանավորված լինել հանքարդյունաբերական գործունեությամբ, վառելանյութի այրման և հանքաքարերի վերամշակման հետևանքով: Ստորերկրյա ջրերը կարող են հագենալ արսենով՝ հոսելով նստվածքային ապարների միջով: Արսենի բարձր պարունակությունները և երկարատև ազդեցությունը կարող է առաջացնել մաշկի, նյարդային վերջույթների, վնասվածքներ, շաքարախտ, սրտանոթային հիվանդություններ և քաղցկեղ:

Պղինձ – աղտոտվածությունը կարող է առաջանալ հանքարդյունաբերական, լեռնահարստացման, մետաղագործական և քիմիական արդյունաբերությունների աշխատանքների հետևանքով: Պղինձով բարձր կոնցենտրացիաները կարող են թունավոր ազդեցություն ունենալ կենդանի օրգանիզմների վրա, ինչը կհանգեցնի, մասնավորապես, մի շարք օրգանների և հյուսվածքների ապաճի, անեմիայի և մի շարք նյարդաբանական հիվանդությունների:

Մոլիբդեն – բարձր պարունակությունը կարող է հանգեցնել նյութափոխանակության խանգարման:

Ջրի որակի նորմեր


Մակերևութային ջրերի որակի գահահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ՋԿՏ-ի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշման համաձայն (Հավելված 5): Ջրի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի տարբեր ցուցանիշներ ընկնում են տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: ՀՀ 14 խոշոր գետային ավազանների գետերի, գետերի առանձին հատվածների և վտակների ցուցանիշների ֆոնային կոնցենտրացիաները և էկոլոգիական նորմերի ամբողջական ցանկը տրված է www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

Արաքս գետի ջրի որակի գնահատումն իրականացվում է ձկնատնտեսական ՍԹԿ-ների հետ համեմատությամբ (Հավելված 5):


Ստորերկրյա ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N876 հրամանի՝ ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի և անտրոպոգեն ծագումով նյութերի ՍԹԿ-ների հետ համեմատությամբ (Հավելված 5):

Ջրօգտագործում

Ջրառի և ջրօգտագործման տվյալները՝ վարչական վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների հետ կապված, ներկայացված են 2023 թվականի համար: 2023 թվականին ջրառը կազմել է 2917.6 մլն.մ³, ջրօգտագործումը՝ 2261.9 մլն.մ³, որից 157.5 մլն.մ³-ը՝ խմելու, արտադրական՝ 138 մլն.մ³, ոռոգում՝ 1225.8 մլն.մ³, ձկնաբուծություն՝ 721.9 մլն.մ³, այլ կարիքներ՝ 18.7 մլն.մ³: Ջրի տրանզիտային կորուստները կազմել են 655.7 մլն.մ³ կամ ջրառի 22.5%-ը:




Գծապատկեր 62. Ջրօգտագործման ծավալներն ըստ նպատակների, 2023 թ.



Գծապատկեր 63. Ջրօգտագործման ծավալներն ըստ ջրային ռեսուրսի տեսակի, 2023 թ.

* Ջրառի, ջրօգտագործման, ջրահեռացման տվյալները ներկայացված են Ձև N 2-տա (Ջուր) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների համաձայն և չեն ներառում ՀԷԿ-երի տվյալները

Զրոգտագործման ծավալներն ըստ նշանակության 2024 թվական



Քանակական և որակական մոնիթորինգ

Մակերևութային ջրեր

2024 թվականին մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփիլիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): 91 դիտակետերում իրականացվել են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ): 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվել են ջրի ելքի չափումներ՝ տարեկան 25-35 անգամ: 91 դիտակետից 61-ը օպերատիվ դիտակետեր են, որոնցից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ:

Սահմանային Ախուրյան-Հայկաձոր, Ախուրյան-Բագարան, Արաքս-Սուրմալու հիդրոլոգիական դիտակետերում տարեկան 13 անգամ Թուրքիայի մասնագետների հետ համատեղ իրականացվել են ջրաչափական աշխատանքներ:

Մայիսի 26-ին Դեբեդ և Աղստև գետերում ջրի բարձր ելքերի հետևանքով առաջացած հեղեղումների վերաբերյալ անընդհատ տեղեկատվություն ապահովելու նպատակով, համապատասխան դիտակետերում իրականացվել են հաճախականացված դիտարկումներ, իսկ Ծառայության համապատասխան բաժնի կողմից պարբերաբար տրամադրվել է տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:


Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան, Որոտան-Արփա ջրատարները և Սևանա լիճը) 151 դիտակետ:

Մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:


Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

2024 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 35%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 23%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 31%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2023-2024 թվականներին



2024 թվականին ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը (դիտակետերի ընդհանուր թիվ՝ 6)




Գծապատկեր 64. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը

Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը: Գործող մաքրման կայաններում իրականացվում են միայն մեխանիկական մաքրում և կոմունալ-կենցաղային կեղտաջրերն առանց լիարժեք մաքրվելու թափվում են մակերևութային ջրային ռեսուրսներ: Ամբողջապես չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ ջրային ռեսուրսներ են տանում մեծ քանակությամբ ազոտային և ֆոսֆորային միացություններ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վեր գտնվող հատվածներում ջրի որակը համեմատաբար բարձր է, քան խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո, երբեմնապես կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետեր արտահոսելու հետևանքով, դիտվում է ջրի աղտոտման աստիճանի աճ: Արդյունքում՝ այդ հատվածներում ջրի որակը հիմնականում գնահատվում է որպես «միջակ» կամ «վատ» (3-րդ դասից 5-րդ դաս): Աղտոտվածությունը պայմանավորված է ջրում ամոնիումի, ֆոսֆատների, նիտրիտ իոնների, ինչպես նաև ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ: Հատկապես աղտոտված են Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Ախուրյան գետը՝ Ամասիա գյուղից, Գյումրի քաղաքից և Բազարան գյուղից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Վաղարշապատ քաղաքից հարավ, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Գետառ գետը՝

գետաբերանի հատվածում, Ծաղկաձոր գետը՝ Ծաղկաձոր քաղաքից հետո, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից հետո հատվածում:

Գծապատկեր 65. Ամռնիում իռնի կոնցենտրացիան կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված



հիմնական գետերում 2023-2024 թթ.

Գծապատկեր 66. Ֆոսֆատ իռնի կոնցենտրացիան կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում 2023-2024 թթ.


Հանքարդյունաբերության գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում են Ախթալա, Շնող, Աճանան (Նորաշենիկ), Կարճևան գետերը՝ գետաբերանի հատվածներում, որտեղ ջրի որակը գնահատվել է հիմնականում «վատ» (5-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 119 ստորերկրյա ջրաղբյուրում, որտեղ կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումը կատարվում է տարին 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, 55 դիտակետից, որոնցից յուրաքանչյուրում որոշվել է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, աղային ռեժիմի տարրեր, մետաղներ):


Ստորերկրյա ջրերի ազգային դիտացանցում ընդգրկված դիտակետերից 47 բնաղբյուրում իրականացվել են ջրի ծախսի, 70 դիտակետում՝ մակարդակի դիտարկումներ:

2023 թվականի համեմատությամբ 2024 թվականին ազգային ցանցում ընդգրկված 69 դիտակետերի 43%-ում դիտվել է ստորերկրյա ջրերի մակարդակների իջեցում, 57%-ում՝ բարձրացում: Ջրի ծախսի նվազում դիտվել է ընդգրկված 70 դիտակետերի 40%-ում, ծախսի աճ՝ 60%-ում:




Գծապատկեր 67. Ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի մակարդակների և ծախսերի փոփոխությունները 2023-2024 թթ.

Հանքայնացման բարձր կոնցենտրացիաներ դիտվել են Ակնաշեն (N199), Լուսազյուղ (N2022), Առափի (N2042) գյուղերի գրունտային ջրհորներում, Ակնաշեն (N2055), Հովտաշեն (N1523, N2053), Սուրենավան (N2067), Ջրահովիտ (N2007) գյուղերի և Մասիս քաղաքի (N1519) շատրվանող հորատանցքերում, Արտամետ գյուղի (N2083) և Արտաշատ քաղաքի (N2069) հորատանցքերում:




Գծապատկեր 68. Հանքայնացման բարձր մակարդակ ցուցաբերած բնաղբյուրներ 2024 թ.

Նիտրատ իոնի բարձր կոնցենտրացիաներ դիտվել են Մարմաշեն գյուղի (N2035) աղբյուրում, Հովտաշատ (N1523), Հովտաշեն (N2053) գյուղերի և Մասիս քաղաքի (N1519) շատրվանող հորատանցքերում, Արտաշատ քաղաքի (N2069) հորատանցքում և Առափի գյուղի (N2042) գրունտային հորատանցքում:




Գծապատկեր 69. Նիտրատ իոնի բարձր պարունակությամբ բնադրյուններ 2024 թ.

Սուլֆատ իոնի բարձր կոնցենտրացիաներ դիտվել են Մասիս քաղաքի (N1519), Զրահովիտ (N2007) և Սուրենավան (N2067) գյուղերի շատրվանող հորատանցքերի, Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում և Արտամետ գյուղի N2083 հորատանցքում:




Գծապատկեր 70. Սուլֆատ իոնի բարձր պարունակությամբ բնադրյուններ 2024 թ.

Մտորեկրյա քաղցրահամ ջրերի մակարդակների փոփոխությունները
2023 թվականին 2024 թվականի համեմատ




Մտորերկրյա քաղցրահամ ջրերում նիտրատների պարունակությունը / 2024 թվական



Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ՋԿՏ-ը ներառում է Դեբեդի և Աղստևի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային և հանքարդյունաբերական կեղտաջրերը:

2024 թվականին Հյուսիսային ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 21 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 38%-ում՝ 3-րդ դաս և 4-րդ դաս և 14%-ում՝ 5-



րդ դաս: Նախորդ տարվա համեմատ Դեբեդ գետի՝ Այրում քաղաքից վերև և Տաշիր գետի՝ Միխայելովկա գյուղից վերև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս, Գարգառ գետի ակունքում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս, Աղստև գետի՝ Դիլիջան քաղաքից ներքև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Այստեղ աղտոտված գետերից են Փամբակը, Ախթալան, Շնողը: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել:


Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 2 դիտակետում, որից մեկում՝ նաև որակի մոնիթորինգ:

2023 թվականին այս ջրավազանից ջրօգտագործումը կազմել է 39.73մլն մ³, որից 44.3%-ը բաժին է ընկնում մակերևութային, իսկ 53.7%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում խմելու (43.8%), ոռոգման (25.6%) և արտադրական (18.2%) նպատակներով:


Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

Հյուսիսային ՋԿՏ-ում քանակական մոնիթորինգն իրականացվել է 21 հիդրոլոգիական դիտակետում: 2024 թվականի ընթացքում գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը եղել են նորմայի սահմաններում կամ նորմայից բարձր և կազմել են նորմաների 95-130%-ը: Դեբեդ գետի Այրում դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 38.5 մ³/վ (նորման՝ 33.5 մ³/վ է), Աղստև-Իջևան դիտակետում՝ 11.4 մ³/վ (նորման՝ 9.83 մ³/վ է): 2024 թվականին Դեբեդ և Աղստև գետերի ավազաններում դիտված ելքերը բարձր են եղել նաև 2023 թվականի տարեկան միջին ելքերից: 2024 թվականին ջրի միջին ամսական ելքերը նույնպես գրեթե բոլոր ամիսներին նորմաներից բարձր են եղել: Դեբեդ-Այրում դիտակետում բացառությամբ ապրիլ և հունիս ամիսների, մնացած բոլոր ամիսներին ամսական ելքերը գերազանցել են նորմաները՝ կազմելով նորմայի մինչև 155%-ը (մայիսին): Աղստև-Իջևան հիդրոլոգիական դիտակետում նույնպես հիմնականում ամսական նորմաները բացառությամբ առանձին ամիսների գերազանցել են նորման՝ կազմելով մինչև նորմայի 156%-ը (հոկտեմբերին):



Գծապատկեր 71. 2024 թվականին դիտված ջրի տարեկան միջին ելքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին ելքերի հետ



Գծապատկեր 72. 2024 թվականի ջրի միջին ամսական ելքերը նորմաների համեմատ

Դերեդ և Աղստն գետերի ավազաններում դիտված հեղեղումները

Մայիսի 24-26-ին հանրապետության ողջ տարածքում դիտվել են ինտենսիվ անձրևներ, որոնց առավելագույն քանակը գրանցվել է մայիսի 25-ի երեկոյան ժամերին և մայիսի 25-ի լույս 26-ի գիշերը: Ինտենսիվ տեղումներ են դիտվել Լոռի-Տավուշ հատվածում 40-55 մմ, որը կազմում է ամսական նորմայի 40-60%-ը: Շարունակաբար դիտված ինտենսիվ տեղումներով պայմանավորված Դերեդ և Աղստն գետերի ավազաններում դիտվել են ջրի մակարդակների կտրուկ բարձրացումներ, նախորդ օրվա մակարդակի համեմատ ավելի քան 2 մետրով բարձր, որի հետևանքով հեղեղվել են շրջակա ափամերձ տարածքները, զգալի վնաս պատճառելով բնակավայրերի առանձին հատվածների և մարդկային կորուստների հանգեցրել: Դիտակետերում ջրի մակարդակի զգալի բարձրացումներ գրանցվել են մայիսի 26-ի գիշերը և առավոտյան:

Որակական մոնիթորինգ

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև, Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Սպիտակ քաղաքից ներքև հատվածում՝ ամոնիում, նիտրատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր լուծված աղերով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ ամոնիում, նիտրատ իոններով և ընդհանուր լուծված աղերով: Վանաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դերեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ «անբավարար» (4-րդ դաս)։ Այրում քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված մոլիբդենով և կախության չոր նյութերով, սահմանի մոտ հատվածում՝ կախության չոր նյութերով:

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով, Մարատովկա գյուղից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով և կախության չոր նյութերով:

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կախության չոր նյութերով:

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, սուլֆատ իոնով և կախության չոր նյութերով:


Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Շնող գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված պղնձով, մոլիբդենով, սուլֆատ իոնով և կախության չոր նյութերով:


Աղստն գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։ Դիլիջան քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ երկաթով և ֆերիլիումով, Դիլիջան քաղաքից ներքև հատվածում գետի

ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ իոններով, երկաթ. և կախութային չոր նյութերով:


Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Վահան գյուղից վերև՝ պայմանավորված երկաթով, բերիլիումով և ալյումինով, գետաբերանի հատվածում՝ երկաթով, բարիումով և բերիլիումով:




Գծապատկեր 73. Փամբակ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.




Գծապատկեր 74. Դեբեդ գետի ջրում մոլիբդենի կոնցենտրացիան 2023-2024 թթ.



Գծապատկեր 75. Ախթալա գետի ջրում պղնձի կոնցենտրացիան 2023-2024 թթ.



Գծապատկեր 76. Շնող գետի ջրում մոլիբդենի կոնցենտրացիան 2023-2024 թթ.




Գծապատկեր 77. Շնող գետի ջրում պղնձի կոնցենտրացիան 2023-2024 թթ.


Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվել է 2 բնադրյություն: 2024 թվականին ծախսերի բարձր ցուցանիշները N2058 աղբյուրում դիտվել են մայիս-հունիս ամիսներին, իսկ ցածր՝ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: N2059 դիտակետում ծախսը ավելացել է հունիս-օգոստոս ամիսներին, նվազել է հունվար-ապրիլ և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ջրի ծախսը N2058 բնադրյություն տատանվել է 0.39-1.05 լ/վ, իսկ N2059 բնադրյություն՝ 0.05-0.24 լ/վ սահմաններում: Ջրերի ջերմաստիճանները տատանվել են համապատասխանաբար 11.87-13.28°C և 10.30-12.33°C սահմաններում:



Գծապատկեր 78. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրություններում ջրի ծախսը 2023-2024թթ.



Գծապատկեր 79. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրությունների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.


Որակական մոնիթորինգ

Որակական մոնիթորինգն իրականացվել է 1 դիտակետում: Հաղարծին գյուղի N2058 դիտակետում հանքայնացումը տատանվել է 0.59-0.68գ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիան՝ 18.5-19.0մգ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիան՝ 21.9-22.9մգ/լ, քլորիդ իոնի կոնցենտրացիան՝ 6.1-8.1մգ/լ, պղնձի կոնցենտրացիան՝ 0.0004-0.0007-մգ/լ, արսենի կոնցենտրացիան՝ 0.00205-0.00215մգ/լ, կապարի կոնցենտրացիան՝ 0.0001մգ/լ սահմաններում: Նշված ցուցանիշների կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախտորյանի ՋԿՏ-ը ներառում է Ախտորյանի և Մեծամորի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

2024 թվականին Ախտորյանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 11 դիտակետում, որոնցից 18%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 36%-ում՝ 3-րդ դաս և 46%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Ախտորյան գետի՝ Գյումրի քաղաքից վերև և Բազարան գյուղից ներքև դիտակետերում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Աշոցք գետի՝ Մուսայելյան գյուղից վերև և գետաբերանի դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս և 4-րդ դասից 3-րդ դաս համապատասխանաբար, Մեծամոր գետի՝ Ռանչպար գյուղից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Աղտոտված գետերից են Ախտորյանը, Մեծամորը և Կարկաչունը: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել:




Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որից 19-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2023 թվականին այս ջրավազանից ջրօգտագործումը կազմել է 675.8 մլն մ³, որից 70.8%-ը բաժին է ընկնում մակերևութային ջրերին, 29.1%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (80.4%), ձկնաբուծության (15.1%), արտադրական (2.2%) և խմելու (2.3%) նպատակներով:


Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվել է 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Ախտորյան-Ախտրիկ հիդրոլոգիական դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 8.38 մ³/վ (բազմամյա միջինը՝ 7.38 մ³/վ է), Մեծամոր-Մեծամոր դիտակետում՝ 2.73 մ³/վ (բազմամյա միջինը՝ 20.2 մ³/վ է): 2024 թվականի Ախտորյանի ավազանում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը բարձր են եղել 2023 թվականի տարեկան միջին ելքերից, իսկ Մեծամորի ավազանում՝ շատ քիչ են տարբերվել 2023 թվականի տարեկան միջին ելքերից: 2024 թվականին Ախտորյան-Ախտրիկ հիդրոլոգիական դիտակետում ջրի միջին ամսական ելքերը հիմնականում ցածր են եղել նորմաններից, մայիս և հուլիս ամիսներին եղել են նորմայի սահմաններում, իսկ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին կրկնակի կամ եռակի անգամ գերազանցել են նորման, որը պայմանավորված է եղել Արփիլիճ ջրամբարից ջրի բացթողնմամբ:



Գծապատկեր 80. Ջրի տարեկան միջին ելքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին ելքերի հետ



Գծապատկեր 81. 2024 թվականի ջրի միջին ամսական ելքերը նորմաների համեմատ


Որակական մոնիթորինգ

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Ամասիա գյուղից ներքև և Գյումրի քաղաքից ներքև հատվածներում՝ «վատ» (5-րդ դաս). Ամասիա գյուղից ներքև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Գյումրի քաղաքից ներքև հատվածում՝ երկաթով և կախութային չոր նյութերով: Գյումրի քաղաքից վերև և Բազարան գյուղից ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Գյումրի քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, արսենով, մոլիբդենով, երկաթով և կախութային չոր նյութերով, Բազարան գյուղից ներքև հատվածում՝ արսենով, մոլիբդենով, մանգանով, երկաթով, ընդհանուր լուծված աղերով և կախութային չոր նյութերով:

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, երկաթով և բորով:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով և ընդհանուր ֆոսֆորով:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածում՝ լուծված թթվածնով և ամոնիում իոնով: Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, թթվածնի քիմիական պահանջարկով, ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, արսենով, մանգանով, երկաթով, բորով և ընդհանուր ֆոսֆորով:



Գծապատկեր 82. Միտության գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Քանակական մոնիթորինգ



Քանակական մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: 2024 թվականի ընթացքում գրունտային ջրհորներում ջրի մակարդակը տատանվել է 0.36-1.80 մ սահմաններում: Մակարդակի առավելագույն տատանումը դիտվել է Առափի գյուղի N2042 դիտակետում՝ 32%, իսկ նվազագույնը՝ Ակնաշենի N199 դիտակետում՝ 15%: Դիտարկվող ժամանակահատվածում N199, N2020, N2022 գրունտային ջրհորներում նկատվել է մակարդակի բարձրացման միտում: N2042 և N2043 գրունտային ջրհորներում ջրի մակարդակը իջել է: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին գրունտային ջրհորների մակարդակները բարձրացել են միջինը 0.03-0.22 մետրով:

Ակնաշեն (N198), Տարոնիկ (N2018), Ապագա (N2057) և Այգեշատ (N2104) գյուղերի հորատանքերում ջրի մակարդակը տարվա ընթացքում աստիճանաբար բարձրացել է: N2024, N2025, N2026, N2103, N2080, N2082 դիտակետերում մակարդակը եղել է կայուն՝ աննշան տատանումներով: Մակարդակի իջեցման միտում դիտվել է N105, N152, N192, N2083 հորատանքերում՝ 2-75% տատանումներով:


Ախուրյանի ՋՏԿ-ի Գյումրիի N2029, N2031, Մարմաշենի N2032, N2035, Աշոցքի N2038 և Յոդամարգի N2077 բնաղբյուրներում նկատվել է ծախսի բարձրացում: Կայուն ծախս դիտվել է Գյումրի քաղաքի N2030 և Աշոցք գյուղի N2040, N2041 բնաղբյուրներում: Գյումրի քաղաքի N2037, Մարմաշեն (N2032) և Աշոցք (N2039) գյուղերի դիտակետերում դիտվել է ջրի ծախսի նվազում:




Գծապատկեր 83. Ախտորյանի ՋԿՏ-ի քնադրյուններում ջրի ծախսը 2023-2024թթ.




Գծապատկեր 84. Ախտորյանի ՋԿՏ-ի Հատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.




Գծապատկեր 85. Ախտորյանի ՋԿՏ-ի Հատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.



Գծապատկեր 86. Ախտության ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի ծախսը 2023-2024թթ.



Գծապատկեր 87. Ախտության ՋԿՏ-ի գրունտային ջրհորների ջրի մակարդակը 2023-2024թթ.




Գծապատկեր 88. Ախտության ՋԿՏ-ի բնադրությունների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ

Որակական մոնիթորինգ


Որակի մոնիթորինգն իրականացվել է 19 դիտակետում: Հանքայնացման արժեքները գտնվել են 0.01-1.9գ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիան՝ 0.05-100.6մգ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիան՝ 1.21-853.9մգ/լ, արսենի կոնցենտրացիան՝ 0.0009-0.15մգ/լ տիրույթում:

Հանքայնացման գերազանցումներ ՍԹԿ-ից դիտվել են Ակնաշենի N199, Լուսազյուղի N2022 և Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորներում, Ակնաշեն N2055 և Արտանետ գյուղերի N2083 հորատանցքում:


Նիտրատ իոնի կոնցենտրացիայի գերազանցումներ ՍԹԿ-ից դիտվել են Մարմաշեն գյուղի N2035 աղբյուրում և Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում: Սուլֆատ իոնի կոնցենտրացիայի ՍԹԿ-ից գերազանցումներ դիտվել են Արտանետ գյուղի N2083 հորատանցքում և Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում: Արսենի կոնցենտրացիայի ՍԹԿ-ից գերազանցումներ դիտվել են Լուսազյուղի N2022 գրունտային ջրհորում: Պղնձի և կապարի կոնցենտրացիաները գտնվել են համապատասխանաբար 0.0002- 0.0256մգ/լ, 0.0001-0.0005մգ/լ տիրույթներում և չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 89. Ախտրյանի ՋԿՏ-ի ի բնաղբյուրներում հանքայնացումը, 2024թթ.



Գծապատկեր 90. Ախտրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան, 2024թթ.



Գծապատկեր 91. Ախտրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում սուլֆատ իոնի կոնցենտրացիան, 2024թ.

Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

Հրագրանի ՋԿՏ-ը ներառում է Հրագրանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

2024 թվականին Հրագրանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 21 դիտակետում, որոնցից 14%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 33%-ում՝ 3-րդ դաս, 24%-ում՝ 4-րդ դաս, 29%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Քասախ գետի՝ Ապարան քաղաքից վերև և ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս և 5-րդ դասից՝ 4-րդ դաս համապատասխանաբար:

Աշտարակ քաղաքից վերև և ներքև

դիտակետերում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Գեղարոտ գետի՝ գետաբերանի դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Հրագրան գետի՝ Գեղամավան գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Մարմարիկ գետի՝ Հանքավան գյուղից վերև դիտակետում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Տանձաղբյուր գետի՝ Ծաղկաձոր քաղաքից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրագրանը, Գետառը և Ծաղկաձորը:

Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ:


2023 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 1126.4մլն մ³, որից 43.2%-ը բաժին է ընկնում մակերևութային, 56.6%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47%), ոռոգման (41.6%), արտադրական (4.2%) և խմելու (5.9 %) նպատակներով:

Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ


Քանակական մոնիթորինգն իրականացվել են 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: 2024 թվականի ընթացքում գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը կազմել են բազմամյա միջին արժեքների 70-115%-ը: Հրագրան-Հրագրան դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 7.41 մ³/վ (բազմամյա միջինը՝ 7.77 մ³/վ է), Քասախ-Վարդենիս դիտակետում՝ 0.85 մ³/վ (բազմամյա միջինը՝ 1.21 մ³/վ է), Քասախ-Աշտարակ դիտակետում՝ 3.85 մ³/վ (բազմամյա միջինը՝ 3.43 մ³/վ է): 2024 թվականին Հրագրան և Քասախ գետերի ավազաններում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը 2023 թվականի տարեկան միջին ելքերից բարձր են եղել:

2024 թվականին ջրի միջին ամսական ելքերը եղել են հիմնականում նորմաներից ցածր, կամ նորմայի սահմաններում: Առանձին ամիսներին նորմայից բարձր ելքերը պայմանավորված են եղել հոսքի կարգավորմամբ՝ Քասախ-Աշտարակ հիդրոլոգիական դիտակետում, Հրագրան-Հրագրան, Մարմարիկ-Աղավնաձոր հիդրոլոգիական դիտակետերում՝ Մարմարիկի ջրամբարից ջրի բացթողնմամբ:




մ³/վ

Ջրի ելքը



Գծապատկեր 92. Ջրի տարեկան միջին ելքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին ելքերի հետ



Գծապատկեր 93. 2024 թվականի ջրի միջին ամսական ելքերը նորմաների համեմատ

Որակական մոնիթորինգ

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ապարան քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված բերիլիումով, Ապարան քաղաքից ներքև հատվածում՝ ամոնիում իոնով և ընդհանուր ֆոսֆորով, Աշտարակ քաղաքից վերև և ներքև և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Աշտարակ քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև հատվածում՝ ֆոսֆատ իոնով, վանադիումով, երկաթով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ նիտրիտ, նիտրատ, ֆոսֆատ իոններով, վանադիումով, երկաթով, նատրիումով և ընդհանուր ֆոսֆորով:

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, կոբալտով և երկաթով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրատ իոններով, մանգանով և երկաթով:


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում գնահատվել է «անբավարար» (4 -րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Արգել գյուղից ներքև հատվածում՝ պայմանավորված արսենով և բարիումով, Արգնի ՀԷԿ-ից վերև՝ արսենով: Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ ամոնիում իոնով, Գեղանիստ գյուղի մոտ հատվածում՝ նիտրիտ իոնով: Երևանյան լճի մուտքի մոտ հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և ընդհանուր ֆոսֆորով:


Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, վանադիումով, երկաթով, բարիումով և ալյումինով, Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:




Գծապատկեր 94. Քսասախ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.




Գծապատկեր 95. Քսասախ գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.




Գծապատկեր 96. Հրազդան գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը 2023-2024 թթ.




Գծապատկեր 97. Հրազդան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 98. Հրազդան գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.






Գծապատկեր 99. Գետառ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.




Ստորերկրյա քաղցրահամ ջրեր Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Հրազդան ՋԿՏ-ի N246, N1297, N1832, N2051, N2105 և N2107 բնաղբյուրներում 2024թ. ծախսի բարձր արժեքները նկատվել են մայիս-սեպտեմբեր ամիսներին, իսկ ցածր արժեքները՝ հունվար-մարտ, հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ծախսի տատանումները կազմել են 27.5-99%: Կայուն ծախս դիտվել է Երևան քաղաքի N755 աղբյուրում: Ծախսը համեմատաբար կայուն է եղել նաև Կարբի (N1636) և Բյուրական (N2108) գյուղերի դիտակետերում՝ 1.20-1.95 լ/վ տատանումներով: Հրազդան ՋԿՏ-ի Ջրահովիտ (N78), Գրիբոյեդով (N2056), Կարբի (N2089) գյուղերի հորատանցքերում նկատվում է մակարդակների իջեցում: N2004, N2005, N2085, N2087 և N2088 հորատանցքերում նկատվում է մակարդակների բարձրացման միտում: Ծախսերի և մակարդակների աննշան աճ է դիտվում N1519, N1536, N2003, N2007 և N2008 շատրվանող հորատանցքերում: Նիգավան գյուղի N2011 գրունտային ջրհորի մակարդակը զգալի բարձրացել է մայիս-հունիս ամիսներին, մինչդեռ Խորոնք գյուղի N2023 ջրհորում մակարդակի տատանումները աննշան են: Նիգավան գյուղի N2010 ջրհորի ջրի մակարդակը մայիս-դեկտեմբեր ամիսներին զգալի բարձրացել է:







Գծապատկեր 102. Հրազդանի ՋԿՏ-ի չհատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.




Գծապատկեր 103. Հրազդանի ՋԿՏ-ի չհատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2023-2024թթ.



Գծապատկեր 104. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի ծախսը 2023-2024թթ.



Գծապատկեր 105. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների ջրի մակարդակը 2023-2024թթ.




Գծապատկեր 106. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյալների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.


Որակական մոնիթորինգ

Որակական մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում: Հանքայնացման արժեքները գտնվել են 0.08-1.7գ/լ տիրույթում: Նիտրատ իոնի կոնցենտրացիան տատանվել է 6.6-64.2 մգ/լ, իսկ սուլֆատ իոնին՝ 8.4-595.9մգ/լ տիրույթներում: Հանքայնացման արժեքը գերազանցել է ՍԹԿ-ն Մասիս քաղաքի N1519, Դաշտավան գյուղի N1523, Ջրահովիտ գյուղի N2007 և Հովտաշեն գյուղի N2053 հորատանցքերում: Նիտրատ իոնի կոնսենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն N1519, N1523 և N2053, իսկ սուլֆատ իոնին՝ N1519 և N2007


դիտակետերում: Քլորիդ իոնի կոնցենտրացիաները գտնվել են 3.9-305.2 մգ/լ տիրույթում և չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Պղնձի, կապարի և արսենի կոնցենտրացիաները գտնվել են համապատասխանաբար՝ 0.0003- 0.003 մգ/լ, 0.0001-0.00022 մգ/լ և 0.00047-0.047 մգ/լ տիրույթներում և չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 107. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուններում հանքայնացման փոփոխությունը 2024թ.



Գծապատկեր 108. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուններում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.



Գծապատկեր 109. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուններում սուլֆատ իոնի կոնցենտրացիան 2024թ.

Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Սևանի ՋԿՏ-ը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք, Գավառագետ գետերի գետավազանները և Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային, գյուղատնտեսական և արդյունաբերական կեղտաջրերը:

2024 թվականին Սևանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 16 դիտակետում, որոնցից 12%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 50%-ում՝ 3-րդ դաս, 13%-ում՝ 4-րդ դաս և 25%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Ձկնագետ գետի՝ Մեյրոնովկա գյուղից վերև դիտակետում ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Մասրիկ գետի գետաբերանում ջրի որակը 5-րդ դասից դարձել է 4-րդ դաս, Սոթք գետի գետաբերանում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 5-րդ դաս, Վարդենիս գետի՝ Վարդենիկ գյուղից վերև դիտակետում ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Մարտունի գետի՝ Գեղիովիտ գյուղից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Արգիճի գետի՝ Լեռնահովիտ գյուղից վերև և Գավառագետ գետի՝ Ծաղկաշեն գյուղից վերև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս, Շողվազ գետի գետաբերանում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել:


Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որից 8-ում՝ նաև որակի մոնիթորինգ:


2023 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 54.35 մլն մ³, որից 30.2%-ը բաժին է ընկնում մակերևութային, 69.5%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (25%), ոռոգման (27.3%), խմելու (45.6%), և արտադրական (1.5%) նպատակներով:

Մակերևութային ջրեր


Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվում է 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: 2024 թվականի ընթացքում գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը մոտ են եղել բազմամյա միջին արժեքներին և կազմել են դրանց 85-125%-ը: Արգիճի-Գետաշեն դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 4.68 մ³/վ (բազմամյա միջինը՝ 5.44 մ³/վ է), Գավառագետ-Նորատուս դիտակետում՝ 3.04 մ³/վ (բազմամյա միջինը՝ 3.50 մ³/վ է), Ձկնագետ-Ծովագյուղ դիտակետում՝ 1.35 մ³/վ (բազմամյա միջինը՝ 1.09 մ³/վ է): 2024 թվականին Սևանա լճի ավազանի գետերում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը 2023 թվականի տարեկան միջին ելքերից բարձր են եղել: 2024 թվականին ջրի միջին ամսական ելքերը ցածր են եղել կամ մոտ ամսական նորմաներին, որոշ գետերում ջրի ամսական ելքերը հիմնականում ապրիլ, մայիս և հունիս ամիսներին գերազանգել են նորմաները:





Գծապատկեր 110. Ջրի տարեկան միջին ելքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին ելքերի հետ



Գծապատկեր 111. 2024 թվականի ջրի միջին ամսական ելքերը նորմաների համեմատ

Որակական մոնիթորինգ

Ձկնագետ գետի ջրի որակը Մեմյոնովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված բերիլիումով:

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով և ծարիրով:

Սոթք գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ծարիրով:

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով:

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, ալյումինով և կախութային չոր նյութերով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված բարիումով, ալյումինով, մանգանով և սուլֆատ իոնով, գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ, սուլֆատ իոններով, բարիումով, ալյումինով, մանգանով, ընդհանուր ֆոսֆորով և ընդհանուր լուծված աղերով:

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով:

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ընդհանուր լուծված աղերով:

Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ, քլորիդ իոններով, մոլիբդենով, վանադիումով, նատրիումով, ընդհանուր ֆոսֆորով և ընդհանուր լուծված աղերով:

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով:

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, մոլիբդենով, մանգանով և ալյումինով:




Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ


Քանակական մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ակունք (N1053) և Խաչաղբյուր (N2093) գյուղերի բնաղբյուրներում 2024թ. ընթացքում ջրի ծախսը աճել է, տատանումները կազմել են 30,4% և 75%: Գավառ քաղաքի N2014 և Լիճք գյուղի N2100 դիտակետերում հունվար-ապրիլ և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին դիտվել են ջրի ծախսի ցածր արժեքներ, իսկ մայիս-օգոստոս ամիսներին ծախսը ավելացել է՝ զգալի տատանումներով: Աղբերք գյուղի N2091 աղբյուրի ծախսը եղել է կայուն՝ աննշան տատանումներով: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին բնաղբյուրների ջրի ծախսը ավելացել է միջինը 1-93%-ով:

Ծախսի և մակարդակի համեմատաբար կայուն արժեքներ դիտվել են Վարդենիս քաղաքի N1810, N1811 և Դարանակ բնակավայրի N2095 շատրվանոց հորատանցքերում:


Վարդենիս քաղաքի N1809 շատրվանոց հորատանցքում դիտվել է ծախսի և մակարդակի նվազում, իսկ N2090 դիտակետում նշված պարամետրերի արժեքները աճել են: N1812, N2013 դիտակետերում 2024թ. ընթացքում մակարդակի արժեքները համեմատաբար կայուն են, չրի ծախսը նվազել է, տատանումները կազմել են համապատասխանաբար 17% և 94%: Սևանի ՋԿՏ-ի N2101 չշատրվանոց հորատանցքում նախորդ տարվա համեմատ մակարդակը բարձրացել է միջինը 8.5 %-ով:



Գծապատկեր 113. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակը 2023-2024թթ.




Գծապատկեր 114. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսը 2023-2024թթ.




Գծապատկեր 115. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուրների ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.

Որակական մոնիթորինգ

Որակական մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Հանքայնացման արժեքները գտնվել են 0.09-0.4գ/լ տիրույթում, սուլֆատ իոնի կոնցենտրացիան՝ 1.5-26.3 մգ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիան՝ 3.4-42.7մգ/լ, քլորիդ իոնի կոնցենտրացիան՝ 0.7-26.7մգ/լ տիրույթում, պղնձի և արսենի կոնցենտրացիաները գտնվել են համապատասխանաբար 0.00012-0.014 մգ/լ և 0.0006-0.0085 մգ/լ տիրույթներում, իսկ կապարի կոնցենտրացիան կազմել է 0.0001մգ/լ բոլոր դիտակետերում: Դիտված բոլոր կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 116. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում հանքայնացման փոփոխությունը 2024թ.



Գծապատկեր 117. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք


Արարատյան ՋԿՏ-ը ներառում է Ագատի, Արփայի և Վեդիի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը և գյուղատնտեսությունը:

2024 թվականին Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 12 դիտակետում, որոնցից 75%-ում ջրի որակը գնահատվել է 3-րդ դաս, 17%-ում՝ 4-րդ դաս և 8%-ում՝ 5-րդ դաս:

Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Վեդի գետի՝ Ուրցաձոր գյուղից վերև դիտակետում ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Արփա գետի՝ Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև դիտակետերում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Դարբ գետի՝ գետաբերանում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս և Եղեգիս գետի՝ Գետիկվանք գյուղից վերև ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել:

Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որից 10-ում՝ նաև որակի մոնիթորինգ:


2023 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 285.9մլն մ³, որից 60.9%-ը բաժին է ընկնում մակերևութային ջրերին, 38.7%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (63.9%), ձկնաբուծության (26.4%), խմելու (6%) և արտադրական (3.7%) նպատակներով:




Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվում է 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ագատի ջրամբար): 2024 թվականի ընթացքում Արարատյան ՋԿՏ-ի գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը եղել են նորմաների 67% (Ագատ-Գառնի դիտակետ) -130%-ի (Վեդի-Ուրցաձոր) սահմաններում: Ագատ-Գառնի հիդրոլոգիական դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 3.14 մ³/վ (բազմամյա միջինը՝ 4.72 մ³/վ է), Վեդի-Ուրցաձոր դիտակետում՝ 2.12 մ³/վ (բազմամյա միջինը՝ 1.64 մ³/վ է), Արփա-Ջերմուկ դիտակետում՝ 5.22 մ³/վ (բազմամյա միջինը՝ 5.21 մ³/վ է): 2024 թվականին Արարատյան ՋԿՏ-ի գետերում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը 2023 թվականի տարեկան միջին ելքերից բարձր են եղել: 2024 թվականին ջրի միջին ամսական ելքերը Ագատ-Գառնի, Արփա-Ջերմուկ հիդրոլոգիական դիտակետում գրեթե բոլոր ամիսներին ցածր են եղել նորմաներից, իսկ ամսական ջրի ելքերը Արփա-Արենի, Վեդի-Ուրցաձոր հիդրոլոգիական դիտակետերում հիմնականում բարձր են եղել նորմաներից:



Գծապատկեր 118. Ջրի տարեկան միջին ելքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին ելքերի հետ



Գծապատկեր 119. 2024 թվականի ջրի միջին ամսական ելքերը նորմաների համեմատ

Որակական մոնիթորինգ

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով և կախութային չոր նյութերով, Արարատ քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Վայք քաղաքից վերև՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով և ալյումինով, Վայք քաղաքից ներքև՝ մոլիբդենով, մանգանով, երկաթով և բարիումով, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով, բարիումով և ալյումինով:

Դարբ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով, բարիումով և ալյումինով:



Հերիեր գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով:

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, Շատին գյուղից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, մոլիբդենով, մանգանով, երկաթով և բարիումով:


Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ


Քանակական մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: 2024 թվականին Ագարակաձոր (N785), Գառնի (N2047) և Զեդեա (N2050) գյուղերի աղբյուրներում ջրի ծախսը, աննշան տատանումներով, եղել է կայուն: N502, N2045, N2046, N2048, N2060 աղբյուրներում ջրի ծախսը ավելացել է, իսկ N787 և N845 դիտակետերում նվազել՝ զգալի տատանումներով: Դալար գյուղի N2062 և Արտաշատ քաղաքի N2063 շատրվանող հորատանցքերում ջրի ծախսն ու մակարդակը նվազել են: Սուրենավան գյուղի N2067 շատրվանող հորատանքի ջրի ծախսը ավելացել է հունիս-դեկտեմբեր ամիսներին: Չշատրվանող հորատանցքերի մակարդակի բարձրացում դիտվել է Միգավետ (N2052), Եղեգնավան (N2065), Լուսառատ (N2074) գյուղերի դիտակետերում: N2064, N2069, N2076 հորատանցքերում ջրի մակարդակները իջել է մայիս-դեկտեմբեր ամիսներին: Արարատյան ԶԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակը հիմնականում բարձրացել է՝ 12-86% առավելագույն տատանումներով:




Գծապատկեր 120. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյունների ջրի ծախսը 2023-2024թթ.



Գծապատկեր 121. Արարատյան ՋԿՏ-ի չհատրվանող հորատանցքերում ջրի մակարդակը 2023-2024թթ.



Գծապատկեր 122. Արարատյան ՋԿՏ-ի չհատրվանող հորատանցքերում ջրի մակարդակը 2023-2024թթ.



Գծապատկեր 123. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոցի հորատանցքերում ջրի ծախսը 2023-2024թթ.



Գծապատկեր 124. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակը 2023-2024թթ.




Գծապատկեր 125. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.

Որակական մոնիթորինգ


Որակական մոնիթորինգն իրականացվել է 10 դիտակետում: Հանքայնացման արժեքները գտնվել են 0.1-4.8գ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիան՝ 2.5-612.7մգ/լ, քլորիդ իոնի կոնցենտրացիան՝ 2.5-619.1մգ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիան՝ 0.05-47.3մգ/լ տիրույթներում: Հանքայնացման արժեքի ՍԹԿ-ից գերազանցում դիտվել է Արտաշատ

քաղաքի N2069 և Սուրենավան գյուղի N2067 հորատանցքերում, սուլֆատ և քլորիդ իոնների կոնցենտրացիաների ՍԹԿ-ներից գերազանցումներ՝ Սուրենավան գյուղի N2067 դիտակետում, նիտրատ իոնի կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն Արտաշատ քաղաքի N2069 դիտակետում: Պղնձի, արսենի և կապարի կոնցենտրացիաները գտնվել են համապատասխանաբար՝ 0.0003-0.011մգ/լ, 0.001-0.027 և 0.0001-0.00014մգ/լ տիրույթներում և չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Արարատյան ՋԿՏ




Գծապատկեր 126. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյուններում հանքայնացման փոփոխությունը 2024թ.



Գծապատկեր 127. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյուններում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.



Գծապատկեր 128. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյություններում քլորիդ իոնի կոնցենտրացիան 2024թ.




Գծապատկեր 129. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյություններում սուլֆատ իոնի կոնցենտրացիան 2024թ.

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ը ներառում է Մեղրիի, Ողջիի, Գեղիի, Միսիանի, Որոտանի և Գորիսի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերը:

2024 թվականին Հարավային ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 18 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 28%-ում՝ 3-րդ դաս, 11%-ում՝ 4-րդ դաս և 56%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Գեղի գետի՝ Աջաբաջ գյուղից վերև և գետաբերանի դիտակետերում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 2-րդ դաս և 4-րդ դասից 3-րդ դաս համապատասխանաբար, Որոտան գետի՝ Միսիան քաղաքից ներքև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 5-րդ դաս, Միսիան գետի՝ Արևիս գյուղից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել:




Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որից 4-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2023 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 79.3մլն մ³, որից 91.2%-ը բաժին է ընկնում մակերևութային, իսկ 8.7%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում արտադրական (72%), ոռոգման (7.2%), խմելու (20.5%) և ձկնաբուծության (0.4%) նպատակներով:


Մակերևութային ջրեր

Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվել է 9 դիտակետում: 2024 թվականի ընթացքում Հարավային ՋԿՏ-ի գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը կազմել են բազմամյա միջին արժեքների 78%-ից (Որոտան-Տաթև ՀԷԿ)-145%-ը (Մեղրիգետ-Մեղրի), իսկ Որոտան-Որոտան հիդրոլոգիական դիտակետում կազմել է նորմայի 33%-ը: Մեղրիգետ-Մեղրի հիդրոլոգիական դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 4.30 մ3/վ (բազմամյա միջինը՝ 2.95 մ3/վ է), Ողջի-Կապան դիտակետում՝ 8.32 մ3/վ (բազմամյա միջինը՝ 6.65 մ3/վ է), Որոտան-Գորայք դիտակետում՝ 5.06 մ3/վ (բազմամյա միջինը՝ 3.84 մ3/վ է): 2024 թվականին Հարավային ՋԿՏ-ի գետերում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը 2023 թվականի տարեկան միջին ելքերից բարձր են եղել: 2024 թվականին ջրի միջին ամսական ելքերը դիտակետերի մեծ մասում հիմնականում նորմաներից բարձր են եղել, սակայն առանձին դիտակետերում ցածր են եղել նորմաներից, օրինակ Որոտան-Որոտան դիտակետում բոլոր ամիսներին ցածր են եղել նորմաներից:



Գծապատկեր 142. Ջրի տարեկան միջին ելքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին ելքերի հետ



Գծապատկեր 143. 2024 թվականի ջրի միջին ամսական ելքերը նորմաների համեմատ

Որակական մոնիթորինգ

Մեղրի գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։ Մեղրի քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ մանգանով, կոբալտով և երկաթով։

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և երկաթով։

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև և Սիսիան քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Գորայք գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված մանգանով, երկաթով, բարիումով և ծարիրով, Սիսիան քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, մանգանով, վանադիումով և երկաթով։ Սիսիան քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով։


Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և մանգանով։

Որոտան-Արփա ջրատարի թունելի ելքի հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով։


Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը։ Գորայք (N529) և Անգեղակոթ. (N1323) գյուղերի բնաղբյուրներում 2024 թվականին ջրի ծախսը ավելացել է, տատանումները կազմել են 29-67%։ Ծախսի կայուն ցուցանիշներ դիտվել են Սպանդարյան գյուղի N537 և Գորիս քաղաքի N899 դիտակետերում։ Ջրի ծախսի նվազեցում նկատվում է Շաքիի N532, Անգեղակոթի N1175 և Գորիս քաղաքի N1399 բնաղբյուրներում, որտեղ տատանումները կազմել են 24-30%։




Գծապատկեր 130. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի ծախսը 2023-2024թթ.




Գծապատկեր 131. Հարավային ՋԿՏ-ի բնադրություններում ջրի միջին ամսական ջերմաստիճանները 2024թ.

Որակական մոնիթորինգ

Որակական մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում: Այս ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացման արժեքները գտնվել են 0.08-0.23գ/լ տիրույթում, քլորիդ իոնի կոնցենտրացիան՝ 1.1-3.1մգ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիան՝ 1.5-6.2մգ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիան՝ 2.6-16.6 մգ/լ, պղնձի և արսենի կոնցենտրացիաները համապատասխանաբար՝ 0.0002-0.0018 մգ/լ և 0.0008-0.004 մգ/լ տիրույթներում, իսկ կապարի կոնցենտրացիան բոլոր դիտակետերում կազմել է 0.0001 մգ/լ: Նշված բոլոր ցուցանիշները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 132. Հարավային ՋԿՏ-ի բնադրություններում հանքայնացման փոփոխությունը 2024թ.



Գծապատկեր 133. Հարավային ՋԿՏ-ի բնադրություններում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2024թ.

Ջրամբարներ

Հինգ ջրամբարում (Ախուրյան, Արփի լիճ, Ապարան, Ազատ և Մարմարիկ) իրականացվում են քանակական մոնիթորինգ և ջրի որակական մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն քանակական մոնիթորինգ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակական մոնիթորինգ:

Քանակական մոնիթորինգ


2024 թվականի ընթացքում դիտարկվող հինգ ջրամբարներում ջրի առավելագույն լցվածությունը բավական բարձր է եղել: Ազատի և Մարմարիկի ջրամբարներում առավելագույն լցվածությունը կազմել է 100%, Ախուրյանի ջրամբարում 85%-ը, Արփիլիճ ջրամբարում՝ 94%, և միայն Ապարանի ջրամբարի առավելագույն լցվածությունը բավական քիչ է եղել և կազմել է 58%: Աղյուսակ 11-ում ներկայացված են ջրամբարների 2024 թվականին դիտված առավելագույն ծավալները և դրանք արտահայտված տոկոսներով ընդհանուր ծավալի նկատմամբ:

Աղյուսակ 9. Ջրամբարների ջրայլցվածությունը.


№	Ջրամբար	Տարողությունը, մլն.մ³	2024 թվականին ջրի առավելագույն դիտված	
			ծավալը, (մլն.մ³)	արտահայտված ընդհանուր ծավալի նկատմամբ, %
1	Ախուրյան	525	445.32	85
2	Արփի	105	98.6	94
3	Ապարան	91	52.86	58
4	Ազատ	70	69.01	99
5	Մարմարիկ	24	23.99	100

Որակական մոնիթորինգ

Արփի լիճ ջրամբարի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ)՝ պայմանավորված կախութային չոր նյութերով: Ախուրյանի ջրամբարի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջարկով, ընդհանուր ֆոսֆորով և կախութային չոր նյութերով, Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ իոններով և ընդհանուր ֆոսֆորով: Ապարանի, Ազատի և Կեչուտի ջրամբարների ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Գծապատկեր 134. Ջրամբարներում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 135. Ջրամբարներում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.

Արաքս գետ

Արաքս գետի 6 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները: Արաքս գետի 2 դիտակետում իրականացվել են հատակային նստվածքների ուսումնասիրություններ:

Սևանա լիճ

2024 թվականին քանակական մոնիթորինգն իրականացվել է Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևան թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): 2024 թվականի տարեկան հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի տարեկան ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 10. Սևանա լճի տարեկան հաշվեկշիռը, 2024թ.

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)	Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2023թթ.		
	Տարվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
ՍՈՒՏՔ				
Լիճը թափվող գետերով	680.79	505.9	759.6	1125.3
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը. այդ թվում ստորերկրյա ներհոսքը	185.15	19.8	192.2	311.5
Տեղումները լճի մակերևույթի վրա	579.5	337.6	501.1	802.3
Ստորերկրյա հոսք	94.2	48.4	79.8	106.7
Ընդամենը	1539.64	931.0	1469.2	2084.8
ԵԼՔ				
Հրազդան գետով	131.04	99.5	407.4	1644.2
Գոլորշացում լճի մակերևույթից	1062.3	916.2	1088.0	1371.4
Ստորերկրյա հոսք	14.4	5.40	13.4	20.0
Ընդամենը	1207.74	1080.4	1503.4	2614.0
Կուտակում (նվազում)	280.3	-1689.0	-43.3	907.3
Բացարձակ անկապք	51.60		1.00	
Հարաբերական անկապք %	3.35	0.20	3.33	17.0

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Տարվա առաջին օրը	1900.17	1275.372	37.7563
Տարվա վերջին օրը	1900.39	1277.464	38.0366
Միջին տարեկան	1900.42	1277.750	38.0748

Մակարդակի փոփոխությունը տարվա ընթացքում՝ 0.22մ

2024 թվականի ընթացքում գետերով ջրի մուտքը Սևանա լիճ կազմել է 680.79 մլն. մ³, որը կազմում է նորմայի 90%-ը, տեղումների քանակը լճի մակերևույթի վրա եղել է 579.5 մլն. մ³, որը կազմել է նորմայի 116%-ը, գոլորշացումը լճի մակերևույթից եղել է 1062.3 մլն. մ³, որը կազմել է նորմայի սահմաններում՝ 98%-ը:

2024 թվականի ընթացքում Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ մուտք գործած ջրի ծավալը (այդ թվում ջրատարով ստորերկրյա ներհոսքը) կազմել է 185.146 մլն. մ³, իսկ Սևանա լճից բացթողնված ջրի քանակը Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցքով կազմել է 131.038 մլն. մ³:

Արդյունքում, Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2024 թվականին դրական է եղել՝ 280.3 մլն. մ³ և տարեկան կտրվածքով լճի մակարդակը բարձրացել է 22 սմ-ով: Հաշվեկշռի հարաբերական անկապքը կազմել է 3.35%:

2024 թվականի հունվարի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.17 մ (նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 11սմ-ով), լճի մակերեսը 1275.372 կմ², լճի ծավալը 37.76 կմ³, իսկ տարեվերջին՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխանաբար՝ 1900.39 մ, 1277.464 կմ² և 38.04 կմ³: 2024 թվականի ընթացքում ամսական կտրվածքով լճի մակարդակը ամենաշատը բարձրացել է մայիս ամսին՝ 21սմ-ով, և ամենաշատն իջել է սեպտեմբերին՝ 8սմ-ով:




Գծապատկեր 136. Սևանա լճի մակարդակի ամսական փոփոխությունները

Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է լճի տարբեր խորություններից (Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ՝ մակերևույթից, 0.5, 5, 10, 20, 25, 30 մետր խորություններից, Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ նաև՝ 55, 70, 80 մետր խորություններից, իսկ Այրիվանքի մոտ՝ մակերևույթից, 5, 10, 20, 30 և 40 մետր խորություններից):


Մեծ և Փոքր Սևանների ջրի որակը 2024 թվականին գնահատվել է 3-րդ դասից («միջակ» որակից) 5-րդ դաս («վատ» որակ)՝ պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով:

Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հոսքաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու ներհոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կեղտաջրերն իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:


Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները ներկայացված են գրաֆիկական տեսքով.





Գծապատկեր 137. Սևանա լիճ թափվող գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.




Գծապատկեր 138. Սևանա լիճ թափվող գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.





Գծապատկեր 139. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 140. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 141. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 142. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.

Արարատյան արտեզյան ավազան

Արարատյան արտեզյան ավազանը Հայաստանի ստորերկրյա ջրային ռեսուրսների ձևավորման ամենամեծ հիդրոերկրաբանական կառուցվածքներից է և ստորերկրյա ջրերի հիմնական հանքավայրերից մեկը: Այն ներառում է Ախուրյան, Հրազդան և Արարատյան ՋԿՏ-ները: Արարատյան արտեզյան ավազանը շրջափակող լեռնալանջերի գրեթե բոլոր բնադրյուրները օգտագործվում են խմելու ու ոռոգման նպատակով:

Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի անհաշվենկատ և անխնա օգտագործումը շատ կարճ ժամանակահատվածում հանգեցրել է ստորերկրյա ջրերի հյուծմանը՝ ծախսի ու մակարդակի նվազմանը:

Ազգային ցանցի դիտակետերի դիտարկումների համաձայն Արարատյան արտեզյան ավազանի ճնշումային ջրերի գերշահագործման արդյունքում (ձկնաբուծության և ոռոգման նպատակով բազմաթիվ հորատանցքերի հորատում) իջնում են ստորերկրյա ջրերի մակարդակները:

Ճնշումային ջրերի մակարդակի իջեցման արդյունքում ներկայում անհետացել են Մեծամոր գետի ակունքների Կուլիբեկլուի, Ակնալճի և Տարոնիկի աղբյուրների խմբերի մի շարք աղբյուրներ: Նշված աղբյուրների խմբերից տարվա բոլոր եղանակներին չի նկատվում ջրերի հոսք: Եթե կենտրոնացված էլքով աղբյուրները ցամաքել են (օրինակ՝ Տարոնիկի, Մեծամորի թանգարանի, Կուլիբեկլուի), ապա նախկինում մակերեսային էլքերով բեռնաթափվող աղբյուրների խմբերի կենտրոնական մասերում ներկայումս նկատվում են մինչև 4-5 մ խորության լճակներ (օրինակ Ակնալիճ), որոնք ծառայում են որպես բնական հորատանցքեր:

Արարատյան արտեզյան ավազանում շարունակվում են ստորերկրյա ջրերի մակարդակների իջեցումները:


Ճնշումային ջրերի նախկին դրական մակարդակ ունեցող շատ տեղամասերում ներկայումս նկատվում է 0.2-0.5մ երկրի մակերևույթից ցածր մակարդակ (Ակնաշեն, Առատաշեն, Ապագա գյուղեր և այլն):

Օրինակ՝ Ակնաշեն գյուղի մոտ գտնվող N108 դիտակետում (հորատանցքում դիտարկվում է երկրորդ ճնշումային ջրատար հորիզոնը) ներկայումս ջրի մակարդակը բացասական է՝ գտնվում է -0.50մ սահմաններում:

Աղյուսակ 11. Արարատյան արտեզյան ավազանում ջրի մակարդակների 2023-2024թթ. միջին տարեկան արժեքները

Դիտակետի համար	Բնադրյալի տիպ	Տեղադիրք	Մակարդակ, մ	
			2023	2024
78	Հորատանցք	Արարատի մարզ, գ. Միս	-0,85	-0,72
105	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ	-2,86	-3,18
108	Ծածկված հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ակնաշեն	-0,58	-0,36
152	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ապագա	-3,10	-3,12
192	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Վարդանաշեն	-4,95	-4,63
198	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ակնաշեն	-1,55	-1,37
199	Գրունտային ջրհոր	Արմավիրի մարզ, գ. Ակնաշեն	-3,28	-3,17
1519	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, ք. Մասիս	2,73	2,75
1521	Ծածկված հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Գալ	0,35	0,37
1526	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Դաշտավան	1,09	1,25
1533	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Վարդանաշեն	-2,17	-2,46
1535	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Միս	2,48	2,61
1536	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Միս	4,45	4,85
1537	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Արագած	-2,75	-2,53
1818	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ապագա	-3,49	-3,55
2001	Ծածկված հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ակնաշեն	0,32	0,36
2002	Ծածկված հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Տարոնիկ	0,25	0,11
2003	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Միս	2,25	2,21
2004	Հորատանցք	Արարատի մարզ, գ. Ջրահովիտ	-1,28	-1,21
2005	Հորատանցք	Արարատի մարզ, գ. Հայանիստ	-2,53	-2,35
2006	Գրունտային ջրհոր	Արարատի մարզ, ք. Վեդի	-10,74	-9,17
2007	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Ջրահովիտ	0,86	0,89
2008	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Հովտաշեն	0,39	0,38
2018	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Տարոնիկ	-2,59	-2,39
2020	Գրունտային ջրհոր	Արմավիրի մարզ, գ. Ապագա	-1,70	-1,48
2021	Ծածկված հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ջրատա	1,37	1,01
2022	Գրունտային ջրհոր	Արմավիրի մարզ, գ. Լուսավոյ	-2,76	-2,65
2023	Գրունտային ջրհոր	Արմավիրի մարզ, գ. Բորոնք	-7,44	-7,76
2024	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Բամբակաշատ	-19,36	-19,52
2025	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Հայկավան	-13,32	-13,40
2026	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Տարոնիկ	-5,04	-4,87
2052	Հորատանցք	Արարատի մարզ, գ. Մոզավետ	-3,20	-3,08
2053	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Հովտաշեն	0,62	0,45
2055	Ծածկված հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ակնաշեն, ԵՄ	0,61	0,79
2056	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Գրիբոյեդով	-2,58	-2,64
2057	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Ապագա	-1,48	-1,17
2062	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, ք. Արտաշատ	0,44	0,30
2063	Ծածկված հորատանցք	Արարատի մարզ, գ. Դալար	0,46	0,42
2064	Հորատանցք	Արարատի մարզ, ք. Արտաշատ	-3,27	-3,09
2065	Հորատանցք	Արարատի մարզ, գ. Եղեգնուտ	-5,53	-5,66
2069	Հորատանցք	Արարատի մարզ, ք. Արտաշատ	-3,67	-3,84
2072	Գրունտային ջրհոր	Արարատի մարզ, գ. Դալար	-3,30	-3,47
2073	Գրունտային ջրհոր	Արարատի մարզ, ք. Արտաշատ	-2,50	-2,34
2074	Հորատանցք	Արարատի մարզ, գ. Լուսառատ	-9,72	-9,77
2075	Գրունտային ջրհոր	Արարատի մարզ, գ. Արմաշ	-6,77	-6,82
2076	Հորատանցք	Արարատի մարզ, գ. Արարատ	-9,69	-9,78
2082	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Մասնիկյան	-65,35	-65,46
2083	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Արտավետ	116,25	116,20
2085	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Արագած	-68,22	-68,13
2086	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Դոդս	-49,96	-50,31
2087	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Աղավնառու	-89,80	-89,91
2103	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Արմավիր	-7,04	-6,98
2104	Հորատանցք	Արմավիրի մարզ, գ. Արգեշատ	-5,98	-5,77

U R U R U S B U L 7 U T S U Q U B R



Հիդրոկենսաբանական մոնիթորինգ

Գետերի ջրի որակն ըստ հիդրոկենսաբանական ցուցանիշների գնահատվել է՝ հաշվի առնելով մակրոանողնաշարավորների տեսակների բազմազանությունը, կենդանիների տեսակների քանակները և տեսակների զգայունությունը աղտոտիչների նկատմամբ:

1-ին դաս («գերազանց» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը, ամբողջովին կամ համարյա ամբողջովին համապատասխանում են անաղարտ վիճակին:

2-րդ դաս («լավ» որակ)՝ անաղարտ վիճակի հետ համեմատությամբ, տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը փոփոխվում են աննշան:

3-րդ դաս («միջակ» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը, չափավոր շեղվում են անաղարտ վիճակից:

4-րդ դաս («անբավարար» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը բավականին շեղվում են անաղարտ վիճակից:

5-րդ դաս («վատ» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը լիովին շեղվում են անաղարտ վիճակից:

2024 թվականին հիդրոկենսաբանական մոնիթորինգ իրականացվել է Հյուսիսային, Ախուրյանի և Արարատյան ՋԿՏ-ներում հունիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

Հյուսիսային ՋԿՏ-ի գետերում իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն Փամբակ գետի ջրի որակը Վանաձոր քաղաքից ներքև հատվածում գնահատվել է 5-րդ դաս («վատ» որակ):

Դեբեդ գետի ջրի որակը Այրում քաղաքից վերև հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), Քարկոպ գյուղի մոտ՝ 4-րդ դաս («անբավարար» որակ):

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ):

Շնող գետի ջրի որակը Թեղուտ գյուղից վերև գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Շնող գյուղի մոտ՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Չիչխան գետի ջրի որակը Շիրակամուտ գյուղից վերև գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Սևաբերդ գետի ջրի որակը Նորամուտ գյուղի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Աղտն գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից ներքև հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), Իջևան քաղաքից ներքև հատվածում՝ 2-րդ դաս («լավ» որակ):

Գետիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ):

Ախուրյանի ՋԿՏ-ի գետերում իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն Եղանջուր գետի ջրի որակը Գառնաճիճ գյուղի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Ջրառատ գետի ջրի որակը գյուղ Կառնուտի ջրամբարից ներքև հատվածում գնահատվել է 5-րդ դաս («վատ» որակ):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Կրասար գյուղի մոտ հատվածում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ):

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից վերև հատվածում գնահատվել է 3-րդ դաս («լավ» որակ), Ամասիա գյուղից ներքև՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), Գյումրի քաղաքից վերև

հատվածում՝ 1-ին դաս («գերազանց» որակ), Գյումրի քաղաքից ներքև հատվածում՝ 5-րդ դաս («վատ» որակ), Արփի լճից ներքև հատվածում՝ 2-րդ դաս («լավ» որակ):

Արթիկջուր գետի ջրի որակը Արթիկ քաղաքի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Արարատյան ՋԿՏ-ի գետերում իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Ջեղեա և Ագարակաձոր գյուղերի մոտ հատվածներում՝ 2-րդ դաս («լավ» որակ), Արենի քաղաքի մոտ հատվածում՝ 3-րդ դաս («միջակ» որակ):

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Գետափ գյուղի մոտ հատվածում՝ 2-րդ դաս («լավ» որակ):

Դարբ գետի ջրի որակը Ուղեձոր գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Հերիեր գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Մակերևութային ջրերի որակի հետազոտական մոնիթորինգ

2024 թվականին իրականացվել է հետազոտական մոնիթորինգ Հյուսիսային ՋԿՏ-ի Դեբեդ գետի ավազանում, ինչպես նաև Սևանի ՋԿՏ-ում:

Հետազոտական մոնիթորինգի նպատակն է կայուն մեթոդաբանական հիմք ձևավորել և հավելյալ տեղեկատվություն հավաքել ապագա մոնիթորինգի ծրագրերի համար՝ որպես գետավազանային կառավարման պլանավորման էական մաս:

Հյուսիսային ՋԿՏ

Դեբեդ գետի ջրի որակը Ալավերդի քաղաքից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, երկաթով և կախության չոր նյութերով, Նահատակ գետի թափման կետից ներքև հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված կախության չոր նյութերով:

Շնող գետի ջրի որակը Թեղուտ գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված բերիլիումով:

Կաթնաղբյուր գետի ջրի որակը Արմանիս գյուղի մոտ հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, կադմիումով, մանգանով և կոբալտով:

Լավար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված պղնձով և սուլֆատ իոնով:

Չիչխան գետի ջրի որակը Շիրակամուտ գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Սևաբերդ գետի ջրի որակը Նորամուտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով:

Սևանի ՋԿՏ

Դարանակ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիկելով և ընդհանուր լուծված աղերով:

Շիշկերտ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կոբալտով և կախության չոր նյութերով:

Արծվանիստ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, կոբալտով, երկաթով, ալյումինով և ընդհանուր ֆոսֆորով:

Արտանիշ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով և կախության չոր նյութերով:

Ծափաթաղ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ընդհանուր լուծված աղերով:

Զիլ գետի ջրի որակը Զիլ գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր ֆոսֆորով և կախության չոր նյութերով:

Փամբակ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Հետազոտական մոնիթորինգի արդյունքները ներկայացված են Աղյուսակ 21-ում.

ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- կենցաղային թափոնները,
- արդյունաբերական թափոնները,
- գյուղատնտեսությունը:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը, անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում:

Ծանր մետաղների կուտակումը հողում կատարվում է ավելի արագ տեմպերով, քան հեռացումն ու չեզոքացումը, որը տևում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ:

Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա

Հողային ծածկույթի վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները:

Արսենը հանդիսանում է առաջին աստիճանի վտանգավոր տարր, որը խիստ վնասակար է շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Արսենի միացությունները ևս վտանգավոր են: Այս տարրը կարող է կուտակվել մարդու վահանաձև գեղձում և առաջացնել էնդեմիկ զոռ: Արսենը թունավոր է նույնիսկ փոքր չափաբաժնով: Արսենի առկայությունն օրգանիզմում կարող է առաջացնել մի շարք հիվանդություններ՝ մաշկային ախտահարում, դիաբետ, սրտանոթային պաթոլոգիա և ուռուցք:

Ցինկը առաջին աստիճանի վտանգավորության տարր է: Ցինկի բարձր կոնցենտրացիաները բույսերում վտանգավոր են՝ հատկապես դրանցով սնվող կենդանիների համար (բրդաթափություն, կաղություն, նյութափոխության թուլացում, անեմիա):

Կապարը համարվում է առաջին աստիճանի վտանգավորության տարր: Կապարի բարձր պարունակությունը կարող է նկատվել արմատավոր բույսերում և այլ բուսական ծագման մթերքներում, որոնք աճում են արտադրական տարածքների հարևանությամբ տեղակայված հողատարածքներում և ճանապարհների եզրերին: Կապարի բարձր կոնցենտրացիաները կարող են առաջանալ հանքարդյունաբերությունից, էլեկտրակայանների աշխատանքից, գազով աշխատող տրանսպորտից: Կապարային թունավորումն առաջացնում է ագրեսիվություն, թերզարգացվածություն, ցրվածություն, գերակտիվություն, վարքագծի փոփոխություններ, լսողության նվազեցում:

Պղինձը և **նիկելը** հանդիսանում են երկրորդ աստիճանի վտանգավորության տարրեր, որոնք մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար անհրաժեշտ միկրոտարրեր են: Սակայն այս մետաղների գերնորմոտիվային պարունակությունը սննդի մեջ հանգեցնում է օրգանիզմի գործառույթների, այդ թվում նաև վերարտադրության և ժառանգականության խախտմանը:

Քրոմը երկրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Քրոմի պարունակության գերազանցումը հողում վատթարացնում է օրգանական նյութերի նիտրատացումը և կատարվում է քրոմի կուտակում բույսերում: Հողում քրոմի կոնցենտրացիայի նույնիսկ քիչ ավելացման դեպքում այն կարող է ունենալ խթանիչ ազդեցություն բույսերի աճի և բերքատվության բարձրացման վրա:

Մանգանը երրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Այն կարող է կուտակվել հողում, լճերում և ճահիճներում: Այս տարրը շատ արագ կլանվում և տարածվում է նաև բույսերում, որի բարձր կոնցենտրացիան նպաստում է ածխաջրածնային, սպիտակուցային և ֆոսֆատային նյութափոխանակության խախտմանը: Այն բացասաբար է ազդում հատկապես հացահատիկի գեներատիվ օրգանների ձևավորման, բեղմնավորման և աճի վրա, ինչը հանգեցնում է այդ բույսի

կենսագործունեության ընկճմանը և ոչնչացմանը: Մանգանի կուտակումները մարդու օրգանիզմում առաջին հերթին անդրադառնում է կենտրոնական նյարդային համակարգի գործունեության վրա (դա արտահայտվում է հոգնածությամբ, քնկոտությամբ և հիշողության վատացմամբ), ախտահարում է թոքերը, սրտանոթային և լյարդալեղային համակարգերը, առաջացնում է ալերգիկ և մուտագեն ազդեցություն:

Վանադիումը երրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Վանադիումի կուտակումը հոդում կարող է հանգեցնել բույսերի բերքատվության նվազեցմանը, իսկ կուտակումները մարդու օրգանիզմում՝ առաջացնել որովայնի հատվածում տհաճ զգացողություններ, փորլուծություն, սրտխառնոց և ստամոքսի խանգարումներ, ինչպես նաև մաշկային հիվանդություններ, կանաչավուն լեզու, էներգիայի կորուստ և նյարդային համակարգի խնդիրներ:

Հողի որակի նորմեր

Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն (Հավելված 3):

Ուսումնասիրության տվյալների ամփոփում

2024 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Վայոց ձորի մարզի Զանգակատուն (Սովետաշենի), Վերնաշենի և Գլաձորի տեղամասերում, Կոտայքի մարզի Հանքավանի պղնձամոլիբդենային հանքավայրում, ինչպես նաև Տավուշի մարզի ֆոնային տարածքներում: Ուսումնասիրվել են ինչպես հանքարդյունաբերական տարածքներ, այնպես էլ ֆոնային:

Վայոց ձորի մարզի ընդերքօգտագործման թափոնների Զանգակատան (Սովետաշենի) տեղամասը գտնվում է Արարատի և Վայոց ձորի մարզերի սահմանագրին, Զանգակատուն գյուղից մոտ 2.8կմ հյուսիս-արևելք, Մպիտակ սարի (2260.0մ) լանջին: Ընդերքօգտագործման թափոնները առաջացել են 1968-1971թթ. Սովետաշենի սնդիկի երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության, նմուշարկման և տեխնոլոգիական փորձարկումների նպատակով հումքի արդյունահանման նպատակով ստորգետնյա լեռնային փորվածքների անցման արդյունքում: Երևակման տարածքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրագուրկ/լքված*:

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի Վերնաշեն տեղամասը գտնվում է Վերնաշեն գյուղից 3.5-4.0կմ հյուսիս-արևելք: Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը կապված է Վերնաշենի կապար-ցինկի երևակման տարածքում 1951-1953թթ. ընթացքում օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության, նմուշարկման և տեխնոլոգիական փորձարկումների նպատակով հումքի արդյունահանման նպատակով ստորգետնյա լեռնային փորվածքների անցման արդյունքում: Երևակման տարածքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրագուրկ/լքված*:

Ընդերքօգտագործման թափոնների Գլաձորի տեղամասը գտնվում է Եղեգնաձոր քաղաքից 12կմ հյուսիս-արևելք, Մալիշկա գյուղից 10կմ հյուսիս, Մալիշկա և Կորեկի-ձոր գետերի վերին հոսանքներում: Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը Գլաձորի բազմամետաղային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, հումքի արդյունահանման արդյունք է: Հանքավայրի տարածքում օգտակար հանածոների հետախուզման և արդյունահանման աշխատանքները սկսվել են դեռևս 1925 թվականից և, ընդհատումներով, շարունակվել մինչև 2009 թվականը: Հանքավայրի տարածքում ստորգետնյա

* - Աղբյուր՝ Շրջակա միջավայրի նախարարություն՝ http://env.am/storage/files/hashvetvutyun-geraka-kayq_1.pdf

փորվածքների անցման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրազուրկ/լքված:

Կոտայքի մարզի Հանքավան տեղամասում ընդերքօգտագործման թափոններն առաջացել են Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, XIX դարի ընթացքում և XX դարի սկզբում հանքավայրի անմիջական տարածքում պղնձի տնայնագործական եղանակով արդյունահանման, այնուհետև՝ հանքավայրի պաշարների հաստատման ընթացքում տեխնոլոգիական փորձարկումների նպատակով օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում: Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը՝ Մեղրաձոր համայնքի Հանքավան բնակավայրից 0.8-2.5կմ արևմուտք, հյուսիս-արևմուտք: Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի համակարգված ուսումնասիրությունը սկսվել է 1931 թվականից: Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 1962թ. սեպտեմբերի 3749 արձանագրությամբ որպես արտահաշվեկշռային: 2015 թվականին «Գոլդեն Օրե» ՍՊ ընկերությունը իրականացրել է հանքավայրի պաշարների վերագնահատում, որը սակայն ՀՀ ՊՊՀ կողմից չի հաստատվել: 2018 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ, օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրազուրկ/լքված:

Աղյուսակ 12. Հողային ծածկույթում մետաղների գերազանցումները ՍԹԿ-ներից

Ցուցանիշ	Գերազանցումը ՍԹԿ-ից, անգամ			
	Վերնաշեն տեղամաս	Գլաձոր տեղամաս	Զանգակատուն տեղամաս	Հանքավան
Քրոմ (ՍԹԿ=6մգ/կգ)	1.7	1.7-23.3	1.7-30.2	1.7-88.5
Նիկել (ՍԹԿ=4մգ/կգ)	1.3-2.5	1.3-11.3	3.5-13.3	2.0-109.8
Պղինձ (ՍԹԿ=3մգ/կգ)	3.0-55.0	14.0-703.7	3.3-16.0	14.3-679.7
Ցինկ (ՍԹԿ=23մգ/կգ)	1.8-21.7	6.9-477.0	1.1-4.1	1.1-4.1
Արսեն (ՍԹԿ=2մգ/կգ)	3.0-250.0	2.5-201.0	2.5-49.0	2.5-155
Ծարիր (ՍԹԿ=4.5մգ/կգ)	4.7-8.7	5.3-83.0	-	-
Կապար (ՍԹԿ=32մգ/կգ)	2.3-135.4	3.1-419.3	-	-
Մանգան (ՍԹԿ=1500մգ/կգ)	-	1.1-3.5	-	-

Տավուշի մարզի ուսումնասիրված հողերում իրականացվել են մետաղների ընդհանուր և ջրալուծ պարունակությունների որոշում: Քրոմի, նիկելի, պղնձի, ցինկի, արսենի ընդհանուր պարունակությունները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները, վանադիումի, կապարի, ծարիրի և մանգանի պարունակությունների գերազանցումներ չեն դիտվել:

* - Աղբյուր՝ Շրջակա միջավայրի նախարարություն՝ http://env.am/storage/files/hashvetvutyun-geraka-kayq_1.pdf

Տավուշի մարզի հողերի աղտոտվածության բաշխվածության քարտեզները ներկայացված են ստորև:



Նիկել Ni (ընդհանուր)



Նիկել Ni (ջրալուծ)



Կապար Pb (քնդհանուր)



Гуулам Pb (срлмнд)



Տիկնկ Շո (ընդհանուր)



Ցիկկ Zn (ջրալուծ)



ԹԱՓՈՆՆԵՐ

Թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրություն

Ի աջակցություն թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծման, աղբավայրերի ներկա վիճակի ուսումնասիրման, ինչպես նաև այնտեղ կուտակվող աղբի ծավալների վերաբերյալ տեղեկություն հավաքագրելու նպատակով կատարվել են հետազոտություններ Աշտարակ, Եղվարդ, Աբովյան, Գառնի, Գավառ, Մարտունի, Իջևան, Աչաջուր, Այգեհովիտ և Սպիտակ քաղաքում:

Աշտարակ համայնք

Աշտարակ համայնքի մակերեսը կազմում է մոտ 61կմ², իսկ բնակչությունը՝ մոտ 78000 մարդ է: Աշտարակ քաղաքի բնակչությունը մոտ 18000 մարդ: Համայնքի կազմի մեջ են մտնում թվով 29 բնակավայրեր: Աղբահանությունը իրականացվում է Աշտարակ քաղաքում ամեն օր, իսկ խոշորացված համայնքի այլ վարչական տարածքներում՝ շաբաթը 1-2 անգամ հաճախությամբ: Համայնքի աղբավայրը գտնվում է Աշտարակ քաղաքից մոտ 4կմ հեռավորության վրա, Սասունիկ գյուղի վարչական տարածքում: Աղբավայրը զբաղեցնում



է մոտ 4 հա տարածք: Տարեկան գոյացող աղբի ծավալը՝ համաձայն հաշվարկված տվյալների, կազմում է մոտ 8240մ³, կամ՝ 1648տոննա: Աղբավայրը ցանկապատված չէ, տարածքում առկա չէ պահակակետ, բացակայում են հոսանքի և ջրի մատակարարումը: Այցելության պահին առկա չէին բաց այրման օջախներ, սակայն նկատելի էին նախկինում տեղի ունեցած այրման հետքեր: Հողածածկման աշխատանքները կատարվում են ամիսը մեկ անգամ հաճախությամբ և ըստ պահանջի, (օրինակ՝ հրդեհների ժամանակ): Աղբահանությունը իրականացվում է անկախ պայմանագրերի առկայությունից, համայնքի բոլոր բնակիչներից: Համայնքի գյուղական բնակչությունից հավաքվող և աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը տատանվում է՝ կախված տարվա եղանակից՝ օրինակ ձմռան ամիսներին այն զգալիորեն նվազում է: Այդ նվազումը, ենթադրաբար, կապված է բնակչության կողմից թափոնները որպես վառելիք օգտագործման հետ:

Եղվարդ համայնք

Եղվարդ համայնքի մակերեսը կազմում է մոտ 54կմ², իսկ բնակչությունը մոտ 41000 մարդ: Եղվարդ քաղաքի բնակչությունը մոտ 12000 հազար մարդ է: Համայնքի կազմի մեջ են մտնում ք. Եղվարդ, Զովունի, Քասախ, Պոռշյան, Արագյուղ, Զորավան, Բուժական, Սարալանջ բնակավայրերը: Աղբահանությունը Եղվարդ քաղաքում, Զովունիում, Քասախում և Պոռշյանում իրականացվում է ամեն օր, իսկ Եղվարդ (Նաիրի) խոշորացված համայնքի այլ վարչական տարածքներում՝ 2 օրը մեկ հաճախությամբ: Աղբահանությունը իրականացվում է 3 հատ ԿՕ հատուկ տեխնիկայի, 4 հատ Զիլ մակնիշի մեքենաների և 2 հատ տրակտորի օգնությամբ: Համայնքի աղբավայրը գտնվում է Եղվարդ քաղաքից մոտ 2կմ հեռավորության վրա: Աղբավայրը զբաղեցնում է մոտ 3.1հա տարածք: Տարեկան գոյացող աղբի ծավալը՝ համաձայն հաշվարկված տվյալների, կազմում է մոտ 5450մ³, կամ՝ 1200տոննա: Աղբավայրը ցանկապատված չէ, տարածքում առկա չէ պահակակետ, բացակայում են հոսանքի և ջրի մատակարարումը: Այցելության պահին առկա էին բաց այրման օջախները և նկատելի էին նախկինում տեղի ունեցած այրման հետքեր: Հողածածկման աշխատանքները կատարվում են ամիսը մեկ անգամ հաճախությամբ և ըստ պահանջի, (օրինակ՝ հրդեհների ժամանակ): Աղբահանությունը իրականացվում անկախ պայմանագրերի առկայությունից, համայնքի բոլոր բնակիչներից: Համայնքի գյուղական բնակչությունից հավաքվող և աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը տատանվում է՝ կախված տարվա եղանակից՝ օրինակ ձմռան ամիսներին այն զգալիորեն նվազում է: Այդ նվազումը, ենթադրաբար, կապված է բնակչության կողմից թափոնները որպես վառելիք օգտագործման հետ: Պայմանավորված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի համար Հրազդան քաղաքում կենցաղային թափոնների ընդհանուր աղբավայրի կառուցման հետ՝ համայնքում խնդրահարույց է դառնում սեփական միջոցներով աղբահանության իրականացումը և անորոշ են մնում հետագա անելիքները: Ինչի վերաբերյալ կոմունալ ծառայության պետը հայտնեց խիստ անհանգստություն:



Աբովյան համայնք

Աբովյան խոշորացված համայնքը իր մեջ ներառում է Աբովյան քաղաքը և Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կամարիս, Մայակովսկի, Կաթնաղբյուր, Պտղնի, Վերին Պտղնի բնակավայրերը: Համայնքի մակերեսը կազմում է մոտ 23կմ²: Բնակչությունը կազմում է մոտ 60000, որից 45000-ը բաժին է ընկնում Աբովյան քաղաքին: Աղբահանությունը Աբովյան քաղաքում իրականացվում է օրական հաճախությամբ: Աղբահանությունը իրականացվում է 6 հատ Զիլ, 2 հատուկ աղբատար և 2 հատ Կամազ մակնիշի աղբատար մեքենաների օգնությամբ, և աղբը տեղափոխվում մոտ 6 հա տարածք



զբաղեցնող աղբավայր, որը Աբովյան քաղաքից հեռու է մոտ 13կմ: Աղբավայրը ցանկապատված չէ, չունի պահակակետ, հոսանքի և ջրի մատակարարում: Աղբավայրում այցելության պահին առկա էին բաց այրման օջախները, նկատելի էին նաև նախկինում տեղի ունեցած բաց այրման հետքեր: Հողածածկման աշխատանքներ կատարվում են ամիսը մեկ և ըստ պահանջի (օրինակ՝ հրդեհների ժամանակ), վարձու տրակտորի (բուլդոզեր) կիրառմամբ: Աղբավայրում տեղադրվող տարեկան աղբի ծավալը՝ համաձայն հաշվարկված տվյալների կազմում է մոտ 8640³ կամ մոտ 1900տ:

Գառնի համայնք

Գառնի համայնքի մակերեսը կազմում է մոտ 23կմ², իսկ բնակչությունը մոտ 13000 մարդ: Համայնքի կազմի մեջ են մտնում Գեղարդ, Գողթ, Գառնի, Հացավան, Գեղադիր, Ողջաբերդ բնակավայրերը: Աղբահանությունը իրականացվում է ամեն օր: Համայնքի աղբավայրը գտնվում է Գառնիից մոտ 2կմ հեռավորության վրա: Աղբավայրը զբաղեցնում է մոտ 5 հա տարածք:



Աղբահանությունը

իրականացվում է 1 հատ Զիլ և 1 հատ Գազ-53 հատուկ աղբատար տեխնիկաների օքնությամբ: Տարեկան գոյացող աղբի ծավալը՝ համաձայն հաշվարկված տվյալների, կազմում է մոտ 2160մ³, կամ՝ 432տոննա: Աղբավայրը ցանկապատված չէ, տարածքում առկա չէ պահակակետ, բացակայում են հոսանքի և ջրի մատակարարումը: Այցելության պահին առկա էին բաց այրման օջախներ, նաև նկատելի էին նախկինում տեղի ունեցած այրման հետքեր: Հողածածկման աշխատանքները կատարվում են ամիսը մեկ անգամ հաճախությամբ և ըստ պահանջի, (օրինակ՝ հրդեհների ժամանակ): Հողածածկման աշխատանքները կատարվում են վարձակալած տրակտորի (բուլդոզեր) կիրառմամբ: Աղբահանությունը իրականացվում է անկախ պայմանագրերի առկայությունից, համայնքի բոլոր բնակիչներից: Համայնքի գյուղական բնակչությունից հավաքվող և աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը տատանվում է՝ կախված տարվա եղանակից՝ օրինակ ձմռան ամիսներին այն զգալիորեն նվազում է: Այդ նվազումը, ենթադրաբար, կապված է բնակչության կողմից թափոնները որպես վառելիք օգտագործման հետ:

Մարտունի համայնք

Մարտունի համայնքի մակերեսը կազմում է մոտ 95կմ², իսկ բնակչությունը մոտ 89000 մարդ: Մարտունի քաղաքի բնակչությունը մոտ 12000 հազար մարդ է: Համայնքի կազմի մեջ են մտնում 17 բնակավայրեր:

Աղբահանությունը Մարտունի քաղաքում իրականացվում է ամեն օր, իսկ խոշորացված համայնքի այլ վարչական տարածքներում՝ 2 օրը մեկ հաճախությամբ:

Աղբահանությունը իրականացվում է 1 հատ ԿՕ հատուկ տեխնիկայի, 3 հատ Զիլ մակնիշի



մեքենաների և 1հատ Զիլ ինքնաթափի միջոցով: Համայնքի աղբավայրը գտնվում է Մարտունի քաղաքից մոտ 2կմ հեռավորության վրա և զբաղեցնում է մոտ 5.5 հա տարածք: Տարեկան գոյացող աղբի ծավալը՝ համաձայն հաշվարկված տվյալների, կազմում է մոտ 9550մ³, կամ՝ 2000 տոննա: Աղբավայրը ցանկապատված չէ, տարածքում առկա չէ պահակակետ, բացակայում են հոսանքի և ջրի մատակարարումը: Այցելության պահին առկա էին բաց այրման օջախներ, և նկատելի էին նախկինում տեղի ունեցած այրման հետքեր: Հողածածկման աշխատանքները կատարվում են ամիսը մեկ անգամ հաճախությամբ և ըստ պահանջի, (օրինակ՝ հրդեհների ժամանակ) վարձակալած ԴՏ-75 տրակտորի (բուլդոզեր) կիրառմամբ: Աղբահանությունը իրականացվում է անկախ պայմանագրերի առկայությունից, համայնքի բոլոր բնակիչներից: Համայնքի գյուղական բնակչությունից հավաքվող և աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը տատանվում է՝ կախված տարվա եղանակից՝ օրինակ ձմռան ամիսներին այն զգալիորեն նվազում է:

Գավառ համայնք

Գավառ խոշորացված համայնքը իր մեջ ներառում է Գավառ քաղաքը և Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովագարդ, Կարմիր-գյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան գյուղերը: Համայնքի մակերեսը կազմում է մոտ 75կմ²: Բնակչությունը կազմում է մոտ 61000, որից 18000-ը բաժին է ընկնում Գավառ քաղաքին: Աղբահանությունը Գավառ քաղաքում իրականացվում է օրական հաճախությամբ 3 հատ Զիլ, 3 հատուկ աղբատար և 1 հատ



Կամազ մակնիշի աղբատար մեքենաների օգնությամբ, և աղբը տեղափոխվում մոտ 2.5 հա տարածք զբաղեցնող աղբավայր, որը Գավառ քաղաքից հեռու է մոտ 6կմ: Աղբավայրը ցանկապատված է, չունի պահակակետ, հոսանքի և ջրի մատակարարում: Աղբավայրում այցելության պահին առկա չէին բաց այրման օջախներ, սակայն նկատելի էին նախկինում տեղի ունեցած բաց այրման հետքեր: Հողածածկման աշխատանքներ կատարվում են ամիսը մեկ և ըստ պահանջի (օրինակ՝ հրդեհների ժամանակ), վարձու տրակտորի (բուլդոզեր) կիրառմամբ: Աղբավայրում տեղադրվող տարեկան աղբի ծավալը՝ համաձայն հաշվարկված տվյալների, կազմում է մոտ 7640³ կամ մոտ 1410տոննա:

Իջևան համայնք

Իջևան խոշորացված համայնքի կազմի մեջ են մտնում 15 վարչական տարածքներ՝ Գանձաքար, Գետահովիտ, Ենո-քավան, Դիտավան, Սարիգյուղ, Լուսաձոր, Խաշտառակ, Այգեհովիտ, Աչաջուր, Սևքար, Բերքաբեր, Լուսահովիտ, Ազատամուտ, որոնց ընդհանուր մակերեսը մոտ 65կմ² է: Բնակչությունը կազմում է մոտ 40000 մարդ, որից 19000մարդ բաժին է ընկնում Իջևան քաղաքին: Աղբահանությունը իրականացվում է Իջևան քաղաքում ամեն օր հաճախությամբ, իսկ



համայնքի այլ վարչական տարածքներում՝ 2 օրը մեկ հաճախությամբ՝ Յհատ Կամազ, 1հատ Գագոն, 8 հատ ԶԻԼ 130 տեխնիկայի օգնությամբ: Իջևան խոշորացված համայնքի տարածքում գործում են 10 աղբավայրեր, որոնցից խոշորագույն երեքը Իջևան քաղաքի, Այգեհովիտ և Աչաջուր գյուղերի տարածքում են: Իջևան քաղաքի աղբավայրը մոտ 10կմ հեռավորության վրա է քաղաքից: Աղբավայրը զբաղեցնում է մոտ 3.3հա տարածք: Տարեկան գոյացող աղբի ծավալը համաձայն բնակչության քանակի հաշվարկների կազմում է մոտ 10950մ³, կամ 2730տոննա: Աղբավայր այցելության արդյունքում պարզվեց, որ այն ցանկապատված է, տարածքում առկա էր պահակակետ, սակայն բացակայում էին հոսանքի և ջրի մակատակարարումը: Այցելության պահին առկա էին այրման բաց օջախներ, ինչպես նաև նկատելի էին նախկինում տեղի ունեցած հրդեհների և այրումների հետքեր: Հողածածկման աշխատանքները կատարվում են ամիսը մեկ հաճախականությամբ, և ըստ պահանջի՝ օրինակ հրդեհների ժամանակ: Հողածածկման աշխատանքները կատարվում են ԴՏ-75 տրակտորի (բուլդոզեր) կիրառմամբ:

Աչաջուր համայնք

Աչաջուր վարչական տարածքի աղբավայրը զբաղեցնում է Յհա տարածք, որը ցանկապատված չէ, չունի պահակակետ, հոսանքի և ջրի մատակարարում: Աղբավայրը գտնվում է գյուղից 2.5կմ հեռավորության վրա: Այն տեղակայված է ձորակի եզրին և մեծամասամբ լցված է այդ ձորակի մեջ: Գյուղապետի խոսքերով սեզոնային տեղումների պատճառով ձորակը լցվում է ջրով, ինչը հանգեցնում է աղբավայրից կեղտաջրերի արտահոսքի:



Քանի որ տարածքը ցանկապատված չէ՝ նկատվում են նաև ապորինի լցումներ այլ վարչական տարածքների բնակիչների կողմից: Նաև աղբավայրի տարածք են ներխուժում խոշոր եղջրավոր կենդանիներ: Այցելության պահին առկա էին այրման բաց օջախներ, ինչպես նաև նախկինում տեղի ունեցած հրդեհների և այրումների հետքեր: Հողածածկման աշխատանքներ չեն կատարվում: Փոխարենը աղբը լցվում է ձորակը, այդպիսով տեղ ազատելով եզրին՝ աղբի նոր քանակների համար: Տարեկան աղբի ծավալը կազմում է մոտ 549մ³ կամ մոտ 137տոննա:

Այգեհովիտ համայնք

Այգեհովիտ գյուղի աղբավայրը գտնվում է գյուղից մոտ 2.6 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է մոտ 3 հա տարածք, որը ցանկապատված չէ, չունի պահակակետ, հոսանքի և ջրի մատակարարում: Այգեղության պահին աղբավայրում առկա չէին այրման բաց օջախներ և նախկինից մնացած այրումների հետքեր: Տարեկան աղբի ծավալը կազմում է մոտ 540մ³ կամ մոտ 135 տոննա:



Աղբահանանությունը ողջ համայնքում իրականացվում է անկախ պայմանագրերի առկայությունից, համայնքի բոլոր բնակիչներից: Համայնքի գյուղական բնակչությունից հավաքվող և աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը տատանվում է՝ կախված տարվա եղանակից՝ օրինակ ձմռան ամիսներին այն զգալիորեն նվազում է:

Սպիտակ համայնք

Սպիտակ համայնքի մակերեսը կազմում է մոտ 61կմ², իսկ բնակչությունը մոտ 43500 մարդ: Սպիտակ քաղաքի բնակչությունը մոտ 12.7 հազար մարդ է: Համայնքի կազմի մեջ են մտնում բնակավայրեր՝ Արևաշող, Արջհովիտ, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շիրակամուտ, Շենավան, Զրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարաձոր բնակավայրերը:



Աղբահանությունը իրականացվում է Սպիտակ քաղաքում ամեն օր, իսկ խոշորացված համայնքի այլ վարչական տարածքներում՝ շաբաթը 1-2 անգամ հաճախությամբ: Աղբահանությունը իրականացվում է «Նարինե» ՍՊԸ-ի և «Մինասիկ Ոսկանյան» ԱԶ-ի կողմից: Համայնքի աղբավայրը գտնվում է Սպիտակ քաղաքից մոտ 4կմ հեռավորության վրա: Աղբավայրը զբաղեցնում է մոտ 4 հա տարածք: Տարեկան գոյացող աղբի ծավալը՝ համաձայն հաշվարկված տվյալների, կազմում է մոտ 5240մ³, կամ՝ 1048տոննա: Աղբավայրը ցանկապատված չէ, տարածքում առկա չէ պահակակետ, բացակայում են հոսանքի և ջրի մատակարարումը: Այգեղության պահին առկա չէին բաց այրման օջախներ, սակայն նկատելի էին նախկինում տեղի ունեցած այրման հետքեր: Հողածածկման աշխատանքները կատարվում են ամիսը մեկ անգամ հաճախությամբ և ըստ պահանջի, (օրինակ՝ հրդեհների ժամանակ): Հողածածկման աշխատանքները կատարվում են վարձակալած ԴՏ-75 տրակտորի (բուլդոզեր) կիրառմամբ: Աղբահանանությունը իրականացվում է անկախ պայմանագրերի առկայությունից, համայնքի բոլոր բնակիչներից: Համայնքի գյուղական բնակչությունից հավաքվող և աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը տատանվում է՝ կախված տարվա եղանակից՝ օրինակ ձմռան ամիսներին այն զգալիորեն նվազում է:

**Կազմակերպությունների գործունեությունից առաջացած թափոնների
վիճակագրական տվյալների ուսումնասիրություն**

2023 թվականին հաշվետվություն ներկայացրած ձեռնարկությունների թիվը կազմում է 1067 ձեռնարկություն, որոնցից 870-ը մարզերում, 197-ը Երևան քաղաքում: Երևան քաղաքում 197 հաշվետվություն ներկայացրած ձեռնարկություններից 105-ը (53.26%) կազմում են արդյունաբերական ձեռնարկությունները (քիմիական արդյունաբերություն՝ 4.06%, հանքարդյունաբերություն՝ 1.5%, շինանյութերի արտադրություն՝ 7.1%, սննդի արդյունաբերություն և գյուղատնտեսություն՝ 15.2%, փայտամշակման արդյունաբերություն՝ 0.5%, թեթև արդյունաբերություն՝ 17.2%, վառելիքաէներգետիկ արդյունաբերություն՝ 3.5%, այլ ճյուղեր՝ 4%), իսկ 92-ը (46.7%) կազմում են սպասարկման ոլորտի կազմակերպությունները (առևտրի կենտրոններ, շուկաներ՝ 4.56%, բժշկական հաստատություններ՝ 33.5%, տրանսպորտ՝ 4%, կապ՝ 1%, հյուրանոցներ՝ 1%, ուսումնական հաստատություններ՝ 2.53%):

Վտանգավորության 1-ին և 2-րդ դասի թափոններ գոյացել են քիմիական արդյունաբերության, հանքարդյունաբերության, շինանյութերի արտադրության, վառելիքա-էներգետիկ, գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտներում, ինչպես նաև բժշկական հաստատությունների, տրանսպորտի, հյուրանոցների, ռեստորանների, առևտրի կենտրոնների/շուկաների ոլորտներում:


Վտանգավորության 3-րդ և 4-րդ դասի թափոններ գոյացել են բժշկական հաստատությունների, քիմիական արդյունաբերության, հանքարդյունաբերության, թեթև արդյունաբերության, վառելիքաէներգետիկ, արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության, տրանսպորտի, հյուրանոցային, առևտրի կենտրոնների, շուկաների, տոնավաճառների, կապի և ուսման ոլորտներում:

Աղյուսակ 13. ՀՀ-ում առաջացած թափոնների քանակն ըստ վտանգավորության դասերի, 2023 թ.*

Վտանգավորության դաս	Թափոնների քանակ, տ
<i>I դաս</i>	<i>23.692</i>
<i>II դաս</i>	<i>72.040</i>
<i>III դաս</i>	<i>4445.878</i>
<i>IV դաս</i>	<i>31611516.724</i>
<i>V դաս</i>	<i>26899273.888</i>
Ընդհանուր	58515332.222

* Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2007 թվականի հունվարի 25-ի N430-Ն հրամանի ըստ վտանգավորության թափոնները դասակարգվում են. 1-ին դաս՝ չափազանց վտանգավոր, 2-րդ դաս՝ բարձր վտանգավորության, 3-րդ դաս՝ չափավոր վտանգավոր, 4-րդ դաս՝ քիչ վտանգավոր, 5-րդ դաս՝ ոչ վտանգավոր կամ գործնականորեն անվտանգ

Կազմակերպություններում առաջացած թափոնների քանակն
ըստ վտանգավորության դասերի / 2023 թվական



ԱՆՏԱՌՆԵՐ

Անտառայահպանություն

Պահպանության վիճակի մասնակի դիտարկում-ուսումնասիրություններ իրականացվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 14 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ «Ճամբարակ», «Հրազդան», «Արագածոտնի», «Տաշիր», «Վանաձոր», «Սյունիք», «Ստեփանավան», «Թումանյան», «Իջևան», «Արծվաբերդ», «Կապան», «Սևքար», «Նոյեմբերյանի», «Զիլիզա», ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքներում՝ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի, «Շիկահող» պետական արգելոց՝ տեղամասում, «Խոսրովի անտառ» պետական արգելոց՝ ՊՈԱԿ-ում, «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ներում:

Աղյուսակ 14. «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից հայտնաբերված ապօրինի հատումների օջախների թիվը 2024 թվական

Գազմակերպություն	Ապօրինի օջախների քանակ (հատ)
«Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ	2
«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ	1
«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ	0
«Խոսրովի անտառ» պետական արգելոց՝ ՊՈԱԿ	0
«Ճամբարակ» ա/տ	4
«Հրազդան» ա/տ	1
«Տաշիր» ա/տ	0
«Վանաձոր» ա/տ	3
«Սյունիք» ա/տ	0
«Ստեփանավան» ա/տ	3
«Թումանյան» ա/տ	4
«Իջևան» ա/տ	5
«Արծվաբերդ» ա/տ	6
«Սևքար» ա/տ	0
«Զիլիզա» ա/տ	0
«Կապան» ա/տ	0
«Նոյեմբերյանի» ա/տ	0
«Արագածոտնի» ա/տ	29
Ընդամենը	55

Անտառային հրդեհներ

Ըստ Վանաձորի ա/տ մասնաճյուղի Վահագնիի ա/պ տվյալների՝ 2022թ.ընթացքում տեղի է ունեցել հրդեհ, որի համար անտառտնտեսության կողմից կազմվել N8 և N9 անտառային հրդեհների վերաբերյալ արձանագրությունը, համաձայն որի 13-րդ քառակուսու մի շարք հատվածներում այրվել է մոտ 142հա անտառածածկ տարածք: Մեր կողմից ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ հրդեհված տարածքում անհրաժեշտ է իրականացնել խնամքի և սանիտարական հատումներ և տարածքից ամբողջությամբ դուրս բերել չորացած և կիսավառված փայտանյութը հետագայում նորանոր հրդեհներից խուսափելու նպատակով:

Ըստ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում հրդեհի դեպքեր չեն արձանագրվել:

Անտառխախտման արձանագրությունների ուսումնասիրություններ.

Դաշտային դիտարկում ուսումնասիրություններ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ 14 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ «Ճամբարակ», «Հրազդան», «Արագածոտնի», «Տաշիր», «Վանաձոր», «Սյունիք», «Ստեփանավան», «Թումանյան», «Իջևան», «Արծվաբերդ», «Կապան», «Սևքար», «Նոյեմբերյանի», «Զիլիզա», ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքներում՝ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոց» տեղամասում, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ում, «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ներում:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հիմնականում անտառխախտման արձանագրությունների տվյալները համապատասխանում են դաշտում առկա տվյալներին, սակայն հայտնաբերվել են նաև խնդիրներ, մասնավորապես դրանցից են՝ հատված կոճղերի վրա համարակալման կամ կնիքի հետքերի բացակայությունը:

Անտառօգտագործում

Իրականացվել են 2024թ. համար հատկացված և շահագործված՝ Խնամքի, սանիտարական և այլ նպատակով հատատեղերի ուսումնասիրություն դիտարկումներ: Մասնավորապես ուսումնասիրություններ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 14 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ «Ճամբարակ», «Հրազդան», «Արագածոտնի», «Տաշիր», «Վանաձոր», «Սյունիք», «Ստեփանավան», «Թումանյան», «Իջևան», «Արծվաբերդ», «Կապան», «Սևքար», «Նոյեմբերյանի», «Զիլիզա», ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքներում՝ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոց» տեղամասում, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ում, «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ներում:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են մի շարք անհամապատասխանություններ և թերություններ.

- Սանիտարական հատման նպատակով ուսումնասիրված հատատեղերում հատման համար նախատեսված ծառերի մի մասը իրենց կենսաբանական ու տնտեսական հատկանիշներով չեն համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:
- Ուսումնասիրված հատատեղերի մի մասում առկա են համարակալումներ, որոնք արված են բնի վրա արմատավզիկից վերև, ինչպես նաև մեծ մասամբ անընթեռնելի են, ինչը չի համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:
- Խնամքի հատման նպատակով ուսումնասիրված հատատեղերում հատման համար նախատեսված ծառերի մի մասը իրենց կենսաբանական ու տնտեսական հատկանիշներով, հասակային դասի սխալ ընտրության, ինչպես նաև պայմանավորված ցածր լրիվությամբ չեն համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:
- Հատատեղի տոմսերում առկա քառակուսիները և հատամասերը շեղվում են փաստացի դաշտային տվյալներից:

Անտառվերականգնում

Իրականացվել են ուսումնասիրություններ 2022-2024թթ. ընթացքում պետական բյուջեով և այլ ֆինանսական աղբյուրների միջոցով իրականացված անտառապատման և բնական վերաճի օժանդակման, կոճղաշիվային հատման միջոցով անտառվերականգնման

միջոցառումները: Մասնավորապես դիտարկումներ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ 14 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ «Ճամբարակ», «Հրազդան», «Արագածոտնի», «Տաշիր», «Վանաձոր», «Սյունիք», «Ստեփանավան», «Թումանյան», «Իջևան», «Արծվաբերդ», «Կապան», «Սևքար», «Նոյեմբերյանի», «Զիլիզա»:

Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են ընդհանուր- 7 հա 2022թ. և 2024թ. պետական բյուջեով նախատեսված Հրազդանի անտառտնտեսությունում իրականացված անտառապատման աշխատանքները:

Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են ընդհանուր- 10 հա 2022թ. և 2024թ. պետական բյուջեով նախատեսված Արագածոտնի ա/տ մասնաճյուղի իրականացված անտառապատման աշխատանքները:

Հայտնաբերված հիմնական խնդիրներն են.

- Անտառապատման համար նախատեսված մակերեսների անհամապատասխանությունը իրական չափերին
- Ծառատեսակների ցածր կաչողականությունը
- Խնամքի աշխատանքների թերի լինելը
- Ոռոգման համակարգերի բացակայությունը
- Ցանկապատների թերի լինելը:

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենսաբազմազանության ուսումնասիրություններ իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկում, Խոսրովի անտառ պետական արգելոցում, «Սևան» ազգային պարկում, Ճամբարակի, Հրազդանի անտառտնտեսություններում: Ճամբարակի անտառտնտեսության տվյալներից՝ 477-ը, Դիլիջան ազգային պարկից՝ 150-ը, Հրազդանից՝ 156-ը, Խոսրովից՝ 134, Տաշիրի անտառտնտեսություններից՝ 152-ը, Սևանից՝ 218-ը նույնականացվել են: Տվյալների մնացած մասը ունեն մասնագետների ևս մեկ անգամ նույնականացման կարիքը:



Նկար 53. Հրդեհից հետո հայտնաբերված տեսակների նմուշները

Հրդեհված տարածքում հայտնաբերված սնկերի նոր տեսակի 6 նմուշ, նույն տարածքում հայտնաբերված մոխրի վրա աճող մամուռի 3 նմուշ, ջուր, հող, միանգամից բազայում, ինչպես նաև որոշ այլ հայտնի տեսակների թվով 69 նմուշ հանձնվել են ՀՀ ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ հերբարիումին՝ հետազայում գիտական աշխատանքների ծավալման նպատակով: Դրանցից մեծ մասը հազվադեպ հանդիպող, կարմիրգրքյան կամ ՀՀ տարածքում չհանդիպող տեսակներ են



Նկար 54. Կարմիրգրքյան և հազվադեպ հանդիպող տեսակնի նմուշներ



Նկար 55. Անտառտնտեսություններում նմուշառված որոշ տեսակներ



Նկար 56. Սևաբրի անտառտնտեսությունում հանդիպած հազվադեպ հանդիպող տեսակներ նմուշներ



Նկար 57. Զիլիզայի անտառտնտեսությունում հանդիպած հազվադեպ հանդիպող և կարմիրգրքյան տեսակներ նմուշներ



Նկար 58. Սյունիքի անտառտնտեսությունում հանդիպած հազվադեպ հանդիպող և կարմիրգրքյան տեսակներ նմուշներ



Նկար 59. Ճամբարակի անտառտնտեսությունում հանդիպած հազվադեպ հանդիպող տեսակներ նմուշներ



Նկար 60. Անտառտնտեսությունում և ԲՀՊՏ-ներում հանդիպած հազվադեպ հանդիպող և կարմիրգրքյան տեսակներ նմուշներ

Նմուշների դասակարգում

Իրականացվել է Հրազդանի, Ջիլիգայի, Թումանյանի անտառտնտեսություններից և Դիլիջանի ազգային պարկից նմուշառված տեսակների դասակարգում՝ ըստ Survey123 հավելվածում նշված ID-ների, անտառտնտեսության/ԲՀՊՏ-ի: Նմուշների մի մասը նույնականացվել են, չնույնականացված նմուշները պահպանվել են պահատուփերում՝ հետազայում ԴՆԹ. բարկոդավորմամբ նույնականացման համար:

Իրականացվել է Հրազդանի, Ջիլիգայի, Թումանյանի անտառտնտեսություններից և Դիլիջանի ազգային պարկից նմուշառված տեսակների դասակարգում՝ ըստ Survey123 հավելվածում նշված ID-ների, անտառտնտեսության/ԲՀՊՏ-ի: Նմուշների մի մասը նույնականացվել են, չնույնականացված նմուշները պահպանվել են պահատուփերում՝ հետազայում ԴՆԹ. բարկոդավորմամբ նույնականացման համար:



Նկար 61. Բույսերի, սնկերի և քարաքոսերի որոշ տեսակների նմուշներ

Ուսումնասիրություններ և մոնիթորինգ

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում իրականացած դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է տեսակների մոնիթորինգ, հիմնականում թռչունների հաշվառում ազգային պարկի ողջ տարածքով մեկ և կենսաբազմազանության մոնիթորինգ Արտանիշի արգելոցում: Դիտարկումներն իրականացվել են նախորդ տարի այցելած տարածքներից հավաքագրված տվյալների հետազոտությունների հիման վրա և մեկ նոր տարածքում: Մոնիթորինգի արդյունքում դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ՝ այդ թվում ճքճքան մրտիմն, Կարմիր բադ, Լայնակտուց բադ, Կարմրակլուխ սուգաբադ, կտցարներ, ճուռակներ, մկնաճուռակներ, մի շարք մանր կաթնասուններ, սպիտակաթիթեռներ, մողեսներ,

թանթոնիկներ, առնասպարներ, գառանդմակներ, շնդեղներ, կաթնուկներ և այլ տեսակներ:

Դաշտային աշխատանքների ընթացքում հիմնականում իրականացվել է թռչունների մոնիթորինգ՝ սեզոնային, եղանակային պայմաններից և տարածքի առանձնահատկություններից ելնելով: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Արվել է 500-ից ավել դիտարկում:

Դիտարկումների և տվյալների նախնական վերլուծության արդյունքում առանձնացվել են մշտական փորձահրապարակները՝ ինդիկատոր տեսակների միջոցով կենսամիջավայրի գնահատման համար:

Առկա են նաև ոչ մշտական դիտավայրեր, տեսակների բազմազանության գնահատման համար:

«Խոսքովի անտառ պետական արգելոց»

«Խոսքովի անտառ պետական արգելոց»-ում իրականացած դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է տեսակների մոնիթորինգ:

Դիտարկումներն իրականացվել են նախորդ տարի այցելած տարածքներից հավաքագրված տվյալների հետազոտությունների հիման վրա և մեկ նոր տարածքում: Մոնիթորինգի արդյունքում դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Դիտարկումների և տվյալների նախնական վերլուծության արդյունքում առանձնացվել են մշտական փորձահրապարակները՝ ինդիկատոր տեսակների միջոցով կենսամիջավայրի գնահատման համար: Առկա են նաև ոչ մշտական դիտավայրեր, տեսակների բազմազանության գնահատման համար:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր

«Զանգեզուր» կենսոլորտային համալիրում իրականացած դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է կենսաբազմազանության մոնիթորինգ: Դիտարկումներն իրականացվել են 1 նախորդ տարում իրականացրած մոնիթորինգի վայրում և մի քանի նոր տարածքում: Մոնիթորինգի արդյունքում դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Արվել է 500-ից ավել դիտարկում: Ուսումնասիրության արդյունքում ընտրվել են մի քանի վայրեր հետագա մշտադիտարկումների համար՝ դեռևս 3 փորձահրապարակ էկոհամակարգի վիճակի գնահատման նպատակով, և 3 դիտավայր կենսաբազմազանության մոնիթորինգի իրականացման համար:

Դիտարկումների և տվյալների նախնական վերլուծության արդյունքում առանձնացվել են մշտական փորձահրապարակները՝ ինդիկատոր տեսակների միջոցով կենսամիջավայրի գնահատման համար:

Առկա են նաև ոչ մշտական դիտավայրեր, տեսակների բազմազանության գնահատման համար:

«Վանաձոր» անտառտնտեսություն

«Վանաձոր» անտառտնտեսությունում դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է տեսակների մոնիթորինգ:

Դիտարկումներն իրականացվել են նախորդ տարի այցելած տարածքներից հավաքագրված տվյալների հետազոտությունների հիման վրա և մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է 750-ից ավել դիտարկում:

«Հրազդան» անտառտնտեսություն

«Հրազդան» անտառտնտեսությունում դաշտային աշխատանքների արդյունքում

իրականացվել է մոնիթորինգ տեսակների բազմազանության որոշման և էկոհամակարգի վիճակի հետագա գնահատման նպատակով: Դիտարկումներն իրականացվել են նախորդ տարի այցելած տարածքներից հավաքագրված տվյալների հետազոտությունների հիման վրա և մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Իրականացվել է 500-ից ավել ղիտարկում:

«Արագածոտն» անտառտնտեսություն

«Արագածոտն» անտառտնտեսությունում իրականացված մոնիթորինգի արդյունքում ընտրվել են մի քանի մշտադիտարկման վայրեր՝ էկոհամակարգի հետագա գնահատման համար, ինչպես նաև իրականացվել է տեսակների մոնիթորինգ՝ բաշխվածության որոշման համար: Գրանցվել է ավելի քան 500 ղիտարկում:

«Թումանյան» անտառտնտեսություն

«Թումանյան»-ի անտառտնտեսությունում դաշտային ղիտարկումներն իրականացվել են նախորդ տարում իրականացրած մոնիթորինգի ղիտավայրում և մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է 800-ից ավել ղիտարկում:

«Ստեփանավան» անտառտնտեսություն

«Ստեփանավան»-ի անտառտնտեսությունում դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է մոնիթորինգ տեսակների բազմազանության որոշման և էկոհամակարգի վիճակի հետագա գնահատման նպատակով: Դիտարկումներն իրականացվել են մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Իրականացվել է 300-ից ավել ղիտարկում:

«Արծվաբերդ»-ի անտառտնտեսություն

«Արծվաբերդ»-ի անտառտնտեսությունում դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է կենսաբազմազանության մոնիթորինգ: Դիտարկումներն իրականացվել են 2 նախորդ տարում իրականացրած մոնիթորինգի ղիտավայրում և մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է 780-ից ավել ղիտարկում:

«Խոսրովի անտառ» պետական արգելոց

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի Գառնու տեղամասում իտալացի մասնագետների հետ իրականացվել է քարաքոսների հավաք և ընդհանուր կենսաբազմազանության մոնիթորինգ:

Արագած լեռ

Արագած լեռան տարածքում՝ իտալացի մասնագետների հետ իրականացվել է քարաքոսների հավաք 4 տարբեր բարձրության կետերից: Դաշտային ուսումնասիրության արդյունքում իրականացվել է նաև ընդհանուր կենսաբազմազանության մոնիթորինգ:

«Իջևան» անտառտնտեսություն

«Իջևան»-ի անտառտնտեսությունում դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է կենսաբազմազանության մոնիթորինգ: Դիտարկումներն իրականացվել են նախորդ տարում իրականացրած մոնիթորինգի ղիտավայրերում և մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է 210-ից ավել ղիտարկում:

«Ջիլիզա» անտառտնտեսություն

«Ջիլիզա»-ի անտառտնտեսությունում դաշտային դիտարկումներն իրականացվել են ինչպես նախորդ տարում իրականացրած մոնիթորինգի դիտավայրերում այնպես էլ մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է մոտ 500 դիտարկում:

«Սևքար» անտառտնտեսություն

«Սևքարի»-ի անտառտնտեսությունում դաշտային դիտարկումներն իրականացվել են նախորդ տարիներում իրականացրած մոնիթորինգի դիտավայրերում և մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է 250-ից ավել դիտարկում:

«Դիլիջան ազգային պարկ»

«Դիլիջանի»-ի ազգային պարկում դաշտային դիտարկումներն իրականացվել են ինչպես նախորդ տարիներում իրականացրած մոնիթորինգի դիտավայրերում, այնպես էլ մի քանի նոր տարածքներում: Դիտարկվել են ինդիկատոր, կարմիրգրքյան, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է մոտ 430 դիտարկում:

«Նոյեմբերյան» անտառտնտեսություն

Նոյեմբերյանի անտառտնտեսությունում դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է կենսաբազմազանության մոնիթորինգ: Անտառտնտեսության տարածքում դիտարկումներն իրականացվել են առաջին անգամ: Դիտարկվել են մի շարք ինդիկատոր, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է 142-ից ավել դիտարկում:

«Ճամբարակ» անտառտնտեսություն

Ճամբարակի անտառտնտեսության տարածքում դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է կենսաբազմազանության մոնիթորինգ: Դիտարկումներն իրականացվել են նախորդ տարում իրականացրած մոնիթորինգի դիտավայրերում: Դիտարկվել են ինդիկատոր, ինվազիվ և այլ հետաքրքիր տեսակներ: Մոնիթորինգն իրականացվել է Survey123 հավելվածով: Կատարվել է մոտ 60 դիտարկում:

Բնապահպանական ինդիկատորը հանդիսանում է հավաքական ցուցանիշ, որը կարող է օգտագործվել բարդ բնապահպանական երևույթները, ներառյալ ժամանակի ընթացքում դրանց միտումները ավելի պարզ ներկայացնելու համար, և այդպիսով օգնելու պատկերացում կազմել շրջակա միջավայրի վիճակի մասին: Ինդիկատորները մշակվում են բնապահպանական քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով: Բնապահպանական ինդիկատորները մշակումը սկսվել է դեռևս 2018 թվականից՝ «Եվրոպական հարևանության գործիք–Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգ Արևելք /ԵՀԳ ՇՄՏՄՀ Ալ ծրագրի շրջանականներում: Ներկայումս առկա է 9 բնապահպանական ինդիկատոր: Բնապահպանական ինդիկատորների մասին մանրամասն տեղեկատվությունը հրապարակված է ՀՀ Էկոպորտալի կայքում՝ <https://ecportal.am>, տվյալների աղբյուր՝ Շրջակա միջավայրի նախարարություն, «Հիդրոոդերևութաբանության և մինիթրոբինգի կենտրոն» ՊՈԱԿ, Վիճակագրական կոմիտե:

C10 (Թթվածնի կենսաբանական պահանջի (ԹԿՊ) և ամոնիումի կոնցենտրացիաները գետերում)


C10 ինդիկատորը ցույց է տալիս գետերում թթվածնի մակարդակը, որն արտահայտվում է ԹԿՊ-ի և ամոնիում իոնի կոնցենտրացիայով:

ԹԿՊ-ն և ամոնիումը ջրի օրգանական աղտոտվածության բնութագրման հիմնական ցուցանիշներն են: ԹԿՊ-ն ցույց է տալիս, թե որքան լուծված թթվածին է սպառվում ջրում առկա օրգանական նյութերի տարրալուծման համար: Օրգանական աղտոտվածությունը կարող է հանգեցնել գետի ջրի թթվածնագրկման, ամոնիումի կոնցենտրացիայի բարձրացման, կենդանի օրգանիզմների անհետացման: Այս ցուցանիշները սովորաբար աճում են կեղտաջրերի մաքրման կայանների բացակայության, արդյունաբերական և գյուղատնտեսական հոսքաջրերի արտահոսքերի արդյունքում: Հայաստանում օրգանական նյութերի հիմնական աղբյուրը կեղտաջրերն են (չմաքրված կամ ոչ բավարար մաքրված), որոնք մաքրման կայանների բացակայության պատճառով թափվում են անմիջապես գետեր:


2010-2023թթ. ԹԿՊ-ի և ամոնիումի միջին կոնցենտրացիաները աճել են բնակավայրերից ներքև գտնվող դիտակետերում՝ չմաքրված կենցաղային կեղտաջրերի և գյուղատնտեսական արտահոսքերի հետևանքով: 2010-2023թթ. բնակավայրերից ներքև ընկած դիտակետերում ԹԿՊ-ի միջին կոնցենտրացիան աճել է 40%-ով, իսկ ամոնիումի կոնցենտրացիան՝ ավելի քան 2 անգամ: ԹԿՊ-ի և ամոնիումի միջին կոնցենտրացիաները համեմատաբար ավելի կայուն են բնակավայրերից վերև գտնվող դիտակետերում: Սա նշանակում է, որ ավելի քիչ բնակեցված տարածքներում քիչ է կոմունալ-կենդանային կեղտաջրերի չափաբաժինը: Ընդգրկված բոլոր 45 դիտակետերում 2010-2023թթ. աճը փոքր ինչ ավելի ցածր է, քան բնակավայրերից ներքև գտնվող դիտակետերում:

Հրագրան գետը Հայաստանի ամենաերկար և ամենաաղտոտված գետերից մեկն է: Կեղտաջրերի մաքրման կայանի բացակայության ազդեցությունը հատկապես նկատվում է Երևան քաղաքից հետո (55-րդ դիտակետ) և բնութագրում քաղաքի կոմունալ-կենցաղային ազդեցությունը գետի վրա: Այս հանգամանքն ունի մեծ ազդեցություն միջինացված ժամանակային շարքերի վրա, հատկապես ամոնիումի համար: 2023 թվականին ամոնիումի միջին կոնցենտրացիան բնակավայրերից ներքև գտնվող դիտակետերում 42%-ով բարձր է, երբ այստեղ ներառված է 55-րդ դիտակետը:

Միջինացված արդյունքների տարբերությունը՝ 55-րդ դիտակետը ներառած կամ առանց դրա ներառման, ժամանակի ընթացքում աճում է: ԹԿՊ5-ի համար տարբերությունն ավելի փոքր է, սակայն այս դեպքում ևս ժամանակից կախված կա աճման միտում, ինչը նշանակում է, որ ԹԿՊ5-ն 55-րդ դիտակետում աճում է ավելի շատ, քան մնացած դիտակետերում:



Գծապատկեր 143. C10 ինդիկատոր-ԹԿՊ-ի փոփոխությունը ՀՀ գետերում 2011-2023թ.



Գծապատկեր 144. C10 ինդիկատոր-Ամոնիում իոնի փոփոխությունը ՀՀ գետերում 2011-2023թթ.


C11 (Կենսածին նյութեր գետերում)

C11 ինդիկատորը ցույց է տալիս ֆոսֆատների և նիտրատների կոնցենտրացիաները գետերում:

Քաղաքային, արդյունաբերական և գյուղատնտեսական արտանետումներից առաջացած կենսածին նյութերի մեծ զանգվածի ներհոսքը դեպի քաղցրահամ ջրավազաններ կարող է հանգեցնել այդ ջրավազանների էվտրոֆացման: Դա առաջացնում է էկոլոգիական փոփոխություններ, որոնք կարող են ուղեկցվել բույսերի և ձկների տեսակների կորստով (էկոլոգիական պայմանների վատթարացում) և ունեն բացասական ազդեցություն բնակչության կողմից այդ ջրավազանների ջրերի օգտագործման հարցում: Այս ցուցանիշը կարող է օգտագործվել ներկայումս կենսածին նյութերի կոնցենտրացիայի մակարդակի և նրանց երկարաժամկետ միտումների փոփոխության գնահատման համար:

Հայաստանի գետերում բնակավայրերից ներքև ընկած հատվածներում 2010-2023թ. ընթացքում բարձրացել են կենսածին նյութերի կոնցենտրացիաները՝ պայմանավորված բնակավայրերից չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերով և գյուղատնտեսական արտահոսքերով: Երբ կենսածին նյութերը ամբողջապես չեն յուրացվում բույսերի կողմից, դրանք, անցնելով գյուղատնտեսական նշանակության հողերով, կարող են բացասաբար անդրադառնալ ջրի որակի վրա:

Կենսածին նյութերի միջին կոնցենտրացիաները հիմնականում կայուն են այն դիտակետերում, որոնք գտնվում են բնակավայրերից վերև (Գծապատկեր 145):



Գծապատկեր 145. C11 ինդիկատոր-Նիտրատի և ֆոսֆատի փոփոխությունը ՀՀ գետերում 2011-2023թթ.

C2 (Քաղցրահամ ջրերի ջրառը)

C2 ինդիկատորը արտահայտում է երկրի տարեկան ջրառի ընդհանուր ծավալը և ջրի շահագործման ինդեքսը (ՋՇԻ, %): ՋՇԻ-ն համարժեք է տարեկան ջրառի ընդհանուր ծավալի հարաբերակցությանը վերականգնվող ջրերի ծավալին՝ արտահայտված տոկոսով: Այս ինդիկատորը թույլ է տալիս հաշվարկել քաղցրահամ ջրերից իրականացված ջրառի քանակը, ինչպես նաև գնահատել շրջակա միջավայրի վրա գործադրած ճնշումը՝ կապված քաղցրահամ ջրերի ռեսուրսների ջրառի հետ:


2023 թվականին Հայաստանում մակերևութային և ստորերկրյա ջրերի ջրառի ծավալը կազմել է 2917.6 մլն. մ³, ՋՇԻ-ն՝ 46.7% (Գծապատկեր 146), ջրային ռեսուրսների շահագործման համաթիվը (ՋՌՇՀ, միջին բազմամյա, %) կազմել է 37.6%:

Հայաստանը ջրի նկատմամբ պահանջարկի նվազագույն ապահովմամբ, սեզոնային սթրեսներ ունեցող երկիր է: Ջրերի շահագործման տարեկան ինդեքսը ժամանակ առ ժամանակ գերազանցում է 40%-ը (2000, 2008, 2019 և 2022թթ. հասել է 77.3%):


Սեզոնայնությամբ գնահատման տեսանկյունից սթրեսների առկայությունը հիմնականում կենտրոնացված ջրամատակարարման (2023թ.՝ 19.5%) և գյուղատնտեսության (2023թ.՝ 76.1%) բարձր պահանջների արդյունքն են:

Թեև երկրի ընդհանուր բնակչությունը 2000-2023թթ. ընթացքում նվազել է շուրջ 8.8%-ով, սակայն նույն ժամանակահատվածում տարեկան քաղցրահամ ջրերի ջրառն ավելացել է 56%-ով՝ պայմանավորված հիմնականում ոռոգման և ձկնաբուծության զարգացմամբ:

Ջրառի ճնշումը վերականգնվող ջրային ռեսուրսների վրա համեմատաբար ավելի բարձր է մակերևութային ջրերի համար՝ 2023թ. վերջինիս բաժին է ընկել երկրի տարեկան քաղցրահամ ջրերի ջրառի 52.8%-ը: Սակայն ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա ճնշումը 2000թ. -ից աճել է 2.7 անգամ (2000թ. 533 մլն. մ³-ից մինչև 2023թ.՝ 1376.5 մլն. մ³), ինչը պայմանավորված է ձկնաբուծության ծավալների աննախադեպ աճով:



Գծապատկեր 146. C2 ինդիկատոր-ջրի շահագործման ինդեքսը 2000-2023թթ.



Գծապատկեր 147. C2 ինդիկատոր-Ջրառը մակերևութային և ստորերկրյա աղբյուրներից 2000-2023թթ.


C4 (Տնային տնտեսությունների ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով)

C4 ինդիկատորը բնորոշում է ընդհանուր ջրի քանակը, որն օգտագործվում է բնակչության կողմից կենցաղային և հարակից կոմունալ կարիքները հոգալու համար ջրամատակարարման կազմակերպությունների և ինքնամատակարարման միջոցով:

Այս ցուցանիշը թույլ է տալիս որոշել շրջակա միջավայրի վրա գործադրվող ճնշումը՝ կապված կենցաղային օգտագործման նպատակով իրականացված ջրառի հետ: Մարդու կենսագործունեության, առողջության և տնտեսական ապահովման պայմանները կախված են բավականաչափ ջրի քանակության հասանելիությունից: C4 ինդիկատորի միջոցով կարելի է որոշել ջրային տնտեսության զարգացման մակարդակը և բնակչության կենցաղային կարիքների ապահովման համար ջրի հասանելիության աստիճանը:

2023թ. Հայաստանում կենցաղային ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով կազմել է 53.1 մ³ ջուր, իսկ 2000թ.՝ 48.1 մ³:

Կենցաղային ջրօգտագործման նվազագույն արժեքը մեկ շնչի հաշվով դիտվել է 2009թ., առավելագույն արժեքը՝ 2018թ.: 2023թ. դրությամբ Հայաստանի բնակչության 95%-ը միացված է ջրամատակարարման կենտրոնացված համակարգին (Գծապատկեր 148):



Գծապատկեր 148. C4 ինդիկատոր - Ջրօգտագործումը տնային տնտեսություններից մեկ շնչի հաշվով 2000-2023թթ.

Հայաստանը ջրի նկատմամբ պահանջարկի նվազագույն ապահովմամբ սեզոնային սթրեսներ ունեցող երկրի է (2023թ. ջրի սթրեսի ցուցանիշը կազմել է 58.9%): 2023թ. վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսները կազմել են 6244.4 մլն. մ³, իսկ կենցաղային ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով՝ 53.1 մ³/տարի: Ջրի շահագործման ինդեքսը 2023թ. կազմել է 46.7%:

Տնային տնտեսություններին մատակարարվող ջուրը հիմնականում օգտագործվում է խմելու և կենցաղային կարիքների համար:

2023թ. քաղցրահամ ջրերի ընդհանուր օգտագործումն ըստ տնտեսության ճյուղերի կազմել է շուրջ 2 917.6 մլն. մ³, որից օգտագործվել է 157.5 մլն. մ³ խմելու ջուր (մոտ 5.5%):


C4 ինդիկատորը բացահայտում է երկրում խմելու ջրի օգտագործման խնդիրները: Վերջիններիս լուծման համար, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից սահմանված Կայուն զարգացման նպատակները, մշակվել է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, որն ուղղված է բնակչության հիմնական կարիքների բավարարմանը, վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանմանն ու օգտագործմանը և հիվանդությունները նվազեցնելու և կանխարգելելու համար ջրի անհրաժեշտ քանակի ապահովմանը:

C5 (Ջրամատակարարման համակարգը և բնակչության հասանելիությունը)

